

Գ.Գ.ՕՐԴՈՆՅԱՆ

ԹԱՏՐՈՒԾ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XII-XIII դդ.)



ԵՐԵՎԱՆ



АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ИСКУССТВ

Г. В. ОРДОЯН

ТЕАТР В КИЛИЙСКОЙ
АРМЕНИИ
(XII—XIII вв.)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЕНИИ
ЕРЕВАН 1991

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱ

Գ. Վ. ՕՐԴՈՅԱՆ

ԹԱՏՐՈՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XII—XIII դդ.)

A 82299



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1991

Տոյագրվում է Հայաստանի ԳԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատմութեան առաջ խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր
Ն. Ա. Խանմիջյան

Դիրքը հրատարակության և հրաշխավորել դրախոսներ՝
բանափրության գոկտոր Լ. Հ. Հախվեդյանը և արվեստագիտության
գոկտոր Ա. Բ. Հարույնյանը

Օրոյան Գ. Վ.

0—868 Թատրոնը Կիլիլյան Հայաստանում/XII—XIII դդ./
[Պատմ. լումր.՝ Դ. Կ. Բահմիկյան]: Հայաստանի ԳԱ
արվեստի ին-տ.—Երև.՝ Հայաստանի ԳԱ հրատ., 1990.
—164 էջ, 8 լինրի նկ.

Աշխատությունը նվիրված է Կիլիլյան Հայաստանի միջնադար-
յան թատերագիւղարի ստումնաբարությանը Բացահայտվում է աշ-
խարհիկ թատերական հանդիսախոսքերի գեղարվեստական բովան-
դականիւթյունը ու բնույթը, որոշվում էն նրանց անգարանական
շատեանիշներն ու տառենձնաշառեաթյունները: Փաստացի նյութե-
րի հիման վրա ի հայտ էն բնակում նաև պաշտոնական գաղա-
պարախուաթյան ուղղուում թատրոնի գիտակցուան և թատերա-
գրության ձևավորման նախադրյալները: Առումնասիրզուց առարկան
ցիտավում է ընդհանուր միջնորդյան թատրոնի պատմության կոն-
տակառում:

Դիրքը հայատեաված է ինչպես թատերական արվեստի մաս-
նակեաների, աշնորհա էլլ թատրոնի պատմությամբ Հետաքրքրվու-
թի նկատմամբ համարվության մեջ ուղարկան թատրոնի պատմության կոն-

տակառում:

49070:0000
703(02)—90 ԸՆ—Դ
703(02)—90

© Հայաստանի ԳԱ հրատարակություն, 1990

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Կ

Սույն ուսումնասիրության առարկան կիլիկյան Հայաստանի միջնադարյան թատերարվեստն է, որի բուռն ծաղկման ժամանակաշրջանը ընդգրկել է XII—XIII դարերը։ Դպ հննց աքն շրջանն էր, երբ կննարոնական Հայաստանը դարձել էր տնտեսապես զլատված և իր քաղաքական ինքնուրույնությունը զրեթե կորցրած երկիր, իսկ Փոքր Ասիայի հարավ՝ արևելքում՝ կիլիկյան Հոգի վրա բարենպաստ նախադրյանքեր էին ստեղծվում և այս ժողովորդի բեղմնավոր զորքունելության համար։ Սոցիալական կյանքի բարգավաճման պայմաններում թոփչք էր ասլրում զիտական միտքը, զարկ էր արվում քաղաքաշինությանը, ճոխանում էր կերպարվեստն ու հարուանում զրականությունը։ Բնակչությունն ուսումնական հակվել էր դեպի աշխարհիկ կյանքը, որը ողողվել էր լաւագոր զույներով ու կենսախինդ տրամադրությամբ։ Մարդկային երեկակայությունը ձգվում էր դեպի Միջերկրականի լազուր հեռատանիները, որունդից հանուց թարմ ու կենսաշունչ ապահովությունների հոգմն էր հետու էր թողնում ոչ միայն կիլիկյան կենցաղում, այլև այդ միջավայրում ծննվող դեղարվեստական արժեշների վրա։

Մշակովային կյանքի համբնդհունուր բարենրոգման մթնոլորտում անշուշտ չէր կարող չրարդավել նաև թասերական արվեստը։

Կիլիկյան Հայաստանի թատրոնն առ այսօր չեւ դարձել առանձին ուսումնասիրության առարկաւ թեև պետք է ասել, որ հայ միջնադարյան թատրոնի պատմությանը նվիրված

Հետապնառություններում այդ խնդրին քանիցս անդրադարձել են:

Այսպիս, կիրիկյան հայ թատրոնի մասին առաջին անդամ ուստկերացում է առջիս Հարևդին Լեռնյանը Ռիազարունը հին Հայաստանում» (Երևան, 1941) աշխատությունում: Հեղինակն, ինարկե, խորապնին չի ուսումնասիրում տվյալ երեսը՝ և այդպիսի նպատակ էլ շռնի: Աշխատության վերնագրից իսկ երեսում է, որ նրա ուսումնասիրության առարկայի ստարտական և ժամանակադրական եղբերն անհամառ ավելի ընդարձակ են և խնդրին ինքնին շատ ավելի տարրդունակ է. ընդդրկել հայ թատրոնի պատմությունը հնադարից մինչև ուշ միջնադար: Հայրենական թատերագիտության մեջ դա անհայտագետ փորձ էր: Եվ թեպետ այսօր մասամբ թերի, նույնիսկ հնացած են թվում հեղինակի որոշ դրույթներն ու փաստարկումները, այնուամենայնիվ ներկայումս էլ դժվար է թերագնահատել փորբածավալ այս գըրքույկի գիտական նշանակությունը: Լեռնյանի աշխատությամբ փաստորնեն ճանապարհ հարթվեց հայ հին և միջնադարյան թատրոնի պատմության հետագա ուսումնասիրությունների համար:

Հաջորդ քայլն այս ուղղությամբ կատարեց Գեորգ Դոյցանը: «Հայ թատրոնի երկուհազարամյակը» (ռուս., Մոսկվա, 1952) երկհատոր աշխատությունում նա ոչ միայն ընդլայնեց առարկայի հետազոտման տեսագաշտը, այլև զգալի շափով հարստացրեց նրա շուրջն եղած փաստագրական նյութը, առաջարկեց երեսութիւններն առանաբանման նոր եղանակներ: Հայաստանի վաղ միջնադարյան թատերարվեստը Գոյանը դիտում է հունա-հունական և առաջավորասիրական թատրոնների պատմության առնչակցությամբ, անտիկ թատերական ավանդությունների փոխներթափակումն միջավայրում: Հեղինակի ուշադրությունն ուղղված է հատկապն այդ խընդրի վրա, ուստի և հայ միջնադարյան թատրոնի պատմության հասուն ֆեոդալիզմի շրջափուլը մնում է զրեթե շուսումնասիրված, իսկ կիլինից առ թատրոնի մասին խոսվում է միայն թռութիւկ ակնարկի ձևով:

Հենրիկ Հովհաննիսյանի «Թատրոնը միջնադարյան Հայաստանում» (Երևան, 1978) աշխատառթյամբ մի նոր արահետ է բացվում միջնադարապիտության այս ուրույն քնագավառում։ Քննական վերլուծության հն ենթարկվում մինչ այդ կայունացած տեսակենտրոն ու փաստացի վկայությունների մեջնարանությունները։ Պատմաբանասիրական զբնուամներն ընթանում են թատերապիտական որոնումներին համատեղ միևնույն շավիղով և ծառայում մեկ կռնկրետ նպատակի՝ հայ միջնադարյան թատրոնի գեղարվեստական համակարգը բացահայտելուն։ Հեղինակի ուսումնասիրության շրջանակներից զուրս չի մնում նաև կիլիկյան թատերաբվեստը, սակայն երեսութիւն ինքնին ներկայանում է լոկ զծանկարային տեսքով և շարադրանքի ընդհանուր կռնտերստում նրա ծավալային պատկերը մնում է անշոշափելի։

Այսպիսով, նշված մենագրություններում դեռևս բավարար շափով լուսաբանված չէ մեզ հնտաքրքրող առարկան և նրա տեղը միջնադարյան թատրոնի ընդհանուր պատմության մեջ բավարար չի արժեքավորվել։ Իսկ զրա անհրաժեշտությունն այսօր արդեն հասունացել է և օրյեկտիվորեն բխում է հայագիտության արդի խնդիրներից, որոնք նորովի են կարևորում Կիլիկյան հայկական պետության քաղաքական պատմության և տնտեսական ու մշակութային կյանքի ուսումնասիրության հարցերը։ Աստի և ընթերցողի ուշադրությանը ներկայացվող աշխատության նպատակն է ի հայութերել այն բաց թողնված կետերը, որոնք կգան լրացնելու մի կողմից կիլիկյան թատրոնի մասին մինչ այդ մեր ձեռք բերած դիտելիքները, մյուս կողմից՝ կնպաստեն հայ բատերական մշակույթի պատմության հետազոտմանը նոյնիված հետազա գիտական պրատումներին։

Ուսումնասիրության հիմնական աղբյուրը մատենագրական նյութերն են՝ պրավոր և լեզվական այն փաստացի վկայությունները, որոնց վերծանման ու մեկնարանման ճանապարհով տողերիս հեղինակը փորձում է վերականգնել վաղուց անհետացած երեսութիւնությունները։ Այս առումով պակաս շահեկան չեն նաև բանասիրության, ար-

զիստարանության, երաժշտադիտության, ազդագրության և
շնորհառության ընտակվածենքում կատարված հայտպիտա-
կան հետազոտությունների արդյունքները, որոնք համապում
են թե հայ միջնադարյան թատրոնի շուրջը եղած տուարկա-
ցական աշխարհը, և թե էապես օդնում նրա հատկանշական
գծերը բացահայտելուն:

Վերջապես, հարկ է նշել, որ ոչինչուանելի ընթացքում
հեղինակը հրմանվում է միջնադարակառության նվաճումնե-
րի, և հատկապես նրանում կիրառված պատմութափեա-
կան, տիտարանտկան վերլածուաների մեջոցն ու հայ հա-
տերագիտության և ընդհանրապես հայութիւնուն մեջ
կուտակված դրական փորձի վրա, առանց որո՞ւ անհնարին
կլիներ ձեռնամուխ լինել այս պործին:

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱԾԽՈՒԺԱՑՄԱՆ
ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

XII—XIII դարերում, երբ սոցիալական բարենորոգումների շնորհիվ ճոխացան ու փարթամացան կիլիկյան քաղաքները, միաժամանակ նպաստավոր միջավայր ստեղծվեց Հայ միջնադարյան թատերաբնատի ծաղկման համար։ Երկրի բնակչությունը՝ առանձնապես արհեստավորական յուսվի ներկայացուցիչները դարձան տեսլարանային հանդիսանքների թունդ սիրահարներ՝ մի երևույթ, որ ընդհանրապես հատկանշական է զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի քաղաքային կենցաղին։ «Յորժամ զանազան թատերք մոլորութեանցն ի վորոցս քաղաքացն երևութանան յօրինեալը, — զրում է միջնադարյան մի հեղինակ, — յայնժամ է տեսանել զիստութիւն մարդկան կատարեալ ձգել զանձինս առ տեսարանն վնասակար ոգուցն...» Բազումք զվաճառաշահութիւնն արհամարհելով անդ երթալ զեգերին։ Այլք զարուեստս ձեռագործութեանն անփոյթ արարեալ զօրն ամենայն նստին զատարկացեալք՝ լսել վնասակար հնչմանցն ձայն, որք զհոգուցն զորժ են զասականութեանն եսկ յորժում իցէ ժամանակ լոկութեան աստուածային ինչ շահաւոր ոլատմութեանց՝ ապդոկացեալք հրաժարին և տարտամեալք հեղզալով ի բաց դարձուցանին զլսելիս»¹։ Ինչպիս հետազում կտեսններ, այս տողերը հավասարապես կարելի եր վերագրել նաև կիլիկյան իրականությանը։

¹ Եաշտոցի անվան Մատենադարան (այսուհետեւ ՄՄ), ձև. № 1880, էջ 255աւ

Ժամանակակիցների վկայությամբ, երկրում դիտվող սթատիքամոլությանը՝ համընդհանուր տեսնդը չի շրջանցել նույնիսկ Շոգենորբականներին։ Այսպես, պախարակելով կրոնավորների շվայցարարությամբ ու բարքը, Սարգիս Շնորհալին անկեղծորեն խոստովանում է. «Յերգս լկտութեան և ի կատակերգութեան առաւել հեշտանամբ»²: Ընդ որում իշտակերային այս «վարակն» երբեմն այնպիսի խոշոր չափերի է հասել, որ մուտք է գործել անգամ կրոնավորության բուն օջախը։ «Ի ժամ կատարելով զսուրբ պատակս երգը դուսանացն լուսալ դադարեցին, մինչև ելցին յեկեղեցւոյն, զի մի՛ դիւական երգըն խառնեցին ընդ աստուածային երգոցն»,— գրում է Ներսէս Շնորհալին³: Ուշագրավ է նաև այն բառապաշարը, սոռվ նա հանդիմանում է եկեղեցու «տգետ» պաշտոնյաներին. «Մի՛ ոք ի քահանայից վայրապար և առանց մեծի զգուշութեան կատարեցէ զսուրբ մկրտութիւն, իբրև զաշխարհական ինչ գործ համարելով, և մի՛ ընդ աստուածային բանիցն՝ բանս ծիծաղական և կատակերգութիւնս խառնեցէ, որպէս լսիմք զոմանց տգիտաց և աներկեղից...»⁴, ո Գո սանս մըլութեան է և է ուղղել իր Հայնը՝ լիկան մեկ ուրիշ հեղինակ ։ ո զի կնունքն է ի զսակն ոչ է արժան արբենալ կամ էպուան կոչել, կամ բռդ. զի դիւաց կոշաւղը են զուսանք։ Արդ մի՛ զորուն սատանայի լառնեռ ի խորհուրդն Քրիստոսիւն⁵:

Միջնադարյան կյանքի այսօրինակ պատկերն, իհարկե, մարդկային ներքնաշխարհի, նրա զգայական բնության արթիալըման արդյունքն էր, որ նկատելի էր դարձել հատկապես երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի բարգավաճման տարիներին։

² Սարգիս Շնորհալի, Մէկնութիւն հօթանց թզթոց կաթողիկեալց, Պայմա, 1826, էջ 193:

³ Շնորհանի Շնորհարույ Հայոց կոմիտիկասի նամականի, Բուղթ բնուշական, Վէնետիկ, 1838, էջ 167:

⁴ Նույն տեղում, էջ 157 (այս և հետագա ընդգծումները մերն են— Պ. Օ.)։

⁵ ՄՄ, ՀԽ. N 8256, էջ 168ա:

ՀԻ դարսում, երբ վերջնականապես կազմավորվում ու ինքնորոշվում էր Կիլիկյան հայկական պետությունը, ներական Շնորհավիճ սրտացավով արձանագրել է. «...տարադիր դրույվ ի հայրենի ժառանգութեանցն՝ յաշխարհս յայտ փշարեր և անիծիւք գաւառապարտեալ անկաք, նորին աղաքաւ անվաւեր և փոփոխական ամենայն ինչ ենք եթէ աստուածային զործոյն տեսութիւնս, և եթէ նիւթականիս աշխարհի իշխանութիւնը։ Հասկանալի է, որ կիլիկյան իրականությանը բնորոշ այդ երևոյթները, ընալ էլ արաւագաղօթան հետանք չելին, ինչպես ենթագրել է Շնորհալին, այլ առաջացել էին առաջարական ու փողային հարաբերությունների ինտենսիվացման, ինչպես նաև խոշոր բնակավայրերի սոցիալ-քաղաքական դերի ընդլաւնման շնորհիվ։ Եվ հենց դրանից էլ բխում էին այն սոցիալական հակասությունները, որոնք զնաշով աճում էին և առավել սրում կիլիկյան կենցաղավարության երկրենուային նկարագիրը. մի ծայրում՝ ճոխություն ու շքեղություն, պերճաշուք ապարանքներ ու նրբագեղ սիստուկաց, հանդիսանեթների ու զվարճալիքների անվերջանալի շարան, մյուսում՝ սով ու տառապանքներ, դժվարին ու ստորաբարշ աշխատանք, եթերային հուլսեր ու խարված Երազանքներ ԱՀա թե ինչ է ասված աշխատավոր ժողովրդի ծանր վիճակի և հարստահարիչների դաժան ու անմարդկային կեղեցումների վերաբերյալ Ներսես Լամբրունացու ճառաերից մեկում. «Մեծատոնք կլանեն զարդարտն... այլք յարէն առն առ առն և անդաստան առ անդաստան և զրնելերին հանեն... և որ երեկ ընչից տէր, այսօր կողոպտեալ և հացի քաղցեալ, որ երեկ կենդանի, այսօր խոցուեալ յաւագակաց, կիսամենու...»⁶:

⁶ Ներսես Շնորհալի, Եզգ. Հրատ., էջ 7:

⁷ Ա. Վ. Թօնեազան. Սոցիալ-անտառական հարաբերությունները Կիլիկյան հայրենիքում: Տպագրություն, Երև., 1973, էջ 250—300:

⁸ ՄՄ, ձեռ. ԱՌ 1142, էջ 224թ. Այս փասորը բերվում է Գ. Հ. Դրիգորյանի «Հասարակական-փիլիսոփայական միտքը Հայկական Կիլիկյան աշխատությունում». Եր., 1979, էջ 13:

Հիրավի, շափաղանց հակասական ու շեշտակինքն ներ-
հակ է կիլիկյան իրականության պատկերը թի՛ հայկական
պետականության հիմնադրման շրջանում, թի՛ երկրի հետա-
գա բարգավաճման ասարիներին, և թի՛ ներքին ու արտաքին
քաղաքականության մեջ բազմիցս հաղթանակած և փառքի
արժանացած հայկական թագավորության մայրամուտին Միջին դարներում համաշխարհային նշանակություն ունեցող՝
Արևելքն ու Արևմուտքը կապող առնտրական ճանապարհ-
ների սահմանագծում կազմավորված հայկական այս ինք-
նուրույն պետությունը ծալրահեղ կարճ ժամանակամիջոցում
կարողացավ ոչ միայն ամրապնդել իր դիրքերը առաջավ-
րասիական միջավայրում, այլև շահնեկանորեն հազորգակց-
վել է նույնիսկ բարեկամական կապեր հաստատել արե-
մտաելուպական աշխարհի հետ Զարգացած ավատականու-
թյան գարագլխին կյանքն այստեղ սկսել էր ընթանալ նոր
սիթմով և նոր ուղեգծով։ Կիլիկիայի բազմազգ բնակչության
առջև բացի հայերից, երկրում ապրում էին հույներ, ասո-
րիներ, հրեաներ, իսկ խաչակրաց արշավանքների շրջանում
բնակվեցին նաև ֆրանսիացիներ, իտալացիներ, դերմանա-
ցիննուն բացի էին նոր հորիզոններ, մարդ-անհատի գոր-
ծունեության նոր ասպարեզներու նվազեցների հիմունքի-
ներն սկսել էին ստեղծագործել նոր ուժով ու հուանդով, աշ-
խառում էին էլ ավելի շենացնել ու ճոխացնել իրենց անե-
րը, նոր դույներով ու զարգանեաբներով էին ծաղկեցնում
մատյանները, երդեր էին հորինում բանաստեղծական նոր
ոգեշնչումով, ապա նրանց մեջ սակավաթիվ շեն նաև այն-
պիսինները. որ սկսեցին էլ ավելի ճնշել ու կողոպտել ըսույ-
լերին, սանաւարել սրբազնա պատվիրաններն ու սահման-
ված որներները, գործել մարդկային խղճին ու արժանա-
պատվությանը հակառակ, սանձարձակելով իրենց կրթերի ու
անձնաւուր լինելով զվայտաբարու կյանքի հորձանուտին։
ոնչիստեք զազակից լինին դոզոց, — կարդում հնք XIII դարա-
սկով իլիկիան ձեռապրերից մեկում, — ...դատաւորք կա-
շառաւոր թիւրեն զղատաստան արդար և ժողովուրդը ծուլա-
նուն ի բարի գործոց։ Առաջնորդը և քաջանայք արծաթա-

աէրք, և ծոլքը, արագամիտ և փոյթք առ ի պահանջումն ։ արկաց՝ և կաշառաց և հեղզք առ ի խրատել՝ և յուսուցանել. վարդապէնքը անձնասէրք. և միանձունք ձեմնան առաջը մարդկան. և ամենայն ոք ըստ իւր մտացն ձեացուցանէ ևսը վարդասէնութիւնն ըազմանա և սէրն ցամաքի. և բարի գործք անհնատ լինի. Եւ այլ բանս... գործի այսակը ի մէջ մարդկան. զոր անպատշաճ համարեցաք զրել առա ի գիրս լայս զոր զրեմք ի թուականիս Հայոց, ՈՀԶ (=1227 թ.—Գ. Օ.), զի այն բաւական է զոր տեսանէք աշակը ձերովք...³

Կարելի է ասել, որ կիլիկյան իրականությունն իր ընդզօված կենցաղային թատերայնությամբ արդեն իսկ յուրույնակ մի «թատրոն» էր, մարդաշատ տեսարաններով ու դղամատիկական դրվագներով հարուստ մի «հանդիսանք»։ Ընդ որում ուշագրավն այն է, որ այս մետաֆորիկ համատությանն է դիմել նախ և առաջ հենց ինքը՝ կիլիկիացին հանձին Գրիգոր Մարտացնու, որի «Վայք ողբոց» խորագիրը կրող աղոթագրքեռում էլ հանդիպում ենք միջնադարութիւն աշխարհնեկալումը թատերային պայմանականությանը զուգադրելու փառլուն ո՞ի օրինակ։

Սակայն նախքան այն ընթերցելը ծանոթանանք Մարաշեցու շարադրանքի առանձնահատկությանը։ Խոսքը վերաբերում է հեղինակի ինքնարտահայտման կերպին, նրա խոսելու եղանակին։ Վայք ձեզ լսելիք իմ զի լուայք զձայն լկտի երգոց դիւական։ և ընդունեցայք զբանս խարեւթեան և ստութեան, — կարդում ենք ձեռագրերից մեկում, — ...Վայք թեզ անձ իմ զի ամենայն թշնամիք քո գունդք դիւացն տեսուին զշարիսն քո և ոտես հարին ձաղանաւք ի վերայ կորըստեան քո... Վայք քեզ միտք իմ զատավոր անիրաւութեան. զի ոչ յաստուծոյ երկնար և ոչ ի մարդկանէ ամաշեցեր՝ այլ զնացէր ի խորհուրդս ամբարշտաց և կացէր ի ճանապարհս մեղաւորաց որ ոչ է բարի. և նստար յաթոռս ժանդից և ի

³ ԱՅՆ, ձեռ. № 8356, էլ 2ա—2բ։

շարք՝ ոչ առնձրացար...¹⁰ Այս ոճով են զրված տասնյակ
- իւ ՀՀՀ, ոլոնցում Մարաշեցիւ օհուապարա կրոնագորի
Երբառաւթիւնը դիմակաղերծում և մէրկացնում է ինքն իրեն
իցուց աշխարհի:

Սա ոչ միայն խոռոչովանք է, որին միջնադարյան
հավատացյալը դիմել է բատ բնդունված կարգի՝ հանուն իր
հոգու փրկության, ոյլին՝ Հրապարակային ինքնախարապան-
ման ակա, բնության հանդեպ բմբուտացած մարդու մի ող-
բերդություն: Եվ սատանձնելով ևղերերգու հերոսի այդ դե-
րը, Մարաշեցին բնականարար խոռում է ոչ միայն իր ա-
նունից, այլև նման նորկատաղի արծանացած լուր աշ-
ւերի: «Լատարեցաւ մէր կենցաղս ի սորա յանցանացն
վայր ախտութեան» լրանաց, խեղկատակութեան...¹¹ Հենց
այդ «խեղկատակութեան» բացահայտումն էլ դառնում է նրա
«Վայր ողբացաների լեյտմոտիվը, կրոնա-փիլիսոփայական
հավատամքի արտահայտության հիմնագիծը: Դրանով է
ովայմանավորված նրա վերաբերմունքն իր և իր միջավայրի
հանդեպ, դրանում է նաև տեսնում իր հոգու փրկության միակ
ապագլուքը: Եվ այսոնդ է, որ Մարաշեցին դիմում է թատե-
րուկան պայմանականությանը, որպես իր վարքագիծն ու
իրն շրջապատող իրական աշխարհը ընութաղբեկու ամենա-
հարմար ձևի: «Յետ զիշերոյն յետ խաղուց անցանելոյ, —
զրում է նա, — յետ կերպարանելոյն յաշս տեսողացն՝ յետ
տաղաւարիս ապա քակտին դիմակքն և երի ճշմարտութիւն,
ապա իւրաքանչիւր մեղքն ցուցանին»¹²: Բերելով այս տո-
ղերը, Հենրիկ Հովհաննիսյանը զրում է: «Տաղավարը, ըստ
Մարաշեցու, թաքցնում է իրենում կեղծավորության ցաղու-
նիքը: Կեղծավոր մարդկությանը նա մի պահ պատկերաց-
նում է «աճեղ զատաստանի» առջն, ար ոոչ այլ որ քեզ դառնա-
խաղ է ի դատաստանին, բայց միայն զործքն քո իւրով
կերպարանեալը որպէս և իցէ»: Եվ մարդիկ աճեղ դատա-

10 ՄՄ, ձեռ. № 108, էջ 46ր—52ր:

11 Նույն տեղում, էջ 64ա:

12 Նույն տեղում, էջ 99ր:

վլորի առջև հանելու են իրենց դիմակները, ինչպիս գերաս-
սանները ներկայացումից հետո հանում են դիմակները տա-
ղավարում»¹³:

Չմռռանանք, որ աշխարհը թատերաբեմի է նմանեցրել
դեռևս Գրիգոր Նազիանզացին, որի ճառարից մելում
կարդում ենք. «Փոքր մի ևս ինչ՝ ժամանակին (յ. աշխարհ)»
անցանէ, և խաղն լուծանիւ¹⁴: Ինչպիս ահանում ենք, մեջ-
քերկած տողերի հեղինակը նույնպես իրականությունը դի-
տել է իրեն վաղանցիկ պատրանք, «խաղ», որի ավարտն
այդ իսկ պատրանքի բացահայտումն է, լուծումը: Եվ միան-
գամայն հնարավոր է, որ Մարաշեցու դիտողություններն ըստ
էության փոխառնված են այստեղից: Միշնադարյան կրո-
նավորի համար հեղինակավոր խոսքը միշտ էլ ուսանելի է
եղել: Սակայն գժվար է նաև անտեսել, որ XII դարի կի-
լիկյան հեղինակը ու թե կուրորեն պատճենահանել է ուժիշխ
միտքը, այլ յուրացնելով այն՝ արտահայտել է ավելի պատ-
կերավոր ու հանգամանալից: Թեև Նազիանզացու մոտ
«խաղ» բառն, ըստ Նոր Հայկազյան բառարանի, նշանակում
է «տեսարանն կամ տաղաւարն խաղացողաց»¹⁵, սակայն
երեսութիւն իր առարկայական նկարագրով մեզ համար դեռևս
անորոշ է: Կարելի է միայն եռահել, որ խոսքը թատերաբե-
մում ներկայացող խաղի մասին է: Մինչդեռ Մարաշեցին
ամենայն մանրամասնությամբ է նկարագրում կեղծ կեր-
պարանք առած խաղացողների դիմակազերծման հանգա-
մանքը, որ տեղի է ունենում գիշերային ներկայացումից հե-
տո («յետ գիշերոյն յետ խաղուց անցանելոյ, յետ կերպա-
րաններոյն յաշու տեսողացն...»), երբ դերասանները թողնում
են բնմանարդակը: Ահա թե ինչու, մենք հակված ենք են-
թաղրէ: որ զբեկով «յետ տաղաւարիս»՝ Մարաշեցին ցան-

¹³ Հ. Վ. Հովհաննեսյան, Թատրոնը միշնադարյան Հայութանում, Եր., 1978, էջ 228:

¹⁴ ևսոր բառզիրը Հայկազյան լեզուից, Հայութ, 1, վեհետիկ, 1836,
էջ 213:

¹⁵ Նույն տեղում:

կացել է ասել քեմից՝ այսինքն խաղանցապարակից դուքս, այլ ոչ թե՝ կուլիսներում, ինչպես բացատրում է Հենրիկ Հովհաննիսյանը¹⁶:

Սյուսպիսով, իր խոստովանություն-մենախոսության մեջ Մարտաշեցին փորձում է բացահայտել մարդկային բնության իսկությունը, լուսավորել նրա հոգու ամենաստվերուտ անկյունները, լինել բացարձակ անկեղծ: Բնդ որում դա միաժամանակ ինքնամերկացում է, որը ցուցագրական բնույթ է կրում, ասել է թե՝ «եղինակի միտումն է իր այդ «վարքագծով» օրինակ ծառայել համայն մարդկությանը: Ուստի և հրապարակորեն նետելով իր երեսից կեղծավորության քողը, նա Ներկայանում է ապաշխարող մեղապարուի կեցվածքով, ինչպես և միջնադարյան բազմաթիվ հրաշապատումների այն հերոսները, որոնք, նախկինում իրենց զործած մեղքերը բավելով, կարգվում էին սրբին դասը:

Պատահական չէ, որ այս բնույթի սյուժեներն ել առաջինը տեղ դաւան եկեղեցական թատրոնում: Դրա վառ ապացույցն է «Թեոփիլի միրակլը» («Miracle de Théophile») որ հայտնի է XIII դարի ֆրանսիացի արքուվեր Ռյուտրոֆի անունով: Դրամատիկական այս երկի հիմքում ընկած է կիլիկյան միջավայրում հորինված և միջնադարում լայն ճանաչում գտած հնագույն մի լեզվուութ, որը պատմում է, թե ինչպես VI դարի կեսերին Կիլիկիայում առկրող ունի թեոփիլ անունով վանական իր շահախնդրական նպատակներն իրա-


16 Հ. Վ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 276—277: Տաղաւար բառն այսուհետ մենադարսում է, որպես խորանին և հին հունական ռուսական (սկզբան) համարժեք տերմին, որ ձևթագրում է ոչ թե թեմ, այլ շրջանաձև թարահապարակին՝ ուղևառաւույին էլլց կուրիսերի դեր կատարող չինություններ: Առկայն, ձթն հաշվի առնենք, որ տաղաւարը զործածվում է իրքն համարժեք նաև տեսարան բառին (տասի և տեսարաններ կամ տաղաւարն իւապուցա): և որ նոր հույկովան բառարանը հային է որ տաղաւարը խաղալով, ոի տաղաւարը խաղանք ձերը ևս (Հատ. Է, էջ 913, Հատ. 2, էջ 840), առա մեղ շետարքը ունեմին ակներերին կրում է արդեն թեմ բառի իմաստը:

գործելու համար հոգին վաճառում է սատանային¹⁷: Այս
ողասունն առաջին անգամ վարչության նզանակով շա-
բադին է հոյն հեղինակ Եվտիխիանոսը VII դարում: Առա-
մուտավորապես մեկ հարյուրամյակ անց Թեոֆիլի պատմու-
թյունը թարգմանվել է լատիներեն Պողոս Գալրի կողմից:
Հետապայում՝ մինչև հրաշապատում գրամայի հրապարակ
դալը, կիլիկյան լեզնդով հետաքրքրվել են ևս երկու հե-
ղինակ՝ ձ գարում միանձնունի Ռոսվիդա Գանդիրսայմա-
ցին և XIII գարում Գոթիկ զը Թուենսին: Սակայն թե մեկը,
թե մյուսը լեզնդն այս մշակել են բանաստեղծորեն և նը-
րանց համատեսք ամփոփ բնութագծները մեղ համար թատի-
րապետական հետաքրքրություն շնուր ներկայացնում:

Այլ կարգի հարց է՝ արգություն իր գրամայի
սլուժեն քաղել է լատինապիր աղբյուրներից: Ծշգրիտ պա-
տասխան տալ այս հարցին ներկայումս գրեթե անհնարին
է, թեև պիտք է ասել՝ միանգամայն տրամարանական է
երեսում, որ նա կարող էր ծանոթ լինել նշված հեղինակնե-
րի երկերին:

Բայց և այնպիս ուշադրավ է նաև հետեւալ հանգաման-
քը: Կիլիկյան լեզնդի հիման վրա հորինված առակատիպ
զրոյցներ հայտնի են ևս միշնարյան հայ իրականու-
թյան մեջ ևս: Դրանցից են. «Այր հոգեվաճառ», «Բանսար-
կու արեղայ որ կանձն մատնեաց սատանայի», «Ուկտ

¹⁷ K. Lenzar, Das Theophrastuslegende in den Dichtungen des Mittelalters Berlin, 1926 Ernest Rehn, Histoire de la légende de Faust, Paris, 1884, p. VI-XIII; А. И. Болевский, Следы о Фаусе в записках офтальмологического общества при С.-Петербургском университете, ТМВ, V, 1911, стр. 63—65; В Жирмунский. Статьи по истории фалсификской и ее церкви литературы. Л., 1972, стр. 51.



ընդ սատանային առակը, որը հայտնի էր դեռևս Նիկողայոս Մատի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» աշխատությունից¹³:

Ինչպես է Հոգեվաճառության թեման մուտք գործել այդ միջնադարյան մանրապատում երկերի այդ շաբթը: «Այդ հոգեվաճառ» զրուցն անտարակույս դալիս է «Հայելի վարուց» խորապրով հայտնի լեհերեն ժողովածուից («Ա. Շ. և Zwiersiadlo»), որը հայերեն է թարգմանել Ստեփանոս Լեհացին 1660 թվականին¹⁴: Ընդ որում նմանատիպ կարճամիտով պատմվածքների մի զգալի մասը հայ միջնադարյան զրականություն է թափանցել նույնպես թարգմանական հանապարհով: Ամենայն հավանականությամբ, բացառություն չի կազմում նաև «Բանսարդու արեհոյց որ դանձն մւանձն մւանձն սատանային զրուցը», որի ձեռադիր պղբյուրները համեմատաբար ավելի ուշ շրջանի են (ժԷ—ժԹ դդ.):¹⁵ Բայց առաջինից միայնակեցի ընդ սատանային առակն առանձնանում է նշված զրուցապատումներից: Նիկողայոս Մատի աշխատությունում ընդգրկված տարբերակները քաղված են «Աղվեսազիրաներց» որուց ՀՀ զետեղուածուու ու ամենիցը, ինչպես գիտենք, ուղղակի առնշնում են Վարդանի հնարդույն ժողովածուների հետո: Վերջիններս էլ, ինչպես հայտնի է, մեծ ժողովրդականություն են վայելի հատկապես կիլիկյան շըրքանում, ուստի և հիշյալ առակն առանձնակի արժեք է ներ-

13 Ա. Մրավյան, Հայ միջնադարյան զրուցներ, Եր., 1969, էջ 217—219:

14 Հեղեր հայ միջնադարյան զեղարքեստական արձակից, խմբ. և առաջարկն Կ. Մելիք-Շահնշանյանի, Եր., 1957, էջ 251, XIII:

15 Նույն տեղում, էջ 251:

16 Հ. Մարգ. Ծերոնիկի ուսուցիչ Պարտիա, վ. I, СПб., 1899, стр. 102—103, 132—133; 1. Օ. Վարդանին վերաբրդուց հնագույքի ժողովածուներից, որոնք բովանդակում են նշված առակը, մեզ հայտնի են վեհատիկին Միկրօպարյան միարանության մատենացարանի և Հ. Հեռոցի ըլք (1473 թ.), և Երևանի Մաշտոցի անվան Մատենացարանի և ՅՈՒԹ հետազիրը (XV դ.): Առաջինը բնիքում է Ն. Մատի նշված ուշխատությունում (ժամ I, էջ 132—133), երկրորդը՝ Ա. Մրավյանի (էջ 373, հ. 2):

կայացնում մեզ համար: Հնարավոր է նույնիսկ, որ թվարկած զրուցներից այն առնենանինը եղած լինի:

«Ասի յառակաց, թէ միակց մի սատանայի ուխտ եղ. որ տարի մի ի պահ կենաց, թէ զնու ի մեծութիւն հասացանէ, սատանայ յանձն էառ կատարել զինորածս նորա. յորժամ վճարեաց զպահս, շարժեաց զեպիսկոպոս քաղաքին, որ եղ զնա եկեղեցապան. և ի միւս տարւոջն շարժեաց, որ օրհնայ զնա արեղայ. և ի միւս տարւոջն եղև մեռանիլ եպիսկոպոսին. շարժեաց զթագաւորն և զքաղաքացիսն առնել իրենանց եպիսկոպոս: Եւ յորժամ կամէր զգեստաւորիլ. զի ժամ արասցէ, եկի սատանայ ետ ի նա փոքրիկ շորեժառի մի և ասէ. իմ ամէն լաւին փոխարէն, որ զքեզ յայդ մեծաղոյն աստիւանդ հասուցի, զայս արա. առ զայդ փոքրիկ շորեթաղիդ ի ծոցդ զիր. և զգեստով ի չերա հազիր և յորժամ ի բեմն ելանես, նա մէկ մատամբդ ի վերայ մէկ լարին զարկ. և այնպէս արարեալ պատրեալ եպիսկոպոսին՝ յանկարծակի, հազարք հազարաց և բիւրք բիւրոց տանազի և թմրէի և սուսնայի և շանկի և շորեթաղոյ ձայն հնչեաց՝ ի մէջ եկեղեցոյն: Զարհուրեցան թագաւորն և ժողովուրդն և ոչ զոք տեսանեին հարկանօք նուազարանացն: Հրամայեաց թագաւորն ընկել զգուռն եկեղեցոյն՝ և զիւրաքանչիւր որ մերկացուցանել և փնդռել. և այնպէս արարեալ ոչ զոք զաին պատմառ, և մենաց թագաւորն և եպիսկոպոսն միւայն թագաւորն ևս մերկացաւ. և ոչ գոտաւ առ նա ինչ. և յորժամ շերկացուցին զեպիսկոպոսն, դարին ի ծոցն զշորեթաղին այն. և ի շարշարանս արկենալ խոստովան եղև զուրացութիւնն և զգացինս, զոր եղեալ էր ընդ սատանայի: Յայնժամ կապեցին զնա ի յազի ամենի ձիոյ և թողին ի յաշտի. մանրամասնարա կոստորեալ եղև մարմին նորա. և այնպէս աւանդեաց զդառնացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Յուցունէ առակս, թէ ով որ սուսանայի բարոյն և ուխտին հաւառաւայ, բաժին նորա վերցն այնպէս լինելոց է»²²:

22 Ն. Մատ. Ժողովածոյք առակաց վարդանայ, մասն Բ, Պէտերբուրգ, 1894. էջ 252—253:

Միանգամայն պարզ է, որ թե այս առակում, և թե ֆրանսիական հրաշալատում դրամայում գեղքերի ընթացքը կանխորոշող պարագան էրուսի (վանականի) գաշկադրությունն է սահանացի հետ, իսկ շարժառիթը նրա շահնդրական միտումներն են: Այսինքն հանգուցման թեր երկուում էլ սկիզբ է առնում միևնույն հնարից և կատարում է միենույն կորադիմք: Սակայն հանգուցալուծման կետում կիլիկյան առաստելապատումի մշակման այս երկու՝ հայկական և ֆրանսիական տարրերակները հեռանում են միմյանցից, հանգելով էապես տարրեր հետեւթյունների, միրակլում՝ խոստովանող և ապաշխարող կրոնավորի արդարացման խորհուրդն է, առակում՝ նրա արդարացի պատրժման: Բայց միայն այդ չէ նրանց տարրերուն ու Ֆրանսիական միջավայրում ֆառուսյան ովքերության այս նախատիպ սյուժեն վերածվել է դրամատիկական երկի, մինչդեռ հայ իրականության մեջ ավանդվել է խրատական զրուցի՝ առակարանության եղանակով, կրելով բնականարար այդ ժամանի ստեղծագործության բոլոր առանձնահատկությունները: Այս կերպ ասած, նրանք սկզբունքորեն տարրեր են բայց զեղարգիսատական երկասիրության սեռային աւանդանումների: Եվ ոյնուամենայնիվ երկուուն էլ հավասարապես ուշագրավ նն մեզ համար հնաց թատերազիտական առումով:

Եվ ահա թե ինչու Վարդանին վերագրվող միջնադարյան առակների հանրահայտ ժողովածուները («Ժողովածոյք առակաց Վարդանայ»), որոնցում դտնում ենք «Ուխտ միայնակեցի ընդ սահանացի» պատումը, հրապարակ են եկել և անմիջապես ժողովրդի մեջ լայն տարածում դտել XII—XIII դարերում: Դրանք հորինվել են Վարդան Այգեկցու նշանավոր բարոյախոսական զրուցապատումների («Առակը Վարդանայ վարդապետին») նմանողությամբ, ուստի և ավանդարար կրել նն մեծ առակադրի անունը: Այս ժողովածուների մեծ ժողովականությունը վայելելու հանդամանքն անշուշտ ամենից առաջ պետք է բացատրել նրանցում ընդդրկված

նյառիլերի հանրամատչելիությամբ։ Խոսքն այն մասին է, որ
նաև լիդվի ու շարադրման նղանակի պարզության, նաև
ժաղացրագական մոտիվներով հաղեցված լինելու շնորհիվ
վարդանի առաջիներն ու վրայցները շատ պատրին էին յն-
թերցանության համար և շատ արագ էի յուրացվում էին,
մանավանդ որ նրանց շոշափուծ թեմաներն ու հարցադրում-
ներն արդիական էին, համահռուշ ժողովրդին հուզող մտո-
րումներին կամ ավելի ճիշտ է ասել՝ ուղղակի արձագան-
քում էին իրական կյանքին։

Հայտնի է, որ «առակատոր» ճառելու անհրաժեշտության
պիտակցումն է թելագրել Ալգեկցուն քարոզչական գործու-
նեության ժամանակ դիմել տուակների օգնությանը, այսինքն
գրական այն ժանրի երկերին, «ուր կայցէ օրինակ ինչ՝ խորհըր-
զաւոր, նմանաբանական, այլաբանական»։ Այսպիսով, նա
հետեւ է միջնադարում ընդունված այն զրույթին, որի հա-
յաձայն, տեսքն օրինակով (առակով) է խոսում, որովհետեւ
առանց մարմնավոր օրինակի անհնար է հոգնոր բանն հաս-
կանալ, քանի որ «մարմնաւոր բանն ճարտար գիտեմք»²³։
Հայտնի է նաև, որ «XII—XIII դարերում ամեն տեղ առ-
հասարակ, այնպիս էլ մեղնում, քաղաքացիները սիրում էին
պատմվածքներ, առակներ ու զրույցներ և առասպելներ»²⁴։
Ուստի և Ալգեկցու կիրառած ճառասացության այս եղանա-
կի շնորհիվ առակախոսության ժանրի երկերը ոչ միայն
գրքային, այլև բանավոր, և թերևս շեշտենք, որ հատկա-
պես բանավոր ճանապարհով են մուտք գործել միջնադար-
յան հասարակության ամենալայն շրջանները։ Ընդ որում,
եթե նախադես այդ ժողովածուներում գերակշռել են բա-
րոյակրոնական թեմաներով զրված զրուցապատռմները,
ապա հետագայում, շրջանառելով ժողովրդի մեջ, դրանք ներ-
առել են նաև աշխարհիկ տարրեր, որոնք աստիճանաբար

23 Ա. Մրավյան, Առակի ժանրային բմբանումը միջնադարում, — Շրա-
բից Հասարակական զիտություններին, 1981, Ա 9, էջ 66։

24 Մ. Սղնակ, Հայոց միջնադարյան առակները և ոռշիակական
հարությունները կրտսեց մեջ, Եր., 1935, էջ 161։

վերանել են նույնիսկ հակակղերական մոտիվների: Այս առավով շափազանց ուշագրավ է «Աղքատ և երց և Անտարան» սպակը, որտեղ թնդադատվում են և միաժամանակ անողոք ժաղըի և նմանակը կրոնավորների: Կենդամուշտ քարոզներն ու երկդիմի վարքադիմքը: Հասկանալի է նմանակների հարցագրումները: Պատճենագույն պատճենները ոչ թե եկեղեցուց, այլ նյանըից: Ժողովածուներում զետեղված բազմարնույթ այդ զույցների հեղինակները եթե նույնիսկ կրոնավորներ են նդել (ինչպես, առնեք, մի շարք եվրոպական շվանեների ու ֆարլիխոների հեղինակները), ապա ստեղծագործելիս նրանք ներշնչվել են ավելի շատ կենդանի, քան գրքային տպավորություններից: Այստեղից էլ դժվար չէ հանգել մի հետևողյան ևս, առակի ժանրում հորինված երկասիրության այս նմուշները հասցեազգին են հատկապես դեմոկրատական դանդաղաձներին, ավատատիրական հասարակության ստորին խավի ներկայացուցիչներին, բնակչության այն մեծամասնությանը, որն էլ հենց զուրկ է եղել զրագիտությունից: Եվ առաջ, այդ զանգվածներին լսելի դառնարու համար էլ անհրաժեշտ էր դրական երկը բանավոր հնչեցնել: Խոկ այդ անհրաժեշտությունն իր հերթին պահանջում էր առակախոսից ճարտասանական արվեստի հմտություն: Վերջապես, հյութեղ ու պատկերագոր մատուցելու համար կարճամփոփ այդ զրուցապատումները, նու պետք է օժտված լիներ նաև դերասանական որոշ ավանդներով: Ուստի, եթե սկզբում, ամենայն հավանականությամբ, առակասացի դերում հանդիս է եկել ինը՝ հեղինակը, ապա հետագայում նրա ընթերցած առակներն ու զրուցները, տարածվելով ժողովրդի մեջ, ըստ երեսներին, տեղ են գտել նաև թափառաշրջիկ միմուների ու կոմեդիանաների խաղացանկում²⁵, որոնք էլ, հավանաբար,

25 Նկատի առնենք նմանութիւնակ առասպելապատում զրուցների առանձման միշնադարյան ձևերը, որոնք միննույն նկարագիրն են ունեցել Շ. Ֆերազյանը, և թէ ասիական միշավայրում (անշահ. Ա. Ղազ. Ռուսական և սկոմորօն առաջնահանությամբ, առակասացի դերում հանդիս է եկել ինը՝ հեղինակը, ապա հետագայում նրա ընթերցած առակներն ու զրուցները, տարածվելով ժողովրդի մեջ, ըստ երեսներին, տեղ են գտել նաև թափառաշրջիկ միմուների ու կոմեդիանաների խաղացանկում²⁵, որոնք էլ, հավանաբար,

իրենց հերթին ավելի են ընդգծել գրանցում արտահայտված աշխարհիկ տրամադրություններն ու երդիծական մոռիվները: Այնպէս որ «Ուստ միայնակեցի ընդ սատանալի» առակը ևս թվում է անտք է վերագրել այս ճանապարհով վերամշակման ուղի անցած առասպելապատում երկնրի թվին, որոնք թեև գրամատիկական չեն իրենց կառուցվածքով, սակայն միջնադարյան բացօթյա բնմահարթակների վրա խաղարկված բազմաթիվ այլ սյուժեների նմանողությամբ անցել են իրենց ժամանակաշրջանի թատրոնական կյանքի բոլոր:

Հիմա տեսնենք, կարո՞ղ էր արգլոր ֆրանսիացի հեղինակը լսած լինել վերոհիշյալ լեզենդի մասին կիլիկյան հողի վրա:

Դրա համար նախ վերհիշենք Կիլիկյան Հայաստանի պատմության այն ժամանակահատվածը, երբ եղիպտական մամելլուկների և փոքրասիհական թուրք-սելջուկյան զորքերի ասպատակիչ Հարձակումների ժանր բեռան տակ Հայերն իրենց պիտականությունը փրկելու համար հուսալի հենարան էին փնտրում Եվրոպայում: Երբ հայ թագավորության լինել-

Տաշու և օգոստոս 1977 թ. 19 Մայիսա- զբան ազգային օր՝ առաջիկանությունը, որ հայ իրականացնելուն մեջ այս տիպի գրույցներ վարդապետին անվանել են զրայակար, զրայարք, առասպելախառնը (տե՛ս Ա. Աբովյան, Հայոց միջադարյան առաքնները և սոցիալական հարաբերությունները Իրանց մեջ, էջ 2):

Միշեագործան որոշ առակների ու զրույցների հիման վրա Գ. Դաշնոց փորձել է մտածի վերտիկանիզմի դրանց խաղարկման նկարագրը (ՏԼ Գ. Գոյան, նշն. աշխ., Հատ. 2, էջ 229—233): Որ «առասպելախոսների» կատարողական արժենութը, բացի պատմելու հմտությունից, ենթադրել է նաև դիմառնության վարպետություն, կասկած չի կարող հասուցել: Սակայն ճշգրիտ է Հ. Հովհաննիսյանը, երբ նկատում է, որ «Գ. Դաշնոց փորձը դժվար է անվճարապահորեն ընդունել... Գրական այն տեսակները, որոնք ավանդվել են առակ և առասպել անուններով», միաւսակ ու միաբնույթ չեն: Բայց երանց մեծության մասը խազի ու զործողության տարրեր չեն բովանդակում: Իրենց հորինվածքային տևարագ ու ափազ նրանք ամսութիւն են, որ դրա լիքունները ունեալի համեմետը չեն չեւրածվում» (Հ. Գ. Հովհաննիսյան, նշն. աշխ., էջ 262):

Արքայի մեկ ուժգնանում էր, մեկ էլ խլանում դա-
վանաբանական վեճերի և բորբոքված կրոնական կրթերի
բախսան աղջուկի տակ: Հունի: Կայունապետական: բարու-
բականության միաւուն այս էր. բարինագավան դարձել
հայերին և ի դեմք նրանց համատարիմ ու հնագանգ դաշնա-
կան անունը անոց բերել Արքայի անունը: Եթե այսում էլ չու այնպէս,
ինչպիս ժամանակին կրո Մանզիլ կայուրը հետամուստ էր
հայկական և բյուզանդական եկեղեցիների միավորմանը:
Սակայն, եթե այն ժամանակ ներսես Շնորհալուն, Գրիգոր
Տղամբին և ներսես Լամբրոնացուն, որոնք կողմնակից էին
այդ միավորմանը, տեսնելով դրանում երկու հարևան պե-
տությունների խաղաղ համագոյակցության կարեռագույն
նախապայմանը, այնուամենաւ այնիվ Հայողվեց հասնել վերչ-
նական արդյունքի, ապա հիմա թվում էր, թե համեմատա-
բար ավելի գյուրին կլինի գտնել խնդրի լուծման բանալին:

Կիլիկյան հայկական պետության առետրական ու քա-
ղաքական կապերի առավել ընդլայնման այդ ժամանակա-
շրջանում (XII—XIII դդ.) հայ աղնվականության կենցաղա-
վարությունն սկսել էր շեշտակի որին նմանվել եվրոպական-
նին, մասնավորապես ֆրանսիականին: Հայ իշխանավոր-
ներից շատերը վարժ տիրապետում էին թե լատիներենին,
և թե ֆրանսերենին: Բարձր աղնվականության ներկայա-
ցուցիչներից շատերը նույնիսկ աղղակցական կապերով էին
առնչվում Եվրոպայի: արիստոկրատական ընտանիքների
հետ: Այնունա որ հասարակության վեհին խավերում հայ և
լատին եկեղեցիների միության զաղափարը նկատելի դժու-
հություն շառաչացրեց: 1307 թվականին Սիսում կայացած
եկեղեցական ժողովը բորշումներ ընդունեց լուսությունն
և կաթոլիկ եկեղեցիների միավորման մասին: Սակայն այդ
որոշումները թշնամարար ընդունվեցին թե կենտրոնական
Հայաստանի, և թե Կիլիկիայի հայ բնակչության լայն շրր-
շաններում: Երկրում բուռն պայքար ծավալվեց լատինասեր
հոսանքի գեմ, սաստկացան ներքին խռովությունների ու
պառակտումները: 1316 թվականին Աղանայում հրավիրված
հաջորդ եկեղեցական ժողովը վերահաստատեց նախկինում

արդեն ընդունված որոշումները: Ու թեն դրանք այդպես էլ գործնականում չիրացվեցին, այնուամենայնիվ այդ որոշումների վավերացման փաստն ինքնին նշանակալից է: Երեվույթը վկայում է, որ Հայկական Կիլիկիայի եկեղեցականացման ժիշտառն էլ օտարամուռ չէր, որ հայ ազնվականության միջավայրում այն արդեն նպաստավոր հոգ էր դունլ:

Ինչպես զիտենք, դրա նախադրյալները շոշափվում էին գեղ ավելի վաղ ժամանակներում: Այսպես, XII դարում դժվանաբանական կեղծ սահմանավատումների վերացման, պահպանողական Հայացքների վերանայման դադարիարի կրթութառագովներից էր Ներսն Համբրոնացին: Իր այդ դիրքորոշման Հանգամանալից բացատրությունը Համբրոնացին ավել է կեսի Բ թագավորին ուղղված նամակում: Ի պատասխան արնելահայ ընդդիմախոսներին, որոնք կշտամբում էին նրան և նրա Հետևորդներին Հայրենական ավանդութեները ոտնահարելու մեջ, Տարսոնի և Սկևոայի արքեպիսկոպոսը զրիլ է. «Դարձեալ և ի լատինացւոց ազգին՝ ոչ թէ զմեզ միայն խորշեցուցանեն Զորոյգետացիքն. այլ և զձեզ. և շկամին նոցա սովորութեամբն զվարելոյն. այլ պարսիցն, լորոց միջի իւրեանք են, և ըստելութեամբն նոցա կրթին: Արդ Հաւատովք մի եմք և իշխանք և Հայոց ազգո՞ւ դուք մաթմոյ և մեք հոգոյ: Որպէս հրամայեցէք դուք մեզ՝ մեք առաջին հարցն շատաց ընթացակիցս լինել, լիք և դուք ձեռոյն: Մի՞ կայք բացազուխ լսու լատինացւոց իշխանացն և Թագաւորացն, զոր Հայք մադամկաթացն ասեն ձեւ. այլ զիք շարփուշ, որպէս ձեր նախնիքն. անեցուցէք զէերս և զմորուս, որպէս ձեր Հարքն. զգեցիք դուռայ լայն և թաւ, և մի՞ փիլոն և զսպեալ պատմուճանս, հեծէք ի սախտեալ ձուշանով, և ոչ յանսախտս լատինս լեզով. տուք պատիւ անուանց ամի՞ բայ, և Հենուպ, և մարզպան, և սպացսալար, և այսպիսիս. և մի՞ սիր, պրօքսիմոս, զունգուստապլ, և մարզախտ, և ձիաւոր, և լեճ՝ որ լատինացւոց է օրէն... Իսկ ապա թէ իշխանութեանդ ձեր ծանր է այսօր զլատին ազդին՝ որ են ֆրանկը, անօսր և բարակ սովորութիւնն թողուզ, և

ի հնոց Հայաստանեայց թանձրութիւն դառնալ. և ոչ հերաժողովէք, և ոչ մորուս երկայնացուցանէք, և մեզ ն'ս ծանրադոյն զկատարեալ բարեկարգութիւնն՝ որ ի նոցանէ օդուցաք ի փառս սուրբ Ակեղեցոյ, արհամարհել վասն Զերոյ գետոյ երկու ազունսուցն հանութեանս²⁵:

Հիրավի, Ռուբինյաններից թերեւս ոչ մեկն այնպիսի Համակրանք չի տածել զեպի լատինները և ընդհանրապես եվրոպական քաղաքակրթությունը, ինչպես դա հատուկ է եղել և եօն Բ թագավորին: Յքանկներին (Կիլիկյացիք աշդպես էին սովորաբար անվանում եվրոպացիներին) նա ոչ միայն պիրավորեն հյուրընկալում էր իր տիրապետության աահմաններում, այլև շատ հաճախ բերդեր ու հողատարածություններ էր նվիրում նրանց: Առանձնապես արտոնալ վիճակում էին իրենց զգում ասպետական զանազան օրդենների ներկայացուցիչները, որոնք ինաշակրաց արշավանքների շրջանում բազական պատկառելի քանակություն կազմեցին²⁶: Բացի այդ, կեռնե ամեն կերպ աշխատում էր բարեկամական կապեր հաստատել Արևմուտքի հետ: Նա նույնիսկ ջանում էր դորժադրել իր երկրում պետական կառավարման եվրոպական եղանակները²⁷:

Ռւսուի միանգամայն հասկանալի է, թե ինչու ժամանակի ընթացքում, այս կամ այն քաղաքական իրադրության թերապրանքով մեկ հորդացել, մեկ էլ ծանծաղացել են, մի կողմէց՝ հունասեր, մյուս կողմէց՝ լատինասեր հոսանքները. Նայած, թե ո՞ր պետական գործիշն ո՞ւմ հետ էր փորձում կապէլ Երկրի խաղաղ կեցությունն ապահովելու հույսը՝ Բյուղանդիայի, թե Արևմտյան Եվրոպայի: Եվ Եթէ այս իրդությունը ժամանակին որոշակիորեն արտացոլվել է հաստակական գիտակցության մեջ, ապա ոչ մի կասկած, որ այն

²⁵ «Ներսնի Լամբրոնացուցն Ատենաբանութիւն և Թուզը և ճանքը, Վենետիկ, 1838, էջ 234—236:

²⁷ Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, стр. 160—161.

²⁸ V. Langlois, Le trésor des chartes d'Arménia au Cartulaire de la chancellerie royale des Roupeniens, Venise, 1853, p. 34—105.

շէր կարող չանդրագաւնալ նաև միենույն հողից սնվող զեղարկեսական արժեքների վրա: Եվ, ի՞շարկե, առաջին հերթին դա դրսնորվելու էր այստեղ բնակվող տարրեր ներկայացուցիչների փոխարարերության, նրանց զանազան ազգացին ավանդույթների, մշակութային արժեքների փոխներթափանցման միջավայրում: Իսկ զրա շրջանակները գնալով ընդունվում էին: Ինչպես հայտնի է, մերձարևնելլան ծովեղերքի տարածքում հիմնված փոքրիկ ասպետական թագավորությունները XIII դարում արգեն զրեթե կործանվել էին: Եվ եթե խաչակիրներից շատերը, անփառունակ ավարտելով իրենց երրեմնի փառարանված երթը, բռնեցին դեպի հայոցներական տուն տանող ճամփան, ապա բնավ քիչ շեխն նաև այնպիսիները, որոնք բնակություն հաստատեցին հարեան քրիստոնեական երկրներում: Աասնավորապես Կիլիկյան Հայաստանում, որտեղ նրանց հոգարակամ տրամադրովեցին ոչ միայն հողային տարածություններ, այլև իրավական բազմապիսի արտոնություններ²⁹:

Նկատի առնելով այս ամենը, հավանական է թվում, որ հոգին սատանային վաճառած վանականի մասին պատմող լեգենդը Մյուտրյոֆն առաջին անգամ լսած լիներ հենց Կիլիկիայում: Յավոք, հեղինակի կինսագրության վերաբերյալ մեզ զրեթե ոչ մի տեղեկություն չի հասել³⁰ և Արևելք կատարած նրա «ուխտագնացության» մասին (որ ընդհանրապես հատկանշական է այդ ժամանակաշրջանի տրուվերներին³¹) կարելի է միայն ենթադրել: Ընդ որում այս ենթա-

²⁹ Այդ ժամին ժամանակն ունեա Մ. Օմանյան, Ազգապատում, Հայութակ Ա. Բիբրաբ, 1960, էջ 1725—1726; J. S. C. Ritter-Smythe, The Templars and the Teutonic Knights in Cilician Armenia. In: The Cilician Kingdom of Armenia, E. L. & R. Becke, Լուսու, 1978, ո 113—117. Համ Հ. Ա. Առաքյալյան, Հայկական Կիլիկիա, Անդրկանքի բանահանք, 1978, էջ 221—222.

³⁰ J. Cl. Anthally, i.e. théâtre meutével profane et comique, Paris, 1973, p. 11—42.

³¹ F. Dier, Leben und Werke der Troubadours. Ein Beitrag zur näheren Kenntnis des Mittelalters, Amsterdam, 1965, S. 10—37, 40 7.

ηριεβլյանն է մեզ մղում նաև այն փաստը, որ կրկին XIII դարում ժան Բոգելի ՇԱՊՈՐՔ Նիկողայոսի հրաշքը գրամաւիկական երկի սյուժեն ևս հորինվել է արևելյան թեմաներով, և որ առջապարակ հրաշապատում զբամաների ժանրը ֆրանսիական պրականություն է թափանցել Հատկապես խաչակրաց արշավանքների շրջանում։ Բացառված չէ, ի՞նչ արկե, որ կիլիկյան լեղենդը կարող էր ֆրանսիական միջավայր լաւդանցել նաև այլ ճանապարհով, ասենք, թափառաշրջիկ կունեղիանաների, ճանապարհորդների և կամ առևտրականների միջոցով, որոնցից շատերը կիրք և բանիմաց մարդիկ էին³²։

Տաղաւորութիւնը կազմակերպության շրջանակում նշանակալից է երևում նախ այս պարագան, որ ֆառուալյան ողբերդության թեմայի սկզբնազրյուրը ծննդել է կիլիկյան միջա-

11 Օրբ սույն աշխատավիրումը քննարկվում էր որպես պիտիքացիա
Հայաստանի ԴԱ Արքիմանի ինստիտուտի մասնագիտացված խորհրդում,
արգելուագիտության թևելուածու էմանա Պետրոսյանն իր ընդդիմական
հեղույթում, ուշագրավ մեր լրացում արեց Քրանոսիական թատրոնական գրա-
կանության մեջ արևելյան և, հատկապես, Հայկական մոտերքների առկա-
յության վերաբերյալ Ազգական Թրանսիրակի Արար անունով Հայտնի ըն-
կազմայիշ, որ պետև IX դարում աչցի է ընկել իր թատրոնական բուռ-
կակարպի, ապդագրական ու բանագիտական մի շարք ամպյալների համա-
ձայն, համեմատելի է պատմական Հայաստանի տարածքում գոնզող
Արեւ (Արար) ավանի Հայ, Ներկումն էլ քուշակային արդյունաբերության
կննորուններ և նոր ՏԵ՛ս Համար 1 հիմքություն ունի. Ինը
Յ. Ա., Խ. Յ., Ծ. 153), իսկ Հայում, ինչպես գիտենք, քուշակները ու
միայն Հայում հեռաւառներ, չարու առաջներ ու ակրարաններ լին ուղի-
եցածիւներ, զուսաններ ու առականութեր և դեպ, ժամ Բողելը, Ազամ
ող լա Հայք և, հավանութեն (ըստ է. Պետրոսյանի), նաև Բյուստրոֆը Ա-
րաւայ, այսպիս կոչված, ունի պարունակի Նորացրությունը անդամներ ինչ-
ոք ճիշճ նկատի ունենանք Կիլիկիան Հայաստանից Նվազապա (բնակու-
նարար նաև Թրանսիր) զործվածքային ապրանքների (կարպաններ, գոր-
գոր) արտահանման իրազությունը, ապա շատ հավանական է թվում, որ
արևելյան մոտերքները կարող էին Արևոտք թափանցել նաև Հայ քու-
շակների միջոցում:

վայրում։ Բացի այդ ուշագրավ է, որ հսկելածառ վանականի պատմությունը բովանդակող վերոհիշյալ առակին արդեն իսկ հատուկ է ֆանտաստիկ երանգավորումը։ Երբ սատանայի դրդմամբ վանականը մատով դիպչում է զգեստի տակ թարգրած «շորերադեայ» գործիքին, «յանկարծակի» հաղարք հաղարք և բիւրք բիւրոց տասնազի և թմբկի և սուսնայի և շանկի և շորերազոյք ձայներ են լսվում եկեղեցում։ Մի՞նչ սա հրաշք չէ։ Միայն թե այստեղ մենք գործունենք նրաշը հասկացության հնագույն իմաստարանության հետ, երբ այն ենթադրել է պարզապես ձեռնածություն, աճպարաբերություն՝ աշխատանք (նշում՝ «Հրաշք» բառոից)։ Աւստի և մեր տուակի հերոսը՝ պաշտոնամոլ վանականն այս պարագայում ակամա հանգես է զալիս աճպարարի գերում։ Իսկ մինչեւ միննաւյն աճպարարի գերում չի հանգես զալիս նաև սատանան։

Նարծում ենք, ո՛մկան միայնակեցի ընդ սատանային առակում նկարագրված այդ պահը, երբ պաշտոներդության ժամանակ հանկարծ եկեղեցում գուսանական երաժշտություն է հնչում, դեղարվեստական հնարանը չէ միայն, որը հեղինակն օգսագործել է հավատարիմ մնալով հրաշապատումի բանահյուսական ակունքներին։ XII դարում կիլիկյան հայ նկեղեցական դարձիչներն իրոք որ սկսել էին արավել աշխարհիկ թաւերային հանդիսանեթներով։ Հիշենք Սարգիս Շնորհալու խոսակովանությունը։ «Յերգս լկութեան և ի կատակերգութեան առունել հեշտանամբ։ Հավանաբար, մինչեւյն կատակերգական հանդիսանեթներն են զբաղեցրել նաև Դրիգոր Տղային, երբ «Բան ողբերդական վասն առմանն Երուսաղեմի» պոհմում գրել է։

Ու՞ր են խնճոյթ, կարաւը ստին
Եւ կամ ձեռաց կոյիթս ժափին...
Ո՞ւր են մանկոնցն, որ խաղացին,
Երիտասարդն, որ խրոխտային.
Ո՞ւր զինարրութն, որը ըմպէին,
Զօր և յատեան զովէին.

Ո՞ւր քամբասացքն դովեստին,
Կատակերգութեան ի ժողովին.
Ա՞յլ շնարաւարք երդարանին...³³

Ժողովրդի կողմից շատ սիրված առասպեկտապատճեմ
ոլույցների ավանդման թատերային ձևերը, Կիրակոս Դան-
ձակեցու վկայությամբ, Ներսիս Շնորհալին հմտորեն օգտա-
գործել է իր լուսավորչական զրոժունեալիքն մեջ՝ «Եւ զի
յամենարնի Հանճարեղ էր ներսիս, — զրում է Գանձակեցին,
— արար և առակս խորհրդաբարս ի զրոց, և հանեւուկս, զի
փոխանակ առասպեկտնաց՝ դայն առասցեն ի զինարքունս և
ի Հարսանիս»³⁴: Բացի այդ, «Ովք նդեսիոյ» պոհումում նա
պարզորոշ արտահայտում է նաև Բատերականացման պահ-
կան հանդիսանքների հանդեպ ունեցած իր համակրանքը.

Ո՞ւր քաղցրաձայն երաժշտի
Կամ զեղգնդումն եղանակի:
Ո՞ւր ընթերցողն սուրբ Տառի,
Կամ վարդապետք ի հանդիսի...³⁵

Արվեստաբանական հետազոտությունները վկայում են,
որ XII—XIII դարերի կիլիկյան մշակութային կյանքում հե-
տող հետեւ նվազում է կրոնավորության հիերատիկ խստու-
թյունը, և որ այդ բարեշրջական պրոցեսը նկատելի է նաև
կերպարվեստի բնագավառում³⁶: Մանրանկարիչներն այսուն
սկսում են հաճախ շրջանցել զարդանկարչության թեմատիկ
կանոնները, երբեմն հրաժարվում են պատրաստի պատկե-

33 Գրիգոր Տղա, Բահաստեղծություններ և պոեմներ, աշխ. Ա. Մես-
տականյանի Եր., 1972, էջ 299:

34 Իիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մէլիք-Օհան-
չյանյանի, Եր., 1961, էջ 147:

35 Խերսոն Շնորհալի, Յաղագս Երկնի և զարդուց նորա, Հանելուկներ,
Աղք Եղիսիոյ, Եր., 1968, էջ 51:

36 S. Der-Nersttar, Manuscrits très éminents illustrés des XII^e et XIII^e siècles de la Bibliothèque des pères Mekhitaristes de Venise, Paris, 1936, p. 162. Ա. Ազարյան, Կիլիկյան մանրանկար-
չություններ XII—XIII դդ., Եր., 1961, էջ 11—12. Վ. Ղազարյան,
Արքիս Պիծակ, Եր., 1987, էջ 11—12:

բագրական սխնմաներից Նրանց ուշադրության շրջանակ-ներն են ներդրավվում պարականուն սլուժեներն ու կենդանի տպավորությունները, իսկ ստեղծագործական տարերքն եր-բեմն աչափիսի թոփշք է զործում, որ նույնիսկ ավետարա-նական սյուժեների կրոնական հյուսվածքի տակից նշմա-րելի են դառնում պատկերված պերսոնաժների հոգերանա-կան վիճակները (հասկանալի է՝ այնքանում, որքանով միշ-նադարում հնարավոր էր դրան հասնել):

Պահպանողական կապանքներից ստեղծագործական մտքի ու հույզերի պատազրման այս միտումները միաժա-մանակ նպաստել են աշխարհիկ տարրերի, դրանց թվում նաև թատերական մոտիվների առավել ինտենսիվ ներդր-կալմանը: Այդ ժամանակաշրջանի նկարագրադրդ ձեռագրերում հաճախ պատկերվել են դուսանական երաժշտական գործիք-ներ³⁷, ծառված կատակերգական ֆիգուրներ, մինչև անգամ միշնադարյան հրապարակային հանդիսանքներ հիշեցնող կրկնացին խուզի դրվագներ³⁸:

Ուշագրավ է նաև այն իրողությունը, որ կիլիկյան ման-րանկարիչներն սկսել են դիմել միջնադարյան կերպարվես-տում սակավագեղակ կիրապվող, ավետարանական պատում-ների ցիկլային վերաբտադրման եղանակին³⁹: Ո՞րն է դրա սկզբունքային առանձնահատկությունը: Ցիկլային ասելով, տվյալ պարագայում ենթադրում ենք, որ մանրանկարիչը մեկ նկարի շրջանակներում պատկերել է մի ամրողական դրվագ, ժապավենաձև մասնատելով այն մի շարք տեսա-րանների, որոնք հաջորդաբար ներկայացնում են միևնույն պերսոնաժներին միևնույն վայրում և միևնույն ժամանակա-հատվածում որևէ զործողություն կատարելիս՝ այսինքն յու-

³⁷ Հ. Կ. Տաշուզյան, Թеория музыки в древней Армении. Ереван, 1977, стр. 28–37.

³⁸ Դրանք մանրաման լուսարանված են է. Պատրոսյանի «Բատե-րական գծերը միջնադարյան մանրանկարներում» աշխատությունում. «Հայ-ազգագրություն» և բանահյուսություն», 7, Եր., 1975, աղյուսակներ:

³⁹ Վ. Ղազարյան, Մյուժեատային մանրանկարը Կիլիկյանում, Եր., 1984, էջ 18:

բարանշվուր տեսարանում պահպանվում է ժամանակի ու
 տեղի միասնությանը: «Բազմատեսարանային» պատկերա-
 զարդման այս ձեք, ըստ Կ. Վալյամանի, սկիզբ է առնում
 Հելլենիզմի դարաշրջանի վագանկարության մեջ զբամատի-
 կական արվեստի անմիջական ազդեցությամբ⁴⁰: Ինչպէս այ-
 նարդ է՝ թե ի՞նչ ճանապարհով է այն մուտք զործել միշ-
¹⁵⁹ Նույն ուղարձ. էջ 719—720:

¹⁶⁰ В. В. Бычков, Эстетика поздней античности, М., 1981, стр. 198.

ոռությամբ շնորհը հիմնելու համար հարկավոր էր համապատասխան ճարտարապետական տեխնիկայի և բնմադրական համակարգի իմացություն, որ միջին դարներում վաղուց արգել մոռացության էր մատնված: Եվ երկրորդը, որ ավելի զորեղ էրաստարկ է՝ պետք է պատմականորեն արդարացվեր դրա անհրաժեշտությունը: Մենք դիտնիք, որ վետրուվիումի ժամարտարապետության մասին տրակտատը, իր տեսակի մեջ առաջին և առաջմ մեզ հայտնի միայն աշխատությանը՝ որտեղ հին բաւրոնական կառուցների հարցում առաջնական և պրակտիկ նկատառումներով, հայտնաբերվել է միայն վերածնդյան դարաշրջանի շնմին (XV դ.) և նպաստել ռենեսանսյան իմաւորումներու նոր զրվել են արդյոք միջնադարում նման տրակտատներ: Ինարկե՛ ոչ: Դրա անհրաժեշտությունը չկար: Եվ, վերջապես, եկեղեցին դա թույլ չէր տա: Ճարտարապետությունը, ինչորս և դրականությունն ու արդիստը, զտնվել են քրիստոնեական գաղափարախոսության իշխանության ոլորտում, և այստեղ մենաշնորհը եկեղեցունն էր: Նա թեք է նայեամ թատրոնին և հատկապես հունահռոմեական շրջանի թատրոնին ոչ թե սոսկ այն պատճառով, որ թատրոնը նրա աշխատ չարիք է, բարոյական անկման ազրյուր, որից հասաւակելությունը կարող է քաղել միայն «զշար» սերմանս սասանային: Ոչ: Այդ մասին, իհարկե, նշում են միջնադարյան Հեղինակները և բավական հաճախ: Բայց չէ որ թատերական արվեստը շարունակում էր ապրել: Գուսաններն ու կոմեդիանոները շարունակում էին իրենց գործը: Եվ հոգևորականությունն այսական նաև անզոր էր արգելակել այդ բնական ընթացքը: Նա ինքն էր շատ հաճախ գայթակղության մատնվում, ինքն էր զնում դիտելու թափառաշրջիկ միմոսների հանդիսանքները: Մի՞թե սա ևս օրինաշափ էր: Կարծում ենք, որ այու եկեղեցու և թատրոնի միջև եղած տարածայնության նորերը բախվում են հիմնականում գաղափարական հողի վրա և այստեղ պայթարն իրոք անզիջում էր և հետեղդական, ինչպես որ անզիջում ու հետեղդական էր քրիստոնեության պայթարը հեթանոսության և նրա այլն:

այլ դրսեորումների դեմ: Այն, ինչ վերաբերում էր միջնաւ-
 րաբյան մարդու վարքագծին, նրա կենցաղավարությանը,
 որտեղ հնից հկած բազմաթիվ և բազմապիսի սովորությ-
 ներ էին պահպանվել՝ մասամբ ձևափոխվելով նոր աշխար-
 հայեցողության դարբնոցում, մասամբ էլ պահպանելով ի-
 րենց նախկին նկարագիրը, ապա դրանք թերեւ կարող էին
 դոյլատենէլ, և գոյատենէլ են, հասել մինչև նոր ժամանակ-
 ներ: Չրիստոննական գաղափարախոսության իշխանության
 պայմաններում, երբ մարդ անհատի ներաշխարհը կառուց-
 վեւմ էր կրոնա-բարոյական նոր շափանիշներով, երբ նրա
 առօրյան կանոնավորված էր արդին ըստ նոր արարողա-
 կարգի, այդ հեթանոսատկան վերապրուկների «վնասակար»
 դերն այնքան էլ էական չէր և, իհարկե, հետագայում դրանք
 չեն քայլացի ավատատիրական հասարակարդի կրոնա-աշ-
 խարհայցքային հիմքերը: Սակայն կարո՞ղ էր արդյոք ե-
 կեզեցին միաժամանակ հանդուրժել հեթանոսական մեջան-
 ների դոյլությունը: Արդյո՞ք կարող էին դրանք շարունակել
 իրենց կյանքը նոր միջավայրում, զործել առաջվա պես
 շասկանալի է, որ ոչ Առավել անհեթեթ է միջնադարում
 նոր հեթանոսական մեջաններ հիմնելու մասին իւսուելը:
 Իայց չէ որ այդպիսի մի մեջան է զիտակցվել նաև հունա-
 հռոմեական թատրոնը իր շրջանաձև հորինվածքով՝ օր-
 ինաւորայով, որի կենտրոնում ժամանակին Դիոնիսոսի զո-
 հասեղանն է կանգնեցվել: Չէ որ անտիկ թատրոնի ծագումը
 նոր կրտնի շատագովներն անմիջականորեն կապում էին
 կռապաշտության, հին խորհրդապաշտական ծիսակատարու-
 թյունների հետ: Վերջապես, չէ որ կայսերական Հռոմում
 անդամ հաճախ թատրոնական շենքերը կառուցում էին ան-
 միջաւոյն հեթանոսական տաճարների կողքին և, որ առավել
 ուշագրավ է, առանձին հանդիսավորությամբ սրբագրուում
 էին զբանք, ինչպես սրբագործել են անտիկ աստվածների
 մեջանները¹⁰¹:

¹⁰¹ В. В. Головня, История античного театра, М., 1972, стр. 353.

Մի խոսքով՝ անտիկ թատրոնական շնչքերը չէին կարող գործել միջնադարում, քանի որ զրանց ընդհանուր նկարագիրը, համապատասխանելով հեթանոս հասարակության կրոնական և գեղագիտական հայացքներին, անհարիր էր օրինառոնեական զաղափարախոսությանն ու աշխարհայեցողությանը։ Տիեզերքի միջնադարյան մողելը շրջանաձև չէր, ինչպես պլաստիկան կոսմոսը և բռլորակերպ օրինաբարան, այլ ուղղագրեած ձգած մի պարուրագիծ էր, «Տիեզերային ուղարմության» այնպիսի մի ճանապարհ, ուր և՛ ժամանակակիրական, և՛ տարածական եղրերը հնիթադրում էին որոշակի սկիզբու ու վախճանման¹²²։ Դրանում, կարծիս, դժվար չէ ճամուղվել։ Սակայն զրանով դեռևս չի սպասվում խնդիրը։ Եթե ընդունում ենք, որ միջնադարում հունա-Հռոմեական թատրոնները կորցրին իրենց ֆունկցիոնալ արժեքը, ապա ընականաբար հարց է ծագում. իսկ ի՞նչ են այդ դիսլոցում ակնարկել միջնադարյան հեղինակները, երբ խոսքը վերաբերել է ոչ միայն թատերական հանդիսանություններին, այլև այդ հանդիսանությունների համար նախառականված թատերա-տեսաբանացին շինություններին։

Վերագունանքը Մայրապոմեցու «վերնադիտակ տեղիսարությանը, որ, ինչպես արդեն նշեցինք, ակներեցուն թատրոնական հանդիսասրահի վերնահարկն է հնաբաղրում։ Դատելով Մայրապոմեցու ճառից, սովորաբար այսուեղ կանուքը են ուղղ զրադեցրել։ Այս հանդամանքի վրա ուշադրություն է հրավիրում վաճրամ Թերզիրացյանը՝ ի միջի այլոց նկատելով, որ «հեկեղեցիների վերնահարկը նույնպես հատկացված է եղել կանանց»¹²³։ Խոսքն, իշարիկ,

122 Այդ համեմատածուն անձ լ. В. Оրбելի. «Երևանի աշխարհական առաջնահանդիսական թատրոն» թագավորական արխիվում, Եր., 1954, մ. 2, էջ 144—145։ Հաղմաժամ տաղերին հեղինակը միտկողմանի և մասնաւոր լուսաբանությունը՝ հրավելելով պիտակապես առանձան գույքիների վրա Այժմ վրձում է պերունակի ըստնեց վահանացի պիտակապես ամփոփումների ամփոփ բայց կանոնավոր։

123 Յ. Թերզիրացյան. Ֆաշ. աշխ., էջ 111.

այդ երկու իրազությունների միջև եղած անմիջական կապի մասին չէ: Թեև բյուզանդական ազրությներից մեկ հայտնի է մի գեպը, երբ եկեղեցին բացահայտութեան վերածվել է թարունի¹⁰⁴: Հնարավոր է, որ բյուզանդացի հեղինակն այս անուշունքու («թէատրոն») բառն սկսութեածն է առկերպության մասաւոր նախագրական հմաստով: Առկայն առավել նեշտագրակ է մեկ այլ փաստ: Վանքներում թատերական հանդիսանքներ կազմակերպելը: Այդ մասին սրոշակի տեղեկությունն է տալիս Դիլինի եկեղեցական ժողովում ընդունված կանոնագիրը: «Ոմանք յազատաց եւ յուսակե հետյաց, — համուճ ենք այսանդ, — հասանելով ի պետք ուրեք, թողեալ զգեաւորն ի վանս առնեն զիջավանսն եւ ի յարկս սրբոցն, եւ դուսանաւը և վարձակաւը պղծեն զնուիրեալ տեղին Աստոծոյ, զոր սոսկալի է քրիստոնեից լսել, թող թէառնելը¹⁰⁵: Այ դա ընորոշ է եղել միջնադարյան հայ իրականությունը՝ միանդամայն պարս է: Այլապես այդ խնդիրը ընավ էլ շեր զբաղեցնի հոգնոր հայրերին: Բայց, բատ երկույթին, քիչ է սանէ ընորոշ է եղել: Վանքերում իշեանելն ու այսանդ թաւերական հանդիսանքներ կազմակերպելը արմատացած սովորույթ էր հայ ավատատիրական հասարակության մեջ, ուստի Միսիթար Գոշը ևս հարկ է համարել հիշատակելու այդ մասին իր Գատաստանագրում: «Ոմանք ազատք եւ հեծեալք, որ ի գեղորայս հասանեն, որոց բնաւ ի վանս տեղի լինի, եւ գելու շիջանեն, այլ ոմանք կանամբք եւ նաժըշտաւութ ի վանսն իջանեն եւ այնպէս կոփսեն զկանոն հարցն, եւ գուսանաւը և վարձակաւը ի սրբութեանց եւ ի պաշտամանց ի տունն ընթրիս ուտեն, որ սոսկալի է քրիստոնեից լսել, թող թէ տեսանել»¹⁰⁶: Նախորդ շարադրանքից մեկ

¹⁰⁴ M. A. Шанеин, Византийские политические деятели X в. — Византийский сборник, под ред. М. В. Левченко, М.—Л., 1945, стр. 235.

¹⁰⁵ «Եղինակագիրը Հայոց», աշխա. Վազգեն Հակոբյանի, Հայոց, Բ, Եր., 1971, 7, 711—712:

¹⁰⁶ Միսիթար Գոշ, Գիրք Պատուանիի, աշխա. Ա. Բորբոշյանի, Եր., 1975, էջ 121, 385:

Հայտնի է, որ հնում հաճախ խննոյի ասվածը միաժամանակը թէառուն է նշանակել: Եվ սա արդեն, իհարկե, փոխարերություն չէ: Նախարարական նաշենքույթներին թատերական հանդիսանքներն իրոք անպակաս էին: Հավանաբար, այդպես էր ընդունված նաև ընթրիթի ժամբին: Բայց ինչպես բացատրել հաւակապնս վանքերում իշխանելու հայ ազնվականների սովորույթը: Եվ ինչպես է, որ մուտքն այսաեղ անարջելք է եղիլ թե՛ նրանց և թե՛ գուսանների ու վարձակների համար: Նախ՝ կարծում ենք, հոգևորականներն իրենք են շատ հաճախ հյուրընկալել իրենց հարկի տակ թափառաշրջիկ կոմեդիանտներին: Հիշենք Գրիգոր Մարտիրոս Խոստովանությունը. «Ճեղայ մորոս և հիմար կոչելով...»¹⁶⁷:

Իսկ որ կրոնակուրները թատրոնով շատ են տարվել՝ մենք դա գիտենք և հարկ չկա կրկնել այն բազմաթիվ վկայությունները, որոնց հեղինակները պարզորոշ, խոսում են այդ իրողության մասին: Սակայն դա հարցի միայն մի կերպերում է եկեղեցականների միջավայրում թատերախաղը կազմակերպելուն: Դվինի եկեղեցական ժողովի կանոնը և Մխիթար Գոշի Պատաստանադրից մեջբերված առաջերը հուշում են, որ վանքերում իշխաններս աշխարհիկ առենքականությունն ակենալի է ոչ միայն հարմարավետ օթևան, այլև հաճելի ժամանց: Եթե ուշադիր ընթրցենք այդ գրությունները՝ կտեսնենք, որ «ազատք և հեծեալք» վանքերում իշխաննել են «կանամքք և նաժշտաւրք» միայն: Նրանց հետ եկած դուսանների մասին խոսք չկա: Ուստի պետք է ենթաքրել, որ վերջիններս այդ պահին գտնվել են կամ մոտակայքում (ասենք այդ նույն զյուղում, ուր հանգրվանել են իշխաններն իրենց կանանց ու նաժիշտների հետ և, երբ նրանց ծառալության կարիքն է զգացվել՝ անմիջապես ներկայացել են), կամ էլ հենց վանականներն են իրենց ձեռքի տակ դերասաններ պահել որպես սպառաւորս ուրախութեան: Մտարենք Փառեն կաթողիկոսի խեղկատակին:

¹⁶⁷ ՄՄ., ձեռ. Ա 108, էջ 135ա:

որի մասին հիշատակում է Բևազանդը¹⁰³: Այսպես թե այնպես, վանքերում թառերագան հանդիսանքներ դիտելը սովորական երեսով է եղել, թեև միաժամանակ պաշտոնապես պախարակելի և անարդանի արժանի ինչպես տեսնում էնք, և կեղցականների խոսքերն ու գործերն այնքան էլ համերաշխ չեն: Մի դեպքում՝ նրանք հրապարակորեն ճառել են չկատան անօրեն թառերաց դիւականաց», մյուս դեպքում՝ «թառը գրասանացն» գործել իրենց իսկ տանը, ինչպես կասեր Հովհան Ռուբերեանը: Եվ աբոյո՞ք Հենրի նման թառերախաղերը նկատի չի ունեցել Պրիգոր Սարաշեցին, երբ դրեւ է. «...յետ դիշերոյն, յետ խաղուց անցանելոյի, յետ կերպարաննելոյին յաշա տեսողացն՝ յետ տաղաւարիս, ապա բակաբին դիմակըն և երեխ ճշմարտութիւն, ապա իւրաքանչիւր մեղքն ցուցանին»¹⁰⁴:

Իսկ թե ի՞նչ պայմաններում են ներկայացվել այդ թառերական ներկայացումները՝ մենք չգիտենք: Եթե խոսքը վերաբերում է սովորական խնջույքներին, ապա դրանց մոտավոր որոտեկերը թիշ թիշ շտու կարելի է վերականգնել: Հացեկերույթների ժամանակ զուսաններն ու վարձակիները սովորաբար հանդիս են եկել որ մէջ բազմականին կամ «առաջի բազմականացն», ինչպես Հերովդնու գուստորն էր կարավում: Սա տարածված ձեւ էր և անտիկ ժամանակներում, և՛ միշնադարում: Այս բնույթի հանդիսանքների համար պարտադիր շէռ ստեղծել հատուկ բնմական միջավայր: Միջնադարյան զերասանները կարող էին ելույթ ունենալ ամեն մի հարցության վրա, դանադան պայմաններում, հանգատրաստիք հարմարեցնելով իրենց խաղը ավալ իրավիճակի թեշւադրած հանգամանքներին: Ուստի այսպես կարելի էր ովարձանալ նաև յուրաքանչյուր իշեանատանը, ուր մանավանդ համախ են թառերախմբեր այցելել: Եվ հարկ կարարոյնո՞ք ոտնահարել ոզկանոն հարցն, եւ դուսանաւք եւ վարձակաւք... ի պաշտամանց ի տունն սրբապղծել եթե

103 Փանիկան Բագրենի, Խշչ. Հրատ., էջ 402:

104 Մարաշեցու այս տողերը մանրաման յուսաբանված էն սոյն աշխատավորության մասնաւում գլուխ է:

մեր ընթերցած հատվածներում խռոքն իրոք վերաբերում է այսօրինակ կերպումով ժամանցներին, որոնք միջնադարում աղնվականության դասի ներկայացուցիչների: Համար առօրեական կենցագավարության ձևերից էին, առաջ վահրերում իշխաններու և հատկապես այստեղ թատերակալիրով զմարնանալու նրանց աշդ անհատների ձևառումը՝ մնում է անհասկանալի: Մի՛ն կրօնավորների ընկերակցությունն է նրանց ալղրան հրապարել և կամ սահմանված կանոնները ստեահարելու համույթը: Կարծում ենք, որ ոչ Մենք հակամած ենք ենթազրել, որ վանականների միջավայրը թատերակաղեր կազմակերպելու և դիտելու ավելի լայն հնարավորություններ է ընձնելու խռոքն այդ նպատակին ծառայող սենյակների մասին է, որոնք, ըստ երկույթին, հարմար են եղել նման ովարճանանդեններ ցուցադրելու համար: Եթե նույնիսկ չընեին էլ աշդպիսի հատուկ սենյակներ, ապա վանքերում ինչ-որ մի սրան այնուամենայնիվ նախատեսվել է, որտեղ պետք է ընթերեին «ազատք եւ հեծեալք», դիտելով գուսանների ու վարձակների ելույթները: Իսկ հնում, ինչպես զիտենք, Հացկերութից հետո, երբ սկսվել է իսկական գիտենք, կանայք առանձնացել են, նրանք տեղ շունեին տղամարդկանց շրջապատռմ: Բացառված չեն, որ նրանց միջից կարող էին գտնվել այնպիսինները, «որք յապրանօր պակշոտեալք միշտ ի թատերս փոթան աներկիւզ»: Մեկուսանալով տղամարդկանցից և հարմար մի դիտատեղ ընտրելով, նրանք ևս կարող էին ականատես լինել գուսանների ու վարձակների խաղերին, խորհել և դիտել «զնմանիս իւրեանց ի շարիւմ»: Եվ տվյալ պարագայում այդպիսի դիտատեղ կարող էր ծառայել վերնահարկից զեպի այդ սրանը բերող աստիճանների վերին պատշգամբատիպ մասը: Բայց կրկնում ենք՝ սա առայժմ ննիւադրություն է, վարկած:

Ավելի հավանական է թվում աշխարհի միջավայրում թատերաւանալարանային կառուցների նրողությունը: Միջնադարյան գրավոր աղբյուրներում եղած տեղեկություններն աշդ մասին անհամեմատ շատ են և պերճախոս: Նախ ընթերցենք Արքահամ կաթողիկոսի հետևյալ տողերը, որոնք

զերաբերում են Անիի շրջանի հայ աղնվականությանը. «Սուլութիւնն տիրեալ առ ամենեսին, զի առանց աղախնեաց և ժառայից ոչ լինէին. և հատիոտս լիկեղեցին ոչ ընթանային. ոմանք գրաստիւ, և այլք ի գրաստէ իշեալ ոչ կամէին, այլ զժամարարն արտաքս կոչէին և բարձրացուցանել տային զԱւետարանն և համրուրէին. և այնուհետ զնշաւրու առնել դնային ի քաներս, ի թէատրօնս, և ի ասպարէզ ձիարշաւանաց»¹⁷⁰: Թատր. թէատրոն և ասպարէզ տերմինները հեղինակն այսաեղ սպաւպործել է կամ որպես հոմանիշներ, ոչյոնինքն միննույն առարկան հնիթադրող բառեր, կամ էլ որուես Հարակից հասկացություններ, որոնց առարկայական համարժեքները թեե տարրեր են, սակայն՝ համարնույթ, միանման: Առաջին երկուար՝ քատր և թէատրոնը միշտադրյան հեղինակները մեծ մասամբ գործածում են տարրեր նշանակություններով: Այդ փաստի վրա ուշադրություն է Հրավիրում Հենրիկ Հովհաննիսյանը՝ նշելով, որ քատր քառու, «բայ երնույթին, վերաբերում է ներկայացմանն ու խաղացողներին», իսկ թէատրոնը՝ «իսաղի տեղին ու հանգամաններին»¹⁷¹: Կարծում ենք, դա հավասարապես վերաբերում է նաև Ալբանամ կաթաղիկոսի «Պատմադրությունից» մեջբերված տողերին: Ասելով «զնային ի թատերս»՝ հեղինակը նկատի է ունեցել ընդհանրապես թատերական հանդիսանքները, իսկ՝ «գնային», ի թէատրոնս արտահայտությունն այս դեպքում ենիթադրում է արդեն այն վայրը, ուր ներկայացվել են այդպիսի հանդիսանքները: Բայց թէատրոն բառի կողքին մենք այսաեղ ունենք նաև ասպարէզ բառը, որ նշանակում է ձիարժակարան (թատրոն) կրկես (թատրոն), երապարակ, մեցարան, ստաղ (շահունաց)¹⁷². Հիմա, մի՞թե այս հասկացությունները կարելի է հարակից համա-

¹⁷⁰ «Արքահամ կաթողիկոսի Կրնասցւոյ Պատմութին անցից իրաց և Նատոր-Շահից սպասից», Վաղարշապատ, 1870, էջ 103 (բնողագումը մերն է—Դ. Օ.):

¹⁷¹ Հ. Վ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 275—276:

¹⁷² «Եւթ բառղիրը հայկապես լեզուին, հատ. 1, էջ 215.

բեկ միմյանց: Երբ խոսքը վերաբերում է միջնադարյան
թատրոններին ու մրցարաններին՝ այս Այս հասկացությունները հաճախ նույնացրել են գեղեց հեղենիզմի դարաշրջանում: Այսպես, Մեծանոցին և Միջնորդ դատարան» պիհսում հերոսներից մեկը՝ դիմելով իր զբուցակցին, հետեւալն է ասում. «...Պարոններին սաղական է առյուծների դեմ մենամարտել, նիզակ ու վահան կրել, վազքի մրցույթներին մասնակցել... Զէ որ թատրոնում եղել ես և այդ ամենը շատ լավ գիտեմ»¹⁷³: Իսկ առաջին կտակարանի Մակարացիցվոց Բ գրքում բերվող հունարեն «...օրոշում ու աջդիմ շատ օստիքածնեա (Յ. Մակք. IV, 9) նախադասությանը դրաբար թարգմանությամբ համապատասխանում է՝ «...թէատրոնս և կրկէս շինեցից» (Բ, Մակք. Դ, 9): Կորնառու և աջդիմ բառերն ըստ էության հոմանիշներ են և հայերենում ունեն իրենց ստուգ համարժեքը՝ երիտասարդանց, որ նշանակում է «կրկէս և կրթաբան երիտասարդաց յոր և է մարզս և յուզմունս»¹⁷⁴: Ասել է թէ «ին Հայաստանում վարժարաններին կից եղել են նաև հատուկ մարզագանցիներ, որոնք հավանորեն նախատեսված են եղել ոչ միայն սպորտային դասընթացների, այլև զանազան մրցույթների, նույնիսկ կրկեսային հանդիսանքների համար: Պատմագրական աղբյուրներից տեղենկանում ենք, որ Արտաշես Ա թագավորի օրոք գոյություն են ունեցել «վարժատունք պէսպէս մարզութեանց»¹⁷⁵, իսկ Աշոտ Ա թագավորը կառուցել է տվել միշարք այդպիսի վարժատունք ու մրցարաններ՝ Միջնադարյան բնագրերում վարժարան բառն օգտագործվում է թէ տեղի վարժից և հրանազաց, վարժանոց, դպրոց, վարդապետարան, կրաշան, նզնարան, իմաստներով, և թէ որ-

¹⁷³ Менандр, Комедии Герод, Мимнамбы, пер. Г. Церетели, М., 1964, стр. 113.

¹⁷⁴ «Նոր բառզիքը հայկազնան լեզուին, համ. 1, էջ 684:

¹⁷⁵ Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, Հայութ, Ա, Վենետիկ, 1784, էջ 340:

¹⁷⁶ Խայմե Ռեզալու, Հայութ, Բ, էջ 707:

ուն կերպարան բմբջաց, մշցարան, հանդիսարան¹⁷⁷, այսինքն
նույնն է՝ թէատրոն¹⁷⁸:

Մարզպանինը թատրոնի վերածելու դասական մի օ-
րինակ մեղ Հայունի է ուշ միջնադարյան արևմտահվրապա-
կան թատրոնի պատմությունից: XVI դարում «Տիրոջ շար-
շարանաց եղբայրություն» անունը կրող փարիզյան թատե-
րախումբը Հիմնվել է Բուրգունդյան Հռիմելում, որը սուսպ-
րային խաղասրահ է եղել: Այդ ուղղանկյունն ու երկայնաձև
դահլիճն իր պատշպամբներով ու բնմահարթակով՝ թերևս
կարելի է համեմատել ժամանակակից թատրոնական դահ-
լիճների հետ, եթե չհաշվենք, որ պարտերում այստեղ ա-
մսունքը չկային, ինչպես այժմ է, և Հանդիսականները, բա-
ցի նրանցից ուժեր վերնահարկ (Հմմտ. «Անքնաղիտակ») պա-
տրշպամբներում են տեղ զբաղեցրել, կանգնած էին դիտում
ներկայացումը¹⁷⁹:

Ըստ Հավանական է թվում, որ միջնադարյան Հայաս-
տանում ևս եղած լինեին ալդ տիպի մարզպանիներ, ո-
րոնք նախառնեսվել են ոչ միայն սպորտային խաղեր, այլև
թատերական հանդեսներ կազմակերպելու համար: Արդյո՞ք
այստեղ ներկայացվել են միստերիաներ, ինչպես Բուրգունդ-
յան Հռիմելում: Եղել են արդյոք միջնադարյան հայ իրա-
կանության մեջ նույնպիսի թատերախմբեր, ինչպիսին Փա-
րիզի «Տիրոջ շարշարանաց եղբայրության» թատերախումբն
էր: Դժվար է տասել: Այդ մասին մենք ոչ մի վկայություն չու-
նենք: Բայց դա ի վերջո այլ կարգի հարց է: Մարզպարահը
կրկէս կամ թէատրոն անվանելու իրողությունն այս պարա-
գայում առավել ուշագրավ է: Մանավանդ, երբ նկատի ենք
առնում մի էտեան հանգամանք ևս, այն է՝ որ XIX դարա-
սկզբին թատրոն-կրկեսի դասական մի օրինակ հայտնի է
արգելն հայ թատրոնի պատմությունից: Դա «Արամյան
թատրոնն» է, որը ժամանակին իր տեսակի մեջ միակն է

¹⁷⁷ «Նար բառից հայկական լիդուիս, Հայութ, 2, էջ 294:

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 44:

¹⁷⁹ ՏՎա. Ա. Շինէլչով, Գ. Բելովիկ, Եղիշ, աշխ., էջ 297, 396:

նղել Մերձավոր Աբոնելքում: XIX դարում այդպիսի թատրոնական կազմակերպություն հիմնելու փորձեր արվել են նաև Եվրոպայում, սակայն ոչ մի կասկած, որ ինքնին երևույթը՝ ոչ իր բովանդակությամբ ու ձևով, այլ բնույթով ու տեսակով, անհամեմատ հին է, թերևս նիշտ կլիներ առենինք՝ միջնադարյան: Բացառված չէ, որ այդպիսի մի թատրոն-կրկես է ակնարկել նաև Արբանամ կաթողիկոսը: Եվ կամ Գրիգոր Մարտաշնին, երբ ապաշխարել է. «մեղա», ի թէատրոն նըստելով... մեղա», ի մարտից հանդիսէ»¹⁸⁰:

Իսկ այն մասին, որ թատրօնականացված մրցամարտերը խոր ավանդույթներ են ունեցել Հայ ժողովրդի կյանքում, վկայում են նաև ազգագրական աղբյուրները: Այսպէս, «Տարոնի Հայության մեջ զարգացած էր ձիարշավներ կազմակերպելու սովորույթը, որին իրեւ շարժառիթ հանգամանքներ էին հանդիսանում հարսանեկան հանդեսները, ժողովրդական տոններից մասնավորապես Համբարձումն ու Վարդավառը: Զիարշավներն առավել մասսայական բնույթ էին ստանում ո. Կարապետի մոտ, նրա տոններին:

Այստեղ հավաքվում էին, բացի տեղացիներից, նաև Կարնո, Վասպուրականի, Բաղեշի, Խնուսի և այլ հեռավոր շրջանների հեծյալ կտրիճները:

Զիարշավների ժամանակ դամբուլ-զուռնան նվազում էր այդ մրցման հատուկ եղանակը: Նվազից ոգևորված ձիերը ելման կետերից սլանում էին դեպի նշանակված սահման-ները և վերադառնում:

...Զիարշավներից հետո ժողովուրդը դրան նվիրված երգեր էր հորինում...»¹⁸¹:

Հավանորեն, ճիշտ այս տիպի հանդիսանքներ է նկատի ունեցել Գրիգոր Մագիստրոսը, երբ զրել է. «...այսպիսի խրախնութեամբ խրախնանաւալ... այսպիսի կառօք կառամարտել, յայսպիսի ձիքնթացս արշաւել, յայսպիսի սնուադինս բաղմել, դայսպիսի մրցումն տեսանել, այսպիսի փո-

¹⁸⁰ ՄՌ, ձևու. Ա 105, էջ 137ո, 145ո:

¹⁸¹ Վ. Բրոյան, Խշկ. աշխ., էջ 196—198:

դա՛ւրօք և թմբկօք ճոխանալ...¹³² Եվ կամ՝ «...Հանդիսի
մըցութեան տաղս և սոխնչս յօրինեալ անպատկառաբար ա-
ղատագունդն պարէին և ի հրապարակս դռեհից և քաղաքաց
իրու զգիւցազանցն երգէին»¹³³: Ինչպես տեսնում ենք, Հնում
ձիարշավներն ու մըցամարտերը միանդամայն թատերա-
կան նկարագիր են ունեցել, ուստի և միջնադարյան հեղի-
նակների բառապաշարում քէաւրոն և բառ տերմինները
շատ հաճախ ենթադրել են ստաղիոն կամ հիպոդրոմ, ուր
սովորաբար կազմակերպվել են նման Հանդիսանքները:
Օրինակ, Առաքել վարդապետը Տող ավանը նկարագրելիս
այսպիս է գրում. «...Նաև զրէաւրոն կազմ և պատրաստ
զորանոց պատրաստեալ միշտ և յավետ ձիբերաց արագու-
րեամբ խաղալին»¹³⁴: Խսկ Գրիգոր Տղայի «Բան ողբերգա-
կան վասն առմանն Երուաւղեմի» պոեմում կարդում ենք.
«Ուր ձիավարժքն ի թատերին»¹³⁵: «Ի թատերին» ձևն այս
դեպքում նշանակում է ձիարձակարաններում, ասպարեզ-
ներում, մըցարաններում:

Կիլիկյան միջավայրում այսօրինակ մըցախաղեր կազ-
մակերպելու սովորութը, ըստ երեսութին, այնքան տարած-
ված է հղել, որ որավել է նույնիսկ հոգենորականներին: Այդ
են վկայում ներսես Ենորհալու հետևյալ տողերը. «...Լսեմք
զոմանց քահանայից՝ ձիավարժս լինել և դէնս առնուլ ըստ
զինուորաց, և խրախնութիւնս խաղուց ձիբնթացից ընդ նո-
սին արշաւել երիվարօք, ի լորս երէոց և ի նետաձգութիւնս.
և յամենայն ինչ յայսպիսիս, որ նոցայն գործոյ է անկ և
ոչ հկեղեցոյ սպասաւորաց...»¹³⁶:

XIII դարի հիշատակարաններից մեկում ասվում է այն
մասին, թե ինչպես Մամետիա քաղաքում Հեթում Ա թա-

¹³² Գրիգոր Մագիստրոս, նշվ. Հրատ., էջ 49—45:

¹³³ Նույն տեղում, էջ 40:

¹³⁴ Առաքել վարդապետ, Գիգակի մէլիքությունը (Կյութեր հայ մէլի-
քության մասին), Ա պրակ, Վազարշապատ, 1913, էջ 12—13 (ընդգծում-
ները մէրեն են):

¹³⁵ Գրիգոր Տղա, նշվ. Հրատ., էջ 298:

¹³⁶ Ներսես Ենորհալի. Նամականի, էջ 172:

դավորը ձիավարժության շքեղագույն հանդես է կազմակերպել («շքեղագոյն ի նման հանդէս») կեռն արքայազնի մտսնակցությամբ։ Հանդեսին ներկա են եղել նաև օտարազգի հյուրեր. «...Զատ յայլոց բազմաց՝ կոչեաց զերկուածին փեսայս իւր, զՊեմունդ՝ բրինձն Անտիռքայ, և զՃուլիան՝ տէրն Սիդոնի, հանդերձ կանամբք նոցին՝ դստերօք իւրով (Սիպիլ և Ֆիմի), և զբոյր իւր Մարքիամ՝ կոմսուհի Յոպակէի (Գունդէս ճաֆոյն), «և զամենայն բարեկամս իւր (փուանգս) մհծարեաց գալ յայսկոյս. որ և ի գանորէից զամենայն դասս եկեղեցականացն ժողովեաց յառաջիկայ ուրախութեան գործն. և ձիաւորեցուցին զնա՝ ի թուին ԶԵ (1256 թ.—Գ. 0.) յամսեանն նուեմբերի ժէ օրն. և ուրախացաւ թագաւորն ուրախութիւն մնօ, հանդերձ Հարրն իւրով (Կոստանդնեաւ) և ամենայն զարմիւքն և ժողովովն որ եկեալ էին»¹⁸⁷։ Ուշագրավ է, որ Մամեստիալում զտնվող ձիարձակարանի հատակադին իր ընդհանուր պարամետրով հիշեցնում է կոստանդնուպոլսի հիպոդրումը (տե՛ս նկ 10, 11):

Հեթումի որդի Լևոնի մասին միջնադարյան գրավոր աղբյուրները հաղորդում են նաև հետեւալ հետաքրքրաշարժ փաստը. «...Ոչ զանդիտեալ ի ծառալութենէ իսմայիլացւոցն, ոչ պինդ հաւատուէ և արիայոյն սրտիւ կացեալ ի զերութեանն, նախ բանիւր բացալնրէր զբնակիչս որ յամբոցու աշխարհին դայթագղեալ էին, պինդ կեալ և ոչ տալ ի ձեռունվագա ի հանդիման լինիլն սուլթանին, զարմացուց զամենեսին իմաստուն բանիւրն և ահարկու կայիւքն, պատրաստ գլուխ ի պատասխանին։ Այլ և ձիբնթացու ասպարիջի կեալ ընդ սուլթանին, առավելագոյն դտաւ քան զամենայն զինուորսն ի հրահանգա ձիավարժութեան...»¹⁸⁸, Մտաբերենք «Աւաշի», ըգլեւոնն առհմ» տաղը, որտեղ հակառակորդ կողմերի մենամարտը նույնպես ընթանում է խաղահրապարակում՝ մելոդանում (նույնին է՝ ձիարձակարանում): Պատմա-

187 Ա. Ալլշան, Սիստան, էջ 245.

188 «Մամեստի քահանայի Անեցոյ Հաւաքըունը ի դրոց ուսամագրաց յաղագս զիւտի ժամանակաց անցելաց մինչև ի ներկայ առ Հակարչականաւ, 1893, էջ 222.

կան իրողությունը պուտներն ստեղծարանել են երգի մեջ որամատիկական երկխոսության եղանակով և, ըստ երևույթին, որպես «Հանդիսի մրցամթեան» տաղ էամ սովոր պղիցազանցն» երգել մրցահրապարակներում:

Կիլիկյան թատրոն-կրիեսներում կազմակերպվել են դանազան տիպի մրցամարտեր: Դրանց թվում եղել են նաև այնպիսիները, որոնք նմանվել են զլադիատորային հանդիսների: Անավարիկ, պատմողորական աղբյուրները վկայում են, թե ինչպիսի «Կոստանդին» որդի Առնի, որ մենամարտեալ ի միում աւոր ընդդեմ ահաւոր զազանացն՝ սուան զատիւծն իրքն զուլու այժեացա¹⁰²: Իսկ Վարդան Բարձրաբերդցին հազորդում է, որ «Ըսման է (Կոստանդինի մասին—Զ. Օ.) ասէին ի միում աւոր հօթն առիւծ սպանեալ»¹⁰³: Սա թերեւ արդեն առասպեկտային երանդավորում ստացած միևնույն իրողության վկայագրումն է: Ճիշտ այնպիսի, ինչպիսին և կիլիկյան քաջերից կիպարիտի քրոջ մասին սկատմող լւղենդն է: Մատնեազգության մեջ այն ավանդվել է այսպիս: «...Կիպարիսը ուներ մի քույր: Սա փախել էր մի զյուզ և դարձել էր ամուսնացած հիւնամյա կին: Այդ ժամանակ իսնայելացի մի ըմբիշ (փառվեան) հանդես դաշով առում է Սոր պարոնին (իշխանին), թե քո գավառից կամ քո զորքերից թեր ինձ նման մեկին, որովհազի զոտեմաքանչ, այլապես ուեաք է ինձ տաս քո երկրից հարյուր դաշնեկան կարմիր: Նոր (Սոր պարոնը) մարդ զգաւավ, որ կարողան: Արարի հետ գոտինարտելլ կիպարիտի քաջ քույրը եկավ և ասաց, — Ի՞նչ կտաք, եթի ևս ըմբիշին դիմուն դցեմ: Պարոնն առաւմ է, — ինչ որ որահանջիս, կտամ, եթե դիմուն դցեան երան: Կինը առում է, — ինչքան բամբակ շալակեմ, թող այդքանը ինձ լինի: Իշխանը հանձ է առնում (համաձայնում է): Երբ փառվեանը դաշիս է և տեսնում է հակայաձե կիոչը,

¹⁰² «Պատմութին Անեսզայ Ահար վարդապետի Հայոց», Ս. Պետրոսի, 1887, էջ 143:

¹⁰³ «Մեծին Վարդանայ Բարձրաբերդցուոյ Պատմութին աիզօքական», Հրատ. Մերակի Էմին, Մոսկա, 1861, էջ 121:

սարսափում է. բայց որովհենուկ (դիմացինը) կին էր, արշամարհեց նրան ու մերկացավլ փառվեանը, հետո հագալ յուր զղնստը, սկսեց խաղալ՝ ցուց տալով իրը, թե անարդում է ու տղամարդ է պահանջում, որպեսզի նրա հետ մարտնշի: Կինը առաջ դարձվ իր կանացի զղնստննրով՝ բըռնց փառվեանի երկու թևերից իր երկու ձեռքով և բարձրացնելով տարավ նրան իշխանի առաջ և երևսի վրա դրեց զետին փառվեանին ու մեկ ականջը պոկելով դեն նետեց: Ամենքը սարսափած հարցնում էին, թե առ որտեղից է և որ ազգից է: Թագավորը հրամայեց նրան տալ այնքան բաժրակ, որ շկարողանա շալակելի կնոջը բարձեցին մոտ հարցուր լիտր, ու նա առաջ ուրախությամբ զնաց իր տունը¹⁹¹:

Զիարձակարաններում ու թատրոններում ներկայացվող հանդիսանենքների արձագանքները հետք են թողել նաև վարքագրության մեջ: Այսպես, Գևորգ Սկևուցու վարքագիրն իր հերոսի պատանեկան տարինների մասին դրում է, «...Եւ եթ էի հասակով[ց] ացն հարստահարէր, շմեծարանէր, շարտմէր, շմախայր, շնախանձէր և կամ ոխս պահէր, այլ ի նոյն տիս ախոյեան և ըմբիշ մենամարտիկ ի կոփ հանդիսի բնդ քշնամտյն կանգնելը և խոնարհութեանն զինու զամբարտաւանութեան հայրն ընդ ոտիւր ի ստադին զգետնեալ՝ շնորհաւը աստուծոյ կործանէր: Այս առաջին հանդիսի մարտ սրբոյն Գէորգեայ ի սողայական խանձարբոցէն ի հիացումն տեսողացն երնէր»¹⁹²: Այնուհետև հեղինակը հարկ է համարում նշել, որ Սկևուցուն միշտ էլ հատուկ է եղել քաջ մենամարտիկի արիական ողին: «Եւ զանդիմական խաւարս ի մեծի հանդիսի աւուրս ի ճարակ ստադին, մենամարտիկ ի մէջ ուզմի բազում պատրաստութեամբ բանի կործանիշ մերոցս զսա ցուցին... Անդ էր տեսանել ի մեծ հանդիսին՝ կանգնեալ զմեծ նահատակն զքաջն ի մար-

¹⁹¹ Աշխարհաբար տեքստը բերում ենք բառ վ. Բգոյանի, Խշվ. աշխ., էջ 70:

¹⁹² Է. Բաղդասարյան, Գեորգ Սկևուցու «Հարքը», «Բաները Մատնազարդնի», № 7, Եր., 1964, էջ 197—198ա (ընդգծումները մերեն են):

տիւն¹⁹³, Մենամարտի հանդեսներով է ոգևորվել նաև Շնորհալին, երբ Հորդորել է իր քարոզներում. «...յոժարութեամբ մտածիցեմք ստադիոն մարտին առարկուած առնել ընդ շար ախոյանին»¹⁹⁴:

Եզ այսպես, ամփոփելով շարադրանքը հանդում ենք այն եղբակացության, որ միջին դարերում հունա-հռոմեական տիպի թատրոնական կառուցները կորցրին իրենց ֆունկցիոնալ նշանակությունը: Նրանց ընդհանուր նկարագրը՝ համապատասխանելով հեթանոս հառարակության կոռոնական և գեղադիտական հայացքներին, անհարիր էր քրիստոնեական զաղափարախոսությանն ու աշխարհայեցողությանը: Այդ ժամանակաշրջանում թատերա-տեսարանային հանդիսանքների համար իսաղավայր են ծառայել ոչ միայն քաղաքային կամ շուկայական հրապարակներն ու նախարարական տները, այլև կրկեսներն ու ձիարձակարանները, որոնք հայ միջնադարյան գրավոր աղբյուրներում հիշատակվում են նաև քարե կամ քառորդ տերմիններով:

¹⁹³ Խոյիկ ոռեղում, էջ 220_ր-221_{աւ}

¹⁹⁴ ԱՎ, ձևութեան Տ 2890, էջ 203_{բւ}

ԹԱՏՐՈՒՄ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԳԱԼԱՓԱՐԱԽՈՍՔԻԹՅԱՆ ՌԱՐՏՈՒՄ

Միջնադարյան բատրոնի պատմության մեջ XIII—XIII դարերը հշանակալի ցրչափուլներ ևն Բանն այն է, որ հենց այդ ժամանակաշրջանում է ձեւավորվել բուն միջնադարյան թատերդությունը, իսկ զրան զուգահեռ ֆեոդալական հասարակության պաշտոնական գաղափարախոսության ոլորտում արմատացել է թատրոնի զիտակցման մի նոր որակ: Մերժելով թատրոնը, ասել է թե՝ անտիկ աշխարհից ժառանգած տեսլարանալին արվեստը, հոգնորականությունը մասամբ իր նախաճանանությամբ, մասամբ էլ իր կամքից անկախ ընտրել է եկեղեցական հանդիսակարգի թատերականացման ուղին: Եկ թեպետ միջին դարերում (ինչպես և անտիկ ժամանակներում) դրամատուրգիական մտածողությունն ըստ կը պրնապես խարսխվել է պաշտոնության արարողակարգի վրա, սակայն նրա հետագա բարելլբանն պրոցեսն ընթացել է երոնակուն թևմաների ու շիստրականացման և ժիշտական տարրերի աստիճանական կազմակուծման շավիզով: Այս երևույթը որոշակի գծագրվել է արդեն XIII դարում, երբ հրապարակ են եկել առաջին միրակներն (հրաշապատում) ու միստերիաները, երբ եկեղեցական պաշտոններությունները կանոնին թևմաների կողքին տեղ են գտնել պարականոն դրայցն ու վարքագրությունը, առասպեկտապատռմն ու առակը, այսինքն այն զրամասիկական զործերը, որոնցից գեղակի սենեկանացմն դրամատուրգիան անցնելու ամար ան-

Հըրաժեշտ եղավ կատարել ընդամենը մեկ վճռական քայլ՝
վերականգնել անտիկ մշակույթը:

Միջնադարյան թատրոնի զարգացման այս ծանոթ
աւտոկերպ հասկանաշական է համարվում գերազանցապես
արևմտահվառուական մշակույթին: Սակայն առ այսօր տա-
կավին լուսաբանման կարիք ունի այն հարցը, թի արգյութ
հայ միջնադարում պաշտօնական ծիսակարգի թատերակա-
նացման միտումները սահմանափակվել են պատարադային
գրամայի շրջանակներում, որի նկարագիրն ավանդաբար
մնացել է անփոփոխ և պակաս թատերային է, քանի որ
պրամատիկական չէ և մանավանդ ինքնուրույն չէ որպես
արվեստ՝ աղաւան չէ թեմաների ու արտահայտչամիջոցների
ընարության մեջ¹:

Ա. «ԴՈՒՐԱՏԵՐԻ» ԱՐԱՐՈՂԱՆԱՐԳԸ ՈՐՊԵՍ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՑԹ

Միջնադարյան միստերիալ թատրոնի ակունքներում,
պատարագային (լիթուրգիական) գրամայի կողքին, կանգ-
նած է նաև «Գալուստ յերուաղիմ» տոնի հանդիսավոր ա-
րարողությունը²: Եկեղեցական այս տոնակատարության ծի-
սակարգը հայ իրականության մեջ ևս աշքի է ընկել իր ընդ-
զգված թատերային նկարագրով: Խոսքը վերաբերում է
Սաղկաղարդի երեկոյան տեղի ունեցող հանդեսին, որը ժո-
ղովուրդն անվանել է «Դուրացեր»:

Ուշագրավ է, որ ժամանակին այն խաղարկել են եկե-
ղեցու բակում³: Այս էական հանգամանքն անտեսել են և
դարեգին լնոնցանը, որ առաջինն է դիտել «Դուրացեր» որ-

¹ Հ. Պ. Համբուլիսյան, Աշխ., աշխ., էջ 20:

² Հ. Ի. Ստորօնկո, Օգերք իշտուածական լի-
տերատուրա, Մ., 1910, ստ. 20.

³ Տե՛ս «Տաճացոյց», էջմասին, 1857, էջ 44:

պես թատերական երևույթ՝, և՝ Գևորգ Դոլյանը՝ Մինչդեռ, թատրոնի պատմությունից մնենք զիտենք, որ պաշտոներդության թատերականացման նշաններն իրապես դրսորվել են, երբ պատարագալին դրաման եկեղեցուց դուրս է եկեղեցակայտին բացօթյա հրապարակում, ուր միջավայրին ավելի նորաստավ էր էր կղերական մոտիվների հետագա աշխարհիկացման և ծիսական ձեւը գեղարվեստական տարրերի հետ զուգորդելու համար։ Ուստի և ժամանակի ընթացքում այդ հանդիսաներից շատերը վերաճեցին իսկական թատերական ներկայացումների՝ միստերիաների։ Այս կապակցությամբ, նախքան «Դոնիքացեքի» արարողակարգին դիմելը, կարծում ենք, տեղին է հիշատակել նման բացօթյա տոնահանդեսներից մի նմուշ ևս, որը նույնքան ուշագրավ է իր ճոխ թատերային նկարագրով։ Այսպես, Ղևոնդ Ալիշանի «Սիսուան» երկում արձանագրված է հետևյալ իրողությունը.

«...Ոչ է մոռանալ և զհրճուական հանդեսս զոր համաշխարհի ժողովրդեանն կարգեաց ի վայելս, որպէս ի դէպ ասել՝ բազմօրեայ աւուրբք. այն զի ի մեծի տօնի Յայտնութեան Տեառն հանդիպեցաւ և կարգ օժմանն ի թագաւոր. յորում սովորութիւն էր ազգիս ի վաղ ժամանակաց, աշխար-

4 Գ. Անոնյան, նշվ. աշխ., էջ 76—82, Պատարագային գրամային քանի թանիքներ՝ «Դանիելիան», «Հմետար» և իմաստուն կույսերը, Շնոտելվան, դրանց թվում և «Դոնիքացեքը», Գ. Լևոնյանը բերել է միունքան անվան առկ (Խուն տեղում, էջ 95—111); ժամանակին և. Թալանիթարը (ան'ս նշվ. աշխ., էջ 63—64), իսկ հետագայում նաև Հ. Հովհաննիսյանը (ան'ս նշվ. աշխ., էջ 20) նշել են, որ դա պարզապես անբարենքան սխալ է, եթր խոսքը վերաբերում է պատարագային գրամայի ցիկլերին, ապա միաներին անմանումն իրաբ որ ճիշտ չէ։ Սակայն նշված ցիկլերից «Դոնիքացեքը» առանձնանում է, քանի որ նրա սյուժեն բազկած չէ ոչ ավելատրանական պատումներից, ոչ էլ մի սրբ այլ կանոնիկ տեքստից։ Վերջին դատաստանը ներկայացնող այս արտաբակարգը բացառիկ երևույթ է թէ՛ իր զրամատիկական կառուցվածքով, և թէ՛ իր բովանդակությամբ, ուստի, կարծում ենք, այն լիբեն մոտ է կանգնած միշնագարյան միտոներիաներին։

5 Տե՛ս Գ. Գոյանն, նշվ. աշխ., Համ. 2, էջ 133—141։

Հայուսմբ տօն ցնծութեան կատարել, ևս և եկեղեցական
օրինօք, Զրօքնեաց արարողութեամբ, ընդ նմին քաղաքա-
կան հանդիսիւ և պէստէս զրօնանօք, որոց առաջին մարթ
է զրել զղօրահանդէսն, զոր ոչ խափանէր, այլ մանաւանդ
յորդորէր եղանակ երկրին կետնի, մանաւանդ զի ի Տարսուն
ի շերոտ ծովակողմն՝ կատարեցաւ հանդէսս այս մեծ, ուր
զրեաթէ շերեփ ձմեռն, և բարեխառնագոյն յայնժամ են օդք
քան ի գարնանայնի և ամարանի: Չիք երկրայն զի շքեղա-
դոյն յոյժ եղեն ամենայն հանդեսք յայսմ ամի տօնի Զրօք-
նեաց և պսակման կետնի, քանի որ յգինիսն, զորոց զմիոյ
ընծայէ մեզ նկարագիր՝ եկ ոմն օտարական ի խորոց Գեր-
մանիոյ, յերկրէ Հաննովրի, Վիլեպրանտ ազնուական Օլ-
տէմպուրկցի, յամի 1212 գտնալ յարքունիս կետնի ի Սիս
և ի հանդիսի անդ. զորոյ արժան համարիմ առ տեղեաւս
թարգմանել զբանս. «Յաւուր տօնի Յայտնութեան Տեառն,
զոր Հայք Մկրտութեան կոչեն, ժամանեցաք ի Սիս, յոր
հրաւիրեալն էր զմեզ թագաւորին՝ կատարել զհանդէս տօնի
իւրոյ... ի ծագել առաւօտուն՝ փութային ամենեքեան երթալ
ի գետ անզր, որ առ երի քաղաքաւանին, ուր իշանէր և Տէրն
արքայ այսու կարգաւ. ինքն հեծեալ էր յերիվար բարձրա-
պարանոց. յաշմէ և յահեկէ նորա երթային կարգապետ
(մայստր) տանն Ալամանաց, և բերդապան Հիւրատանն Սի-
լեւկիոյ, դասուր հաղար արանց կրօնաւորաց ընկերաց իւ-
րեանց. զհետ նոցա՝ Պարոնն Ռուբէն՝ կրտսերն թագաւոր,
(զոր՝ որպէս կանիսաւ ասացի, Ռթոն կայսր Հռովմայեցոց՝
ըստ խնդրոյ աւագ թագաւորին՝ պսակեալ էր սակաւուր
յառաջ), և դասք դասք ազնուաց երկրին և բազմութիւն զօ-
րականաց՝ վայելլապէս զգնսպաւորեալք. զորոց՝ արբա-
նեակք նոցին կրելով՝ ի ձեռս զնշանս և զզրօշս, և ածելով
զերիվարս նոցին պալարակապս, երթային յառաջոյ մեծի
թագաւորին. իսկ ընդ մէջ սորա և նոցա՝ ընթանային դունդ
զունդ զինակրաց փայեկաց՝ անձնապահը թագաւորին. և ա-
մենայն բազմութիւն ժողովոյն մեծաձայն աղաղակաւ ող-
ջունէր զնա՝ կոչելով, Սուրբ Թագաւոր... Զկնի սոցա դային

ի հետախոսութեանը Յոյնք զգեստաւորնալք, ուատրիարքաւ իւրեանց, և բազում սրբազն սպասութ և այնքան մեծ լինեց ձայն հեղման փողոց և այլոց Երաժշտական գործեաց, զի հանդէս իմն քան թէ թափոր թուիին յարդարել... Յետ այնորով իջանէք վայելլապէս զաս ուխտի եկնզեցւոյն Հայոց՝ զիսաշ մկրտութեան բարձեալ, հանդէրձ արքնայիսկոպոսան, հեղադէմ կերպարանօք և բարտօք... Եւ ի դումարեալ ամենայն խմբից հանդիսին ի մի վայր, և զաս առ զաս եղանակեալ, տեսանէաք յուժգնակի հնչել նոցին՝ զալիս երկայն մորուացն իրեն օդալիցս իմն ծփեալս ի վերայ կրծոցն, և ընթառնելով աւետարանս և բուզիւ առաջելանուն ի յոյն և ի հայ լեզու, և զերպարանեալն Յորդանան օրհնելով, զիսաշն՝ զոր բերեալ էին՝ մկրտէին ի ջուր, և յաշմէ կողմանէ արձակէին աղաւնի մի՛ Յայնժամ հեծեալ ոմն ի յաւանակ՝ յառաջեալ իշեալ ի մէջ գիտոյն, կանգուն կալով՝ վերագոչէք շաքարուացյն բարբառով. Կեցցէ Թագաւոր մեր յափտեան. և դարձեալ, Զորարիւն և հաստատուրիւն ամենայն Երիտոնէց. և ի մշաճայն պատասխանի առնել բազմութեանն՝ աղադակելով, Ամէն, յառաջադէմն այն յաջ և յահեակ զալիս ջուրցըն հերձանէք. Ընդ որ ոչ սակաւոք քրթիջ բարձին: — Ապա թագաւորն և այլք՝ ցողէին զինքեանս ջրովն. իսկ Ասորիք մերկացեալք ընկնուին ղանձնինս ի չոր: — Եւ ի կաստարեալ այսոցիք ըստ օրինի, զասք եկեղեցականացն դառնային ի վանս իւրեանց. իսկ թագաւորն և զօրականք ի գաշտ անդր գիմէին և պալարակերպ երիվարօքն արշաւաւակի վազս առեալ՝ նիզակամօն նիզակարեկ խողու առնէին զինուսրականս. և զրովանդակ զօրն զայն մեծաւ ցնծութեամբ խրախացան. իսկ յերկրորդումն աւուր այր իւրաքանչիւր դարձաւ ի տեղի իւրա:

Ահա, թէ ինչպիսի վեհաշուր հանդեսի է վերածվել կիլիկյան հողի վրա Հրօռհնեաց տանբ: Եվ ինչպիս տեսնում ենք, դրան թիւ շէ օժանդակել նաև միջավայրի նպաստավոր

մինութեարտը: Եկեղեցու վերացական ալայմանականություն-
ներից դուրս՝ շրջապատի իրական հանգամանքների թեւա-
զրաւութով էրտուանիւսիւսկան տրամադրությունները տեղի
են ավել աշխարհիկ դրաբմանցների վրաւուրմանը, և արա-
բուղության խստարարութ ծիսակարգը զուգակցվել է հրապա-
րակային խրախճանքի թատերայության հետ: Ուշագրավ է
նաև այն իրողությունը, որ, հենց, Զրօրանյաց տոնի համար
զբանական Քահակապունու (Փոքր Վկայասեր կաթողի-
կոսի) «Ո՞վ զարմանալիք նշանավոր տաղը նույնպես ա-
ռահձնանում է իր ընդգծված թատերային հատկանիշներով:
Նիկողոս Թահմիզզանը գրում է, որ այն աժամանակի ըն-
թացքում մեծապես սիրվել, լայնորեն տարածվել ու դարձել
է համապատասխան ծիսակատարությունների երաժշտական
կենարանական համարը.. Թատերականության տարրերով
հաղեցած և բարսանության ու դժմանության վարպետ կի-
րառումներով աշքի ընկնող քերթվածք, ամբողջապես առած,
ըացառիկ գեղեցկության և ներգործուն ձայներով հարուստ
մի պատկեր է, ուր տեսանելի է երագարներով բացահայտվում
է Մկրտության խորհրդի վերին իմաստը»: Փոքր Վկայասե-
րի այս ստեղծագործությունն ունի մասամբ գիտություն
կառուցվածք, ուստի էարելի է որատկերացնել, թէ նրա եր-
դային վերաբարումն ինչպիսի կարևոր թատերային երանդ
պետք է հաղորդած լիննը Վիլերբանդ Սլդեմբուրդու նկա-
րադրած տոնական հանգեսի ընդհանուր արարողությանը:
Ընթերցենք այդ տաղը.

«Ո՞վ զարմանալիք ի արհուց այս ժեծ յայտնեալ,
երարին Աստուած ի Յորդանան եկեալ:
Իամէլքը շրկերամի ի ժամանակ իւրէէ
Չունուր Կարաչկան բգնիկուրուի ի յանձն:

Յարդանան յրէնոյ զեսիրաստկան դառնայք,
Վլոտակ առ վրանոյ ուստափամ շատը լինէք:
«Դիմ ԺԷ՛ Ասրաւուիր, քո արարին եւ հա
եկաւ սրիցը առ եւ յանձնամ բշահուս:

⁷ Յ. Խ. Շահման, Գլուխյան Նարեկացին և Հայ Լրացւառությունը
V—XV դժ., Երևան, 1885, էջ. 242—243.

Յիսուս յարաջնաց պատռածութեամբն ի զորն
Հանգնրծ Յովանեաւ Յիսուս ի զնան և մռաւ:
Երկներ պատռահաւը, ձայն ի յերկնից իշխալ,
Զայն Հօր ի բարձուց Ռոդոսի իւր վրկայիկաւ:

Դա է իմ Արդի ընդոր Համեցա առէր,
Դաս լրաբուք որդիք մարդկան ձայնէր:
Սուրբ Հոգին իշխալ ազաւնակերուզ տեսչեամբ,
Տայտեաւ ցուցանէր Հօր փառակից զՄրդին:

Արդ արշեաւ է Հայր, և համագոյն Արդին
Հոգւան ճշշմարտի փառք յախտեանս ամէնու:

Երբ գուսանական արվեստը զննելիս վերլուծում էինք
Կեռն Գ թագավորի գերեվարմանը նվիրված տաղը՝ տեսանք,
որ հայ աշխարհիկ պրոֆեսիոնալ երգարվեստը կիրիկյան
շրջանում նկատելիորեն ձեռք էր բերել դրամատիկական
գծեր: Դատելով այժմ մեջբերված տողերից՝ պետք է ասել,
որ միանույն երնույթը հատկանշական է եղել նաև հոգևոր
պոեզիային: Ինչպես վերը նշվեց, ժողովրդական լայն զանգ-
վածների միջավայրում կրոնաբարոյական համոզմունքներ
սերմանելու նպատակով, ներսին Ծնորհալին կարողացել է
շահեկանորեն օգտագործել դուսանական թատերարվեստի
միջոցները: Նրա զրական և երաժշտական ստեղծագործու-
թյուններից շատերը հայ ժողովրդական բանահյուսության
և երգարվեստի ոճական կնիքն են կրում, ինչպես, օրինակ,
«Յիսուս որդի» ողբերգությունը, որը ժամանակին եղանա-
կով՝ ասերգի ձեռվ պատմվել ու հատվածարար նաև երգվել
է, այսինքն ավանդվել է միշտ «Սասոնցի Դավիթ»
վեպի նման: Իսկ աշա այս դեպքում, Ծնորհալու ավագ եղ-
բոր՝ Գրիգորիս Պահապանու շնորհիվ, զրամատիկական եր-
կասիրության տարերը թափանցել են արդեն բուն պաշ-
տոներգության ոլորտը:

Այսպես աստիճանաբար կարծես նշմարվում են միջ-
նադարյան հայ եկեղեցական ծիսակարգի թատերականաց-

= Ն. Թաշնյան, Զայնապրեալ Երդեցողութիւնը Արբոյ Պատարագի, Վա-
զարշասպատ, 1878, էջ 209—213:

* Ն. Ա. Թամմիլյան, Ներսին Ծնորհալին երգանան և երաժիշտ, էջ 32:

ման միտումները, որոնք վառ կերպով և թերևս առաջին հերթին դրսելով են «Դոնբացնքի» արարողակարգում:

Սազկազարդի երեկոյան «Հայր գլխած» աղոթքի ժամանակ պատվավոր քահանաներից մեկը շուրջառ էր հագնում և մոտենում հեկեղեցու դռանը: Այդ պահին ընթերցվող սաղմուի վերջին տողերն էին, «Բացէք ինձ զգրունս արդարութեան, զի մտից ընդ այն՝ և խոստովան եղէց Տեառն¹⁰: Սկսվում էր «Դոնբացնքի» նախերդանքը: Դպիրների խումբն երդում էր «Ենորհեայ մեզ տէր» շարականը.

Ծնորչեայ մեզ աւը արթնելիին ընդ իմաստուն կուտանացն:

Եւ զնուցոց մերոց լավագերա պայծառացոր:

Երկնշիմք ի քնչ աւը զարութեալը ի պատասխանույն,

Զամէնն ելլի ոչ զիտեմք զբազ:

Յորժամ գամ փառօք Հօր գտանէ զտիկերժ ամենայն:

Ծնորհեայ մեզ ուր կաչ ի բարձէ քումմէ:

Բացցի մեզ գունե ողորմութեան երկնային փեսացին,

Եւ մուցուք և յառագաւստ ընդ իմաստուն կուտանան:

Բացցի մեզ գունե ողորմութեան երկնային փեսացին,

Եւ մացուք ի յառագաւստ նորա:

Զի մի՛ միասցաւք արտօրք որպէս զբիմաք կուտանսն:

Պայծառացին լավագեր հոգոց մերոց:

Եւ բազմեցուացիս զմեզ ընդ հրահրեալոն

Ի կոշումն արակըոթեանն երկեից¹¹:

Ավագ Երեքարթի օրվա շարականն էր այս, որից էլ սկիզբ էր առենում բուն «Դոնբացնքի» արարողությունը:

Եւ յաւարտիլն (վերը բերված «Նախերդանքի»—Գ. Օ.), սկսանիցի ասել զգեցեալ բանայն աղիսորմ ձայնիւ. Բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր, բա՛ց մեզ, Տէ՛ր զդուն ողորմութեան. որ ողբալով կարդամք առ բեզ:

Եւ մի ոմն ի բանայիցն պատասխանեալ ի ներքուստ ասիցէ. Ո՞վ են սորա զի բացից. զի այս դուռն Տեառն է, և արդարք մտանեն ընդ սա՛:

Եւ բանայն արտահուստ ասիցէ. Ո՞չ թէ միայն ար-

¹⁰ «Տօնացոյց», էջ 46:

¹¹ «Եղբական Հոգեար երգոց», Կ. Պոլիս, 1853, էջ 275—276:

դարք մտանեն, այլ և մնջաւրը՝ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ արգարացեալը մտանեն ընդ սա՛:

Ի ներքուսա ասիցէ. Զի սա՛ է դուռն երկնից և չույս արամաւթեան զոր ուխտեաց Աստուած ձակորայ, արդարաց հանգստ, մեղաւրաց ժաւարան. Քրիւտոնի արքայ ըսն, Հրեշտակաց ընակարան. սրբոց ժողովարան. տեղի ապամփնի և տուն Աստուծոյ:

Քանիանայն արտաբուատ. Արժան է Հշմարիւտ են այդուրիկ դորս ասեսդ վասն սրբոյ եկեղեցւայս. քանդի սա՛ է մեղ մայր անարատ. և սմանէ ծնանիմբ սրդիթ լուսոյ և ճշմարտութեան. և սա՛ է մեղ լոյս կենաց. և սոքաւ գտանեմբ զփրկութիւն հոգւաց. և զի սա է մեղ ճանապարհ արդարութեան. և սովաւ ելանեմբ առ Քրիստոս հայրն մեր երկնաւոր¹²:

Այսուհետև կրկին ճանդեմ էր գալիս զպիրների խումբը. Երգում էին «Խմաստուն կուսանք» շարականը, որ դարձեալ վերաբերում է իմաստուն և հիմար կույսերի պատմությանը. Բատ այց շարականի բովանդակության, զպիրներից կազմած երգչախումբը ներկա գտնվող բոլոր հավատացյալների աշունից հավասարիացնում էր, որ պատրաստ են վառվաշխատներով մանելու անմահ փետություն առադաստը. և ի վերջո մեղքերի թողություն էր խնդրում երկնային թագավորությանն արժանի դառնալու համար:

Եւ յաւարախին՝ սկսանիցի բանանայն արտաբուատ. թա՞ց մեղ, St' ր. բա՞ց մեղ, St' ր, բա՞ց մեղ, St' ր զուռան. ողուրմութեան. որ ողբարդով կարդամբ առ քեզ:

Ի ներքուսա ասիցէ. Ա՛ա՛ տեսանեմբ զՏէրն մեր Քրիստոս որ բաղմեալ կայ ի վերայ սրբոյ սեղանոյն, և կռչէ առ ինքն ըզկամարարս իւր ասելով, թէ՛ ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի:

Քանիանայն արտաբուատ. Գին եմք անապական արեան Որդույն Աստուծոյ. ընծութեամբ օրհնեսցուք զփրկիչն մեր

¹² Հանացածք, էջ 45:

Քրիստոս, և առասցուք ամեներեան. փառք սոսկալի գալրս-
տեան յում *Sէր*¹²։

Այս տողերից հետո երբորդ անգամն էին հանդիս զալիս
զպիրները և երգում սթաղաւոր փառաց քեզ սպասեցուք»
շարականը։ Ինչպես նախորդ խմբերդի ժամանակ՝ Հիմնա-
կան թեման «Խմաստուն և Հիմար կույսերի» ռուսներն էին։ Խյա-
տեղ ևս վերստին ամվում էր, որ արթնությամբ պետք է
սպասել «Փառաց թագավորին», որը զալիս է դատելու,
ուստի և բոլոր հավատացյալները թող վառ պահեն իրենց
հոգու լապտերները, փեսայի առաջասար մտնելու իրավունք
աւանալու համար։

Քանիանայն արտահուստ. Բաց մեզ, *Sէր*, բաց մեղ,
Sէր, բաց մեզ, *Sէր* զդուռն ողորմութեան, որ ողբալով
կարդամք առ քեզ։

Ի ներբուստ. Փողն ահաւորին Աստուծոյ՝ ահազին ձայ-
նիւ զոշէ ասելով, ահա փեսայն դայ՝ արի՛ք ընդ առաջ նորա,
եւ բանանայն արտահուստ անիւ և դողութեամբ ասաս-
ցէ. Ահա՛ Էս և մանկուր իմ, զորս Էս իհձ Աստոււած. Լումբ ու-
մեներեան և ակն ունիմք տեսոյն Քրիստոսի և լսելոյ ղերա-
նաւէտ բարբառն նորա։

Ի ներբուստ. Զայն արարշին Աստուծոյ զոշէ ասելով.
Ակա՛յք օրհնեալք Նօր իմոյ՝ ժառանգեցէ՛ք զպատրաստեալ
ձեղ զարբայութիւն ի սկզբանէ աշխարհի։

Եւ ապա բանանայն արտահուստ ասացէ. Բացէ՛ք իհձ
զդրուս արդարութեան. զի մաից ընդ այն և խոստուլան
եղէց *Sեառն*¹³։

Որից հետո զոները վերջապես բացվում էին և ներկա
զոնվողների ողջ թափորք, «Զողորմութեան քո զուռն բաց»
շարականը երդելով, մտնում էր հկեղեցի։ Այդ նույն պա-
հին բացվում էր բնմի, վարապուլըն ու հավատացյալներին

12 Նո յն ամըում։

13 Նույն օճակում, էջ 47։

Ներկայանում էր շքեղազարդ մի պատկեր՝ որախտի խորհրդանիշը:

Այսպիսին էր կատարած ի դալսոյան և ահեղ դատաստանի խորհուրդը կրող եկեղեցական հանգեսը, որ ժողովուրդն անվանել է «Դուերացեցը»:

Հայ միջնադարի թե՛ կանոնական՝ եկեղեցական-քրիստոնեական պաշտոներության, և թե՛ պարականուն՝ արտաեկեղեցական կամ ժողովրդական հեթանոսական մեզ հայտնի ծիսակատարությունների շարքում թերեւ շառանձնանա այնպիսի մի նմուշ, որը նույնքան ընդդժված թատերական նկարագիր ունենա, որբան դա հատուկ է «Դուերացեցին»։ Երևույթը ուշադրավ է նախ այն պատճառով, որ արարողության ժամանակ ընթերցվող աեքստու ունի զրամատիկական երկի կառուցվածք՝ զրված է տրամախոսության կիրառումով և երկիխոսություններին կից կան ուժարկներ (նշագրումներ)։ Երկրորդ էական հատկանիշը՝ նրա այուժեային հորինվածքն է, որի նախատիպը միջնադարյան զրականության մեջ հայտնի չէ։ Այս առանձնահատկություններն առավել նշանակալից են դառնում, երբ փորձում ենք դիտել «Դուերացեցի» արարողակարգը հին և միջնադարյան թատրոնի պատմության կոնտեքստում։

Ինչպես ժամանակին դիպուկ նկատել է Օլգա Ֆրեյդենբերգը, զործողությունը պարերգային դրամայում որպես կանոն ընթանում է «զուների» կամ «մուտքերի» առջե¹⁵։ Ավելացնենք, որ զրա հետքը որոշակի զրոշմվել է նաև անտիկ թատրոնի կառուցվածքի վրա (տե՛ս նկ. 12, 13). օրինատրային հառող սկենեն, իսկ հետագայում նաև պրոսկենիումի ետնապատը ունեցել են երեք դուռ, ընդ որում միշինը կոչվել է «արքայական»¹⁶, թէ ինչո՞ւ այդ հարցին մենք դեռ կանգրադառնանք։ Այժմ մեզ զրադեցնում է այն խնդիրը, թէ զրանք ի՞նչ դեր են կատարել տվյալ ժամանակաշրջանի բնմադրական համակարգում։

¹⁵ Ս. Մ. Ֆրեյդենբերգ, նշվ. աշխ., էջ 305.

¹⁶ Ս. Մոկուլսկի, նշվ. աշխ., էջ 22։

Հայտնի է, որ V դարի հունական թատրոնում ժամանակակից լուսաբառը բարձրացնելու գործության միջոցներ չեն կիրառվել։ Դործողության նյութական միջավայրը հիմնականում լրացրել են օրինատրային կից գտնվող պատը՝ սկիզբնեն և մեկ էլ նրա երեք գուները, որոնք միաժամանակ ապահովեն են զերակատարների ելքն ու մուտքը։ Ընդհանուր առմամբ՝ այսպիսին էր նրանց ուստիլիտար նշանակությունը։ Սակայն այս ակներեւ հատկանիշն ի վերջո բխում էր պարերգային դրամայի արարողական էությունից, որի ակունքներում էլ փնտրենք մեզ հետաքրքրող խնդրի լուծման բանալին։

Ի՞նչ է իրենից ներկայացնում հին հունական դրամայի ֆարուկան (լուսուց)։ Բայտ դրամայի արիստոտելլյան տեսության, ամենից առաջ՝ իրադարձությունների հորինվածք։ «Մեղանում, — գրում է Վ. Յ. Յարիսոն, — «դրամա» աներմինը բնողություն է թարգմանել «զործողություն» բառվ, թեև, եթե խոսքը ֆիզիկական դործողության մասին է, ապա «իլիականի» մեկ երգն ավելի հարուստ է այդպիսի գործողությամբ, քան էսքիլեսի բոլոր ողբերգությունները միասին վերցրած։ Ի պարերություն հունական այլ բայերից, որոնք ենթադրում են կոնկրետ, գործնական նպատակին հասնելու արարմունք, «դրամ» բայլը, որից էլ առաջացել է «դրամա», նշանակում է զործողություն իրրեւ խնդրի՝ պրոբլեմ, և ընդգրկում է այնպիսի մի ժամանակահատված, երբ մարդը նպատակադրվում է զործնական ուսեւ հայլ կատարել՝ ընտրում է իր նետազա վարժագիծը»¹⁷։ Հիրավիր, դասական շրջանի անտիկ հունական դրամայում արտաքին զործողության մղող երկխոսությունները հույժ սակավադեպ ենու Այդ է թելադրել ժամանակի թատրոնական համակարգը։ Պարերգային թատրոնում դրամատիկական իրադարձությունների մասին միայն անդեկացնում էին, և ապա ներկայացնում դրանց

¹⁷ В. Н. Ярхо, Образ человека в классической греческой литературе и история реализма. «Вопросы литературы», 1957, №5, стр. 73.

հետևանքը, կամ էլ այն իրավաձակը, որը սկզբ էր առնելու մի նոր իրադարձություն՝ Այստեղ, Հանդիսական, անսահմաշտում, Հերոսների դրանական արարքները միայն քննության էին առնվում, և ոչ թե խաղարկվում՝ կերպարությամբ:

Այլ կերպ ասած, անտիկ թատերագիրները դրամայի դիմովածաշաբարը Հորինելիս դործողությունը՝ իրադարձությունների Հորինվածքը, որոշակիորեն կառուցել էն երկու հարթությունների վրա. մեկը՝ իրական, Հանդիսականըն տեսանելի, որը վիճարկվում էր Հերոսների վարքագիծը, մյուսը՝ երեսակայական, նրա տեսադաշտից դուրս գտնվող, որը ծավալվում էր դրամայի Հիմնական գործողությունը: Եվ Հենց այս երկու հարթությունների մեջն էլ կանգնած էր սկզբն իր երեք դռներով, որոնք ոչ միայն զատում էին այդ հարթությունները, այլև կապակցում իրար: Փաստորեն դրանց օգնությամբ են Հեղինակները հաղորդականից դարձրել Հանդիսականին այն իրադարձությունների Հետ, որոնք, վերջին հաշվով, գուտ հնթագրվող էին:

Իսկ մի՞թե Հենց սա չէ թատերականություն առվաճն ընդհանրապես: Մի՞թե այս նույն ինքիրը չի ժառացել թատերագիրների սոցե լուսութամունքում: Ել լիրէս բնավլ էլ պատահական զուրադիպություն չէ, որ ժամանակակից բեմի Հայելին նույնպես անվանել են պորտալ (portale), այսինքն դուռ, մուտք, դարպան: Եթե փորձենք էլ ավելի խորանար թատրոնի պատության մեջ, ապա զոցի և դռնենք դրա արինետիպն այն խորհրդապաշտական արարողություններում, որոնցից էլ սերում է հնադույն պարերգային դրաման: Սակայն զա արդեն մեր ուսումնասիրության շրջանակներից դուրս գտնվող խնդիր է: Ոչ մի կատած, որ անտիկ թատրոնը, գեներուկորեն կապված լինելով ավյալ ժամանակաշրջանի կրոնածիսական միջավայրի՝ Հետ, այլ հատկանիշների թվում՝, նշված առանձնահատկություն-

¹⁷ Անորիկ Հանձնական թատրոնային թատրոնի ծագումնարանության մերայնքաւ մակրութան մեջ՝ Պելոպոնի, հշտ. աշխ. էլ 11—12:

եր ևս ժառանգել է այնանդից: Հերչապնա, շէ՛ որ պաշտամունքային տաճարի մուտքն արդեն խորհրդանշել է այն սահմանագիծը, որը բաժանում էր սպատկերվող աշխարհն։ Իրականից: Այդ սահմանագիծն անցնելու իրավունքը շնորհվում էր միայն ընտրյալներին, ինչպես, առնեք, կլասինյան միատերիաների մասնակիցներին, որոնց հանգիստակարգն արդեն ժամանմր մեզ ծանոթ է: Արարողության ժամանակ, ըստ բնմավորված առասպելապատումի, նրանք նախ՝ պիտօք է անցնեին սահմանամետի խորիսորատներով (այդ էր հնիթագրում սարսափ հարուցող պատկերներով ու առարկաներով կահավորված սրահը), որից հետո անսպասելիորեն բացվում էին դռները և նրանց առջև ներկայանում էր հրաշավայլ մի տեսարան՝ «բացահայտվող» մի նոր աշխարհ¹⁹: Կարծում ենք, որոշ տիպարանական ընդհանրությունն էաւ նկարագրված այս պատկերի և պահապահացի վերջին դրվագի մէջին կամ, գուցե, ավելի ճէշտ կլիներ, եթե աշխինք՝ «Դռնբացերի» և էւսինյան միատերիաներին նմանօրինակ այն խորհրդապաշտական ծիսակատարությունների՝ միշտ, որոնք տարածված են եղել եթանոսական Հայաստանում:

Այսպիս, Մ. Երմանյանի կարծիքով, «Սաղկազարդը հին հեթանոսական տօն մըն էր Հայոց մէջ, նման վարդավառ անուան, որ ժամանակներու և պարագաներու նմանողութեամբ Դալուստ յԵրուսաղէմ տօնին հետ խառնվեցաւ, և մէկին անունը միւսին տրուցաւ»²⁰: Սաղկազարդի տոնակատարության արարողություններում հեթանոսական աշխարհից ժառանգված խորհրդապաշտական ծեսերի վերապրուկներ է դիտում նաև նիկողայոս Աղոնցը²¹: Սակայն այդ ծիսակատարությունների մասին մինչք կոնկրետ ոչ մի տեղե-

¹⁹ Խ. Խ. Նովոսարդսկի, Եղջ, աշխ., էջ 27:

²⁰ Մ. Երմանյան, Սիմական բառարան, Անթիւհաս-կրտանակ, 1957, էջ 25.

²¹ Խ. Աղոնց Շողոմակից ուսումնական բարձրագույնություններ, Թարիք, 1948, էջ 228—229:

կություն չունենք, ուստի և հանձն չենք առնում դրանց մասին դատելու նշենք միայն հասկալալը. ինչպես զեռ անցյալ դարավերջին անգլիացի ազգագրագետ էղուարդ Բելլորը բազմաթիվ օրինակներով ապացուցել է, դարձաս կամ պորտալ հասկացությունն այն կիզակետն է, որ, վերջին հաշվով, ի մի է բերում շոշափելի աշխարհն անշոշափելի՝ միստիկականի հետ առնշակցող բոլոր տեսակի կրոնական ուսումնաբները²²: Հետևաբար՝ և դրանց համապատասխան ծիսակարգը:

Դա, ի՞նչարկե, այդպես է: Սակայն կրոնը մնում է կրոն, իսկ արվեստը՝ արվեստ: Մեկը հանգեստ է գալիս որպես մարդկային գիտակցության կազմակերպիչ գործոն, մյուսը և՛ կազմակերպիչ գործոն է, և՛ մարդկային աշխարհներակալման գեղագիտական դրսերումն է: Եթե դրամատիկական արվեստի ձևավորման նախնական փուլում թատրոնն ու ժեսը սերտորեն են հարաբերակցում միմյանց, ապա միայն այն պատճառով, որ թե մեկի, և թե մյուսի արարողական համակարգում առանցքայինը գործողության միջոցով ընկալվող իրավիճակների պայմանական վերաբերացրումն է: Այստեղ է, որ նրանք կարծես նույնանում են, և հենց այստեղից էլ սկսում են առանձնանալ նրանց ճանապարհները:

Այսպիսով, թատրոնի պատճության հիմքույն շրջանում, մասնավորապես, անտիկ հունական պարերգային դրամայի բեմադրական համակարգում առաջնակարգ դիրէ հատկացվել քրացվող դռներին: Դրանք փաստորեն այն կամուրջն էին, որը զալիս էր կապակցելու իրապատում միշավայրը՝ հանդիսականի տեսադաշտից դուրս դանվող աշխարհի հետ: Բնմարվեստի այս առանձնահաշտկությունը զիտակցվել է զեռուս խոր անցյալում և որոշակի հետք է թողել անտիկ թատրոնի կառուցվածքի վրա:

Ինչպես վերը նշվեց, օրինասորա դուրս բերող սկենեի կենտրոնական մուտքը կոչվել է «արքայական», քանի որ

22 Э. Тейлор, Первобытная культура, пер., пред., примеч. В. К. Никольского, М., 1939, стр 233.

այստեղից եկումուտ էր անում միմիայն թագավորի դերում հանդես եկող դերասանը՝ հիմնականում պրոտագոնիստը («առաջին դերասանը»): «Արքայական» կոչված զաների ճարտարապետական նկարագրը (տե՛ս նկ. 14) ակներուրեն հեթանոսական տաճարի մուտք է մեզ հիշեցնում: Հստերեութին, նա հենց այդ նպատակին էլ ժամանակին ծառայել է: Եթե Դիոնիսոսի տաճարում մեռնող և հարություն առնող աստծու կուրքն էր կանգնեցվում, ապա դեպի այդ նույն տաճարը՝ այս անգամ արդեն պայմանականորեն սկինեի կենտրոնում տեղադրված, պետք է իր վերջին քայլերն ուղղեր հին հունական ողբերգության հերոսը, որը, ինչպես և Դիոնիսոսը, «անմեղ զոհի» զաղափարն էր կրում, ուստի և զնում էր նրա պես սրբանալու թատերական կառույցների հետագա էվոլյուցիան հետզհետև նվազեցրեց հնագույն այս պրոտալների ծիսական կշիռը, մինչև որ այն վերջնականապես կտարրալուծվեր և արդեն նոր ժամանակներում վազեմի «արքայական» դռները կվերանվանվեին «բեմի հայելի»:

Իսկ մինչ այդ, զալով միշնադար, «բացվող դռների» սիմվոլիկան պատկերանալու էր մի նոր բովանդակությամբ և այս անգամ՝ եկեղեցական թատրոնի քննադրական համակարգում: Ինչպես ամեն մի կրոնական ուսմունք, քրիստոնեական վարդապետությունը ևս հիմնադրեց իր ծիսակարգը, որի ընդերքում էլ աստիճանաբար գոյացան նորատիպ թատրոնի առաջին սաղմերը: Այսպես առաջացավ պատարագային դրաման իր ավետարանապատում սյուժետային հորինվածքով: Նրա կենտրոնական ֆիգուրը՝ հերոսը, կրկին «անմեղ զոհի» զաղափարն էր կրում, զալիս էր մեռնելու և հարություն առնելու Սակայն, եթե հնում «արքայական» դռներից սկիզբ էր առնում այն նվիրական աշխարհը, որ Դիոնիսոսին էր, ապա միշնադարում այդ նույն դռներն արդեն դեպի երկնային՝ Թրիստոսի թագավորությունը տանող մուտքն էին խորհրդանշում: Այս առումով, բնութագրական է «Խմաստուն» և հիմար կույսերը՝ խորագրով հայտնի պատարագային դրամայի հնագույն նմուշներից մե-

կը՝ Փրանսիական տաքրերակը։ Այստեղ՝ արարվածի վերջին տեսարանում, լավտերեների համար ձեզ հայթայինու առարդյուն շանը երից հետո, «Հիմար կույսերը հայտնվում են փակ դռների առջև և ազլուզորմ աղերսում։ «Դիմացիք մեղ, փեսա... Հրամացիք, որ բացվեն դռները։ Թուզը տուր, ու ոչ ոչ ոգնություն համար...» Այս ուսուցիչն, ինչու նշու է Շեղինակը, «Փրկարար դռները պետք է բացվեին և երանց հայտնվեր «վեհանում»²³։

Մուսնդ առնելով միջնադարյան պաշտոնական դաշտաբանության ոլորտում, պատարագային դրաման դալիս էր ծառայելու նախ և առաջ կրոնադավանաբանական նպատակների և թերևս դրանով էլ սահմանափակվեր նրա պատմական դերը, եթի ժամանակի ընթացքում դրամատիկական երկասիրության այդ նորաստեղծ ժանրը չներառուներ հանդիսանքային, կենցաղային, նույնիսկ կատակերգական տարրեր, ճանապարհ հարթելով հրապարակային միստերիալ թատրոնի համար։ Եվ ոչազպամ այն է, որ հետագայում, երբ նա վերանեց Հոգևոր դրամայի և ձեռք բերեց իր սեփական թատերաբեմը, խաղահրապարակի ետնամասում առաջվա պես տեղադրվեցին երեք բանդակապարդ դշուներ, որոնցից միցինը՝ կենտրոնականը, վարագուրածածը էր (տե՛ս նկ. 15) և բացվում էր միայն հանդիսավոր պահերին։

Սյուպիսին են մեր տեղեկությունները և լրոպական թատրոնի պատմությունից։ Իսկ առաջ, միջնադարյան հայրականության պայմաններում «բացվող դռների» թատերային նկարագիրը կատարելապես դրսերվեց «Դռնբացիքի» արարագակարդում։ Խարծում ենք, որ ժամանակին՝ մինչև Հայաստանում քրիստոնեության հաստատվելը, նմանատիպ մի թատերականացված ծիսակարդ գոյություն ունեցել է արդեն։ Այդ ենթադրության օգտին է խոսում թեկուզն այն հանգամաները, որ վերջին դատաստանը ներկայացնող նմանօրինակ բովանդակության սյուժե քրիստոնեական զավանարական պրականության մեջ չի հանդիպում։ Իսկ շեմ՝ որ

23 Ա. Չիմիլեզով, «Պայտին, եղիլ, աշիլ», էլ 25:

ծագկազարդի ողջ ծիսակարդը, ինչպես արդեն գիտենք, միշտ հաջարւում է ներսի մասաւայնութեած հետևն աւազն մի վերապետուկ է: Չենք կասկածում, ինարին, որ «Դուռացեթի» մեղ հայտնի տեքտառը հորինվել է միջնադարում: Սակայն զրականության (թե՛ հին ծիսական, և թե՛ աշխարհիկ) պատմության օրինաշափությունը թելադրում է, որ դրա համար պետք է որևէ նախանշմք նպատակ լիներ: Եվ եթե այս շնչք դահում միջնադարյան զրավոր աղբյուրներում, ապա մնում է ներադրել, որ զործ ունենալ դարերի խորքից հոգով մի պահպատճան հետ, որի հետքերը լին լուր են նշանակում, բայց և որոշակի են: Խոսքը հին պարերգային զրամայի ասաին է, որին բնորոշ մի քանի հատկանիշներ տեղ են դժեկ «Դուռացեթի» արարողակարգում:

Նախ՝ այսաեղ առ ներկայացվող զործովությունն ընդուրեցում է նիշտ այնպիսի մի ժամանակահատված, երբ մարզը նախապատրաստվում է վեռական բայլ լատարել նշանում է իր նախազա վարժագիծը: Մոտենալով եկեղեցու գուանը, քահանան ասում է. «Բաց մեզ, Տէ՛ր (երեք անգամ — Պ. Օ.) զգուն ողորմութեան, որ ողբաէով կարդաւմք առ քեզ», իսկ արարողության վերջում՝ «Բացէ՛ք ինձ զգուն արդարութեան. զի մտից ընդ այն և խոստովան եղէց Տէ՛րնու: Այսինքն, այս երկու հայտաբարությունների միջև ընկած երկխոսությունները զալիս են պարզաբանելու, թե ի՞նչ է պահանջվում մարդ-մահկանացուց, որպեսզի նրա առջև բացվեն «երկնային դռները»: Ինարկե, սկզբից եկեղեցու ներսում գտնվող քահանայի առարկությանը («...արդարք մտանեն ընդ սառ») դռան մոտ կանգնած քահանան պատասխանում է. «Ոչ թէ միայն արդարք մտանեն, այլ և մեղադարձ՝ իւստուպիւնուշիւնը»: ապաշխարությունը արդարացեած... Սակայն այս պարզորոշ ձևակերպումով միայն չի բավարարվել տեքտահի հեղինակը: Նրան անհրաժեշտ է եղել, որ ներկա զանովզները՝ հանգիստեա-համատացյաները համազգին այդ խոսքերի ճշմարգագիւն մեջ, ընդ ո-

րում ոչ միայն համոզվեն, այլև հոգերանորեն մասնակից դառնան խորհրդապաշտական այս արարողությանը: Եվ ահա, աստիճանաբար նա փորձում է հավատացյալի մտապատկերում տեսանելի դարձնել սերկնային թաղավորության կրոնամիստիկական պատկերը, դրանով իսկ նախապատրաստելով նրան «վճռական քայլի»՝ կանգնելու «Ահեղ դատաստանի» առջև: Ուստի և արարողության վերջում, զրում կանգնած քահանան դիմում է արդեն բոլորի անունից: «Ահա ևս և մանկունք իմ ...կամք ամենենքնան և ակնունիմք տեսոյն Քրիստոսի...» և այլն:

Երկրորդ առանձնահատկությունը, որի վրա կցանկանայինք ուշադրություն դարձնել, վերաբերում է խմբերգային հատվածներին: «Դոնքացերի» հանդիսավոր արարողության ընդհանուր պատկերը, թեև առանձնապես ծավալուն չէ, սակայն, ըստ էության, կարելի է պայմանաբար բաժանել երեք փայրիկ դրվագների, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է միևնույն արարացությամբ: «Բաց մեզ, Տէր... զգուն ողորմութեան...» Իսկ մինչ այդ, ամեն մի զրվագից առաջ ելույթ է ունենում դպիրների խումբը, երգելով հետոյալ շարականները: «Ենոքհեայ մեզ Տէր», «Իմաստուն կուսանք» և «Բագաւոր փառաց քեզ սպասեսցուք»: Այսպիսի հաջորդականությունն անշուշտ պատահական չէ: Շարականները բովանդակությամբ համապատասխանեցված են զրվագներում արծարծվող թեմաներին և փաստորեն դառնում են զրանց, այսպիս ասած, նախերգանքը, որի նպատակն է սրբի հանդիսատեսի ուշադրությունը կոնկրետ խնդրի վրա, նրա մեջ անհրաժեշտ հուզական վերաբերմունք արթնացնել: Հենց այդ նպատակով էլ դպիրների երգչախումբն այստեղ հանդես է դաշտու, որպես թե ժողովրդի անունից, և ոչ միայն ինքն է մասնակից դառնում գործողությանը, այլև մասնակից է դարձնում հանդիսականին: Իսկ մի՛թե նույնպիսի դերում չեր հանդիս դաշտու նաև անտիկ թատրոնի պարերգահիսումքը

վերջապիս, դիմենք երրորդ և հիմնական առանձնահատկությանը՝ «բացվող դաներին»: Տեսնենք, թե ի՞նչ գեր

Ան կապարում դրանք ավլալ արարողության կոնտեքստում։ Առաջին խոկ տպավորությամբ զաների սիմվոլիկ պատկերն այս պարագայում ևս գալիս է նյութականացնելու դործողության միջավայրը և միաժամանակ սահմանագատելու, երկու, էապես տարրեր հարթություններ՝ երկրայինն ու երկաւայինը։ Սակայն սա դեռևս երևույթի արտագեղարվեստական շերտն է, երբ այն ներկայանում է սոսկ որպես կրոնական աշխարհայցողության առարկայական պատճենու թիրես դանրանից է, որ գերակշռողն այստեղ, ի՞նչարկե, մնում է ծիսական տարրը։ Եվ այզուհանդերձ, փորձենք ավելի խորազընին հետեւ տեքստի բովանդակությանը, և տեսնենք, թե արդյո՞ք ըրացվող դռներին այլաբանական պատկերն այստեղ չի օգտագործվել նաև որպես զուտ թատերական միջոց։

Վերցնենք նախ՝ առաջին դրվագը։ Մեկ-երկու խոսք փոխանակենուց հետո, երբ պարզվում է, որ ոչ միայն արդարների առջև են բացվում «երկնային դռները», այլև ապաշխարությամբ և խոստովանությամբ արդարացած մեղավորների, քահանաներն սկսում են ճառել այդ խորհրդավոր դռների իմաստաբանության վերաբերյալ։ Դրանով էլ ավարտվում է Հանդիսակարգի առաջին մասը, որը, կարելի է ասել, նրա էքսպոզիցիան է։ Այստեղ է բացահայտվում «Դռներացերի» նաև Հիմնական գաղափարը, սակայն ընդոզիմված թատերայնության նշաններ առաջմ զրեթե չկան, եթե Հաշվենք արարվածի ընդհանուր Հանդիսավորությունը, երգչախմբի Հանդես գալը և այլն։ Հաջորդ դրվագներում պատկերն արդեն ուրիշ է։ Եկեղեցու զուն առջև կանգնած քահանայի ավանդական «Բա՛ց մեղ, Տէ՛ր» հայցումից հետո անմիջապես Հայտարարվում է։ «Ահա՝ տեսանեմք զՏէրն մեր Թրիստոս որ բազմնալ կայ ի վերայ սեղանովն, և կոչէ առ ինքն զկամակատարս իւր ասելով, թէ՝ ուր եսն եմ, անդ և պաշտոնեայն իմ եղիցի»։ Եվ կամ՝ «Փողն ահաւորին Աստուծոյ՝ ահագին ձայնիւ զոշէ ասելով, ահա փեսայն դայ՝ արի՛ք ընդ առաջ նորա»։ Այսինքն, գործողության ոլորտն է ընդգրկվում նաև Հավատացյալի տեսադաշտից զուրս զըսեցող այն «բաղձալի» աշխարհը, ուր նա շանում է մուտք

գործել Եվ դրա պատրանքն սահմանվում է թատերական ուայիմանականության ճշշտ նույն սկզբունքով, որ հատուկ է նաև անտիկ դրամային: Դռան հունում կանոնած քահանան ներկայանում է որպես թե ականատես «Քրիստոսի» արքայությունում՝ կատարվող բոլոր անցքերին և նկարագրելով գրանք, նա փաստորն ստանձնում է «բանբերի» դերը: Խակ վերջինս, ինչպես գիտենք, պարերգային դրամայի այն դործող անձն է, որը սովորաբար տեղեկացնում է պորտալների հաւեռմ ծավալվող իրադարձությունների մասին: Աւրեմն քննության առևվող արարողակարգում ևս դռների ակեղորիկ պատկերը, բացի խորհրդապաշտական նշանակություն կրելուց, կատարել է նաև թատերական ֆունկցիա: Ընթացվող դռներն այստեղ նույնպես եկել են թատերականուրեն իրար կապակցելու դործողության շոշափելի ու անտեսանելի թելերը:

Թվարկած հատկանիշները կրկին խոսում են մեր այն ենթազրության օջախի, որ «Իռնբացեքի» արարողակարգի հիմքում ընկած է հնագույն մի թատերական ավանդություն: Սակայն շշտապենք դիրագնահաճատել դրա նշանակությունը: Պարերգային դրամայի արձագանքներն այստեղ էական են այնքանով, որքանույն ընդդեմում են առլուար արարողակարգի թագահային նկարագրերը, հաղորդում նրան որոշ զեղարվեատական գծերի: Աչա թե ինչու մենք հարել համարեցինք հնարավորին շափ մանրամասն լուսաբանել դրանք: Այդուհանդեռ շմռանանք, որ դրամատիկական արվեստի անտիկ և միջնադարյան բրդունումները, թեև որոշ կետերում համեմատելի են, բայց նաև սկզբունքներն տարրեր են միմյանցից: Այդ տարրերությունն ուսակէ շափում դրանորվել է միշտնադարյան թատերագրության մեջ: Նրա հերթաներն այն ուժեղ, մաքառող, հակասությունների հորձանուառում գալարվող անձնավորությունները չեն: Այստեղ առարեղ չեն դաշին իրարամերժ, իրար բացասող և իրար դիմ մարտընչող անհատներ, Եվ բնականաբար, այստեղ չկան նաև բախումնային իրավիճակներ բառիս լինակատար խմատով՝ այնպիսի բախումնային իրադրություններ, ինչպիսիք հա-

տուկ են անտիկ դրամային: Միջնադարյան հերոսն ինքն է արդեն կանգնած երկու հակընդգեմ բնեոների միջև որպես կռվախնձոր և նրան միջակված է միայն ապաշխարհել հանուն իր հոգու փրկության: Հիշենք Կոստանդին Երզնկացու հետեւալ պատկերավոր տողերը:

Հոգու է ի իսաւ յամար
բանի իշառանեց լուի:
Մարման է հաշուածու
զի յաշնուրն է ինը ձրել:
Ի յերկուբն միշան
առ եմ ի մէջ հրաժան մատել:
Անշնչն առ առաւտասն
Էմ անհանգուս ի չուրչ եկել²⁴:

Քրիստոնեական աշխարհայեցողության այս առանձնահատկությունն էլ ի վերջո կանխորոշեց դրամատիկական գործողության միջնադարյան ըմբռնուիր: Թատերս դրությանն այլնու չէր դրադեցնում պայթարի միջոցով իրենց «հաւաք» հաստատող հերոսների ճակատագիրը՝ նրա խնդիրն էր օգնել այս երկու հակոտնյա բնեոների միջև կանգնած մարդանհատին՝ օգնել, որպեսզի նա «ճիշտ» կողմնորոշվի: Այս հենց այս նպատակին էլ եկել է ծառայելու ընդգծված թատերալին նկարագիր ունեցող «Դոնքացերի» արարողակարգը:

Բ. «ՌՃՈԽԳԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ» ՀՐԱՅԱՊԱՏՈՒՄԻ
ՇՐԱՄՍԱՏԻԿԱԱՅԱՆ ՀՐԱՅԻՆԱԱՄՔԸ

Նախորդ շարադրանքից պարզորոշ հետևում է, որ Կիլիկյան Հայաստանում դիտվող սոցիալ-քաղաքական ու մշակութային կյանքի բուռն վերելքը՝ էապես նպաստել է թատերարվեստի ծաղկմանը: Բնդ որում այս երևոյթը միաժամանակ ուղեկցվել է մտածողության աշխարհականաց-

²⁴ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխ., Արմ., Մբարձումի, Երևան, 1862, էջ 181:

ման խորացմամբ և գաղափարական մթնոլորտի մեջմացմամբ, որի հետևանքով եկեղեցական ժնիւրի, արարողությունների և պատարագի թատերական աւարտերը դնալով ընդգծվել են ու հարստացել: Ուստի տվյալ միջավայրում միանդամայն օրինաշափ պետք է լիներ նաև հայ միջնադարյան թատերագրության ծնունդն ու նրա հետագա ժաղկումը: Թվում է այստեղ հոգևոր գրաման վերջապես դուրս էր զալու սաղմնային վիճակից և ձեռք էր բերելու բարձրարժեք նկարագրի:

Այդ ենթադրությանն են մեզ մղում և մատենադրական մկայությունները: Այսպես, XII դարում Սարգիս Շնորհալին հորդորել է իր ժամանակակիցներին «կատարել և տօնախմբել հանդիսաւոր կացրդիւ... դամնայն աւուրս տէրունական տօնիցն ամենայորդոր փութով...»^{23:} Միևնույն նպատակին է հետապնդել նաև Գրիգոր Սկնուցին, գրելով, թե «Հարկէ ոչ մոռանալ զյատուկ հանդիսարան կամ զկացուրդ»^{24:} Ուշագրավն այստեղ կացուրդ բառն է, որ, ըստ Նոր Հայկապյան բառարանի, նշանակում է «կացումն հանդիսական (որ գրի և կացորդ, կացարդ), հանդէս տևսարանաց և տօնից, ժողով, տօն ամենաժողով, տօնախմբութիւն և տօնավաճառ»^{25:} Ժամանակին Գարեգին Լևոնյանը հավանական է համարել, որ գեռնս Գրիգոր Մազիստրոսի թըղթերում հիշատակվող «կացրդական տոնախմբությունները» (թուղթ ժամ, Կէ) նման եղած լինեն արևմտակլրոպական միստերիաներին^{26:} Թատրոնի պատմությունից մեզ հայտնի է, որ միստերիա կոչվող եկեղեցական դրաման լայն տարածում է գտել միջնադարյան Եվրոպայում XIV—XV դարերում, երբ դուրս է եկել քաղաքային հրապարակ և մուտք գործել արհեստավորական միջավայր: Սակայն մինչ այդ միստերիան պարզապես ministerium էր՝ պաշտոներդու-

²³ Սարգիս Շնորհալի, նշվ. հրատ., էջ 420 (այս և հետագա ընդգծումները մերև են—Դ. Օ.):

²⁴ Դ. Ավագան, Միտուան, էջ 101:

²⁵ «Նոր բառդիրը հայկապյան լեզուին», Համ. 1, էջ 1073:

²⁶ Դ. Ավագան, նշվ. աշխ., էջ 94—95:

թյուն²⁹, զուցե և իրոք շատ նման «կացրդական» կոչված տոնախմբություններին, որոնք թեև եկեղեցական ծիսակատարությունների մի մասն են կազմել, բայց և առանձնացել են նրանցից որպես «յատուկ հանդիսարաւն»: Իսկ, ահա, ճառընտիրներից քարզած «զսրբոյ և զանհաղթ վկայիս հրաշացուցանեն զկացուրգս»³⁰ նախադասությունը հուշում է, որ այդ «կացրդական» տոնահանդեսներին ներկայացվել են ոչ միայն ավետարանական, այլև վարքագրական բնույթի սյուժեներ: Այս փաստն առանձնակի արժեք է ստանում, եթե համեմատում ենք XII դարի անդիմացի հեղինակ Վիլլամ Փիտսթեֆանի հետեւյալ վկայության հետ. «Տելսարանային զվարճալիքների ու թատերական խաղերի փոխարեն լոնդոնն ունի միանդամայն աստվածաճո խաղեր, սուրբ հայրերի հրաշագործությունները պատկերող ներկայացնունենք, և թե մարտիրոսների տոկունությունը փառաբանող շարշարանաց հանդեսներ»³¹: Միշնադարյան կրոնապաշտ անդիմացու ոգեվորությունը հաօկանալի է. չէ որ նա նվլուպական հրաշապատում դրամայի առաջին ականասեսներից էր: Ըստ երեվութին, համարնությ կացրդական խաղեր է հնիսագրել նաև Գրիգոր Տղան, երբ գրել է. «...բաւական լինի լնուլ զայս քաղաք բիորապատիկ պայծառութեանցն հանդիսեւք...» և կամ՝ «...չերմաղոյն շինողութեան զհանդէս ըստ առակառու խրատական ձայնին ընդհանուր հնչմամբ՝ զյարդականն բացատելավ բան նաննարեղին...»³²:

Թատերական արվեստի ի՞նչ և արդրեր էին ընդգրկում այս հանդեսները: Բերված միջնադարյան հեղինակների վկայություններից դժվար է անմիջապես կռահել նրանք այդ մասին կոնկրետ ովինչ չեն ակնարկում: Սակայն ուշագրակ

²⁹ Всеобщая история литературы, под ред. В. Ф. Корша, т. 2, СПб., 1885, стр. 883.

³⁰ «Եօր բուզգիր հայկական յազուք», Յուն. 1, էջ 1075:

³¹ М. П. Алексеев, Литература средневековой Англии и Шотландии, М., 1984, стр. 322.

³² «Գրիգոր կոմիտացի Տղայ կոչեցիր նամակունին», Ծուռը լուսական, Վենետիկ, 1833, էջ 12, 18:

է Դրիդոր Տղայի մատնանշված «առակաւոր» կերպով «բան հանձարեցին» բացատրելու նղանակը: Թվում է, թե սա վերաբերում է զրավոր խոսքի այնպիսի բանավոր վերաբառադրումներ, որը միշնագուրում անվանել ևս բանագործութիւն:

Աստ Հենրիկ Հովհաննիսյանի, այս տերմինը «կարող էր վերաբերել Ս. Գրիգորով թեմաների, այուժների կամ հառվածների արամախոսական մշակմանը՝ բարոյախոսական զրուցի, առակալին ճառի, զաւցել և զրամատէկավանց բարովի ձևով: Բայց բանագործութիւն անունով զրական տեսակ, — միաժամանակ նկատում է թատերագետը, — միջնադարի մատենագրության մեջ հայտնի չէ: Դրամատիկական տրամախոսության առարկեր բավանդուկով սանդառ բնությունները մեզ հայտնի են այլ անահեներով՝ նաև, ուր, տաղ, ներբազան և այլն»²³: Սրիբաւով յեւն այս պարագայում միանգամայն հասկանալի է: Եթե իրոք միշին դարերում բանագործութիւն տերմինը պատկանել է զրական ստեղծառորդության ժանրային անվանումների թվին, ապա բնականաբար հարց է ծագում, թե ինչո՞ւ այդ անվանումը կրող երկասիրության նմուշներից և ոչ մեկը մեզ չի հասել: Թվում է, բացառված չէ, իհարկե, որ կրոնական սյուժեների քեմականացման այդ օրինակները մուտք են գործել միշնադարյան զրականություն այլ անուններով, թեկուզն նաև, ողբ կամ ներբազական, իսկ բանագործութիւն տերմինը գործածական է եղել միմիայն նեղ կղերական միշավայրում: Սակայն մի կողմ դնենք այս կուսումները և կրկին դիմենք նոր Հայկազյան բառարանի օգնությանը՝ պարզերու համար, թե ժամանակին ի՞նչ իմաստային պաշար է կրել մեզ հետաքրքրող տերմինը: Ահավասիկ այն. հշկութայիւն. ՏԵՇՈՅՈՎ
vel descriptio թերու, բանահյուսութիւն, ձեւացուցանելն զրան իրեւ ի հանդիսի, առասացութիւն, առած, առակ:²⁴ Ինչպես տեսնում ենք, միշին զարերում բանագործութիւն ասելով ենթադրել են ոչ թե զրամատիկական ժանրի երկ,

23 Հ. Պ. Հովհաննեսյան, եղջ. աշխ., էջ 21—22:

24 Նոր բառացից հայկական լեզուին, Հատ. 1, էջ 433:



и възвѣстїи вѣдомыи

гѣтъ тѣснои вѣдомыи

и губитъ смиреніи вѣдомыи



2. Երկարավարուս ճերի կանացի գլուզը. XIII զարի կիւիկումն
Ճեռապէ.




3. *നൂറ്റാണ്ടുകളാണ് കരിങ്ങുമ്പുറം നൂറ്റാണ്ടിനുശേഷം മാറ്റപ്പെട്ടതും അതുപരിശീലനമായി കുറച്ചും വ്യാപിച്ചതും കൂടിയാണ്*



4. XVII դարի սկզբանական շրջանում առ հետաքանի յուղի վաղաց կազմի մեջ գործություն է կատարվել այս պատճենը:

Ճ. Առաջեանձնեած կողմանը սպառագիրի արդիականութեած ուստի անկազմական թագահ.

բայխաղ, ալ մէկառակի շանգաւո և զարիա շառ



Անպատճառով
 այլն յաղած
 ուստի որոց
 աս : Եթե այս ա-
 և մերժեսցին
 էն իմասին ո՞՛
 զայսամենացն
 և յայլհետ
 ձեզ : Ես եմ ա-
 սոյց յիշեն :
 առիս - և ապ
 եմ ամ - և շերտադ
 և մերդում,
 և է իբրանոց
 ո զիեւ - և բան
 է - զիինձ լը



սցնզիւս:

մեմպաս

կ չէ մը

ուրբավայր:

քդիսեք

մեսայու

աշաւանն:

գերաս

միայեաց

լուն ն:

լ





Տ — Տ . ո՞վասպերծ ձազբաժուների ովատիւներ Հայկական միջնու .
 զարյան ձևուղբերից :

շատ իկն -

- Երեկոյե

բազմե

կոտասա

կերտան -

- Դեռու

ովա .ասէ :

Տ Ճեզ -


ի Ճեզ

ովէ զիս -

մեցան

ան ասէ :


լքանչեւ




10. Η. Στοιχεία της πόλεως της Αντιόχειας.

λεπτομέρεια


10







12. Արևելքի թատրոնական շենքը:

Եղանակը լայնացնելու գիշեր





14. Հանական բառովաց ձ. Բ. Ա. Վ. Պ. զ. գլուխ — Վ. Բ. սկզբանի հայութեաւ



15. Ակեղեցական թատրոնի բևմանարթակ:

այլ այդպիսի երկ հորինելը, այսինքն՝ թատերագրությունը («ՀՅԱՀ ՀԵՂԻՆԻ»), և կամ ընդհանրապես զրավոր խոսքի բանավոր վերաբռնագրումը լիղվական նյութն առարկայացնելը՝ գործողության վերածելը, կերպավորելը («Ճեացուցանելն զրան իրրե ի հանդիսից»): Համոզվելու համար ընթերցենք նաև բառի հետևյալ վեկայությունները: «Սբանչացեալք ասիցն ըստ Ծայեայ բանագործութեանն, ո՞վ է սա՞ ո՞ք զայ յեղոմայ», «յիշեցեալ լինին աստանօր սողոմոննեան բանագործութիւննի», «ոմանք առնուն յԵսայեայ բանագործութիւնների կոնտենքսում բանագործութիւն տերմինը համարժեք է առակին, այն է՝ «ինչ մի առաջի եղեալ ի տեսիլ ամենեցուն, կամ առարկա հանդիսից»³⁵, և կամ այլ կերպ՝ Գրիգոր Տղայի խոսքերով ասած, «չերմագոյն շինողութեան դհանդէս», որ «առակուրացարություն է ըրան հանձարեղին»:

Այսպիսով, աստիճանաբար կարծես բացորոշվում է «կացրդական» հանդեների թատերական նկարագիրը, որ ժամանակին ընթացքում ներառել է ոչ միայն դրամատիկական տրամախոսության տարրեր, այլև խոսքը գործողությամբ վերաբռնելու արվեստը: Ընդորում գեղարվեստական մոտիվների ներընկալման այս պրոցեսն աշխուժացել է հատկապես կիլիկյան շրջանում: Որպես ապացույց, վերոշիցյալ վկայություններին ավելացնենք նաև ներսես Շնորհակու հետևյալ պերճախոս տողերը: «Մի իրրե ջուր ընդ խողովակ անցանիցէք անմտաբար ընդ խորհրդական բանս ազօթիցն՝ զոր մատուցանէք, եթէ սաղմոսերգութիւնը հն և եթէ ընթերցումն սուրբ զրոց, եթէ պաշտօներգութիւն և եթէ քահանայական ազօթք սրբոյ պատարագին և այլոց կարդագրեալ կանոնացն, այլ յոյժ մտաւորաբար. և թէ դոյ հնար արտասուօք, և մեծաւ երկիխիւ, որպէս թէ դուք նորոգապէս բղիսէք զնոսա ի սրտէ և ի մտաց ձերաց»³⁶: Շեշտելով, որ

³⁵ նույն տեղում:

³⁶ նույն տեղում, էջ 283:

³⁷ ներսես Շնորհականի, Թաղոյի ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 68.

պաշտոններդության խորհուրդն սահմանված կանոնների սոսկ ֆիզիկական վերաբռտաղբումը չէ, Ծնորհալին ակնքախ հետամուտ է եղել ոչ միայն կրոնական, այլև գեղարվեստական խնդիրների լուծմանը: Միտումն ինքնին մեզ արգեն ծանոթ է: Միջնադարում և հատկապես դասական միջնադարում Հոգևորականությունը հաճախ է անդրադարձել եկեղեցական ծիսակարգի գեղագիտական հարցերին: Իսկ վարդապետարաններում վաղագույն ժամանակներից ի վեր ճարտասանական արվեստին հմտանալու նպատակով կատարել են դիմառության վարժություններ, որ, ըստ Թրակացու մեկնիշների, նշանակել է ոճայնիւ ձևացուցանելը²⁸: Այնուհանդերձ Ծնորհալու դիտողություններն այսօր բացառիկ արժեք են ներկայացնում: Նշանակալիցն այն է, որ նա իր ուշադրությունն այստեղ սենուել է գիտավորապես երեւույթի ներթին, հոգեբանական զապանակների վրա («որպէս թէ դուք նորոգապես բղխէք զնոսա ի սրտէ և ի մտաց ձեռոց») և ակամա (այլ կերպ, կարծում ենք, չեր էլ կարող լինել) բացահայտել է դերասանական վարպետության հիմնական դրույթներից մեկը՝ պայմանական հանգամանքներում մարդկային օրգանական վարքագիծ վերաբռտաղբելու անհրաժեշտությունը: Այսինքն այն, որը հետազայում Ստանիսլավսկին ձևակերպելու էր այսպես: «Կերապրելու արվեստի նպատակը քեմում մարդկային ոգու կենզանի կյանքի ստեղծումն է և այդ կյանքի արտացոլումը գեղարվեստական ներկանական մարդկան ձևում»²⁹: Ի՞արկե, մենք դիտակցում ենք, որ միջնադարյան մտածությանը դեռևս շափականց հեռու էր այս գաղափարը: Սակայն վասահորեն կարելի է ասել, որ նպատակ ունենալով թանձրացնել պաշտոններդության թատրային գույնները, հաղորդել նրան դրամատիկական հրեշեղություն՝ առավել տպագորիշ ու համոզական դարձնելու համար «բանս աղօթիցն», Ծնորհալին ցուցաբերել է դարմանալի դիտողականություն:

²⁸ Հ. Վ. Հոգիաննիսյան, Խցկ. աշխ., էջ 25—26.

²⁹ Ա. Աստանիականին, Դերասանի և ուժիուորի արվեստուր, թարգ. Ե. Հախվերդյանի, Եր., 1981, էջ 29 (թեզաժումները Շեքենտեհերտ համար 130

Ինչպես տեսառում ենք, ծիսակատարությանների գեղարվեստական նկարագիրն ընդգծվել է Հատկապես թատերական տարրերի հավելման ու խացման շնորհիվ։ Աւտիմիան գամայական է, որ այդ միջավայրում ծնվեր նույնպիսի բարձրարժեք թատերարվեստ, ինչպիսին ստեղծվել է արևտակավորական հողի վրա։

Հիմնավորելու համար այս թեզը, անշուշտ, անհրաժեշտ է տեսագաշտում ունենալ նաև կոնկրետ առարկան, որ տրված պարագայում դրամատիկական երկն է։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայ միջնադարում այդպիսի երկ ստեղծելու առաջին փորձերի համար նյութ է ծառայել Քրիստոսի դժոխք իշխելու պատումը։ Սկզբնաղբյուրը Նիկողիոսի պարականուն ավելացրանն էր, որ հունարեն և լատիներեն հնագույն ձեռագրերում կրում է «Առաջնակառություն» («Յիշատակարանք») կամ *Acta Pilati* («Գործը Պիդատուսի») խորագիրը⁴⁰։ Դիրքը բաղկացած է երկու մասից։ առաջինը պարունակում է Քրիստոսի դատավարության, խաչելության, թազման և հարության պատմությունները, երկրորդը՝ դժոխքի ավերման, այն է՝ երբ մահվանից հետո Քրիստոսն իշխում է սանդարամետ, ազատազրում հանգուցյալներին և նրանց հետ միասին համբառնում երկինք։

Բյուզանդական թատրոնի պատմաբան Ջորջ Լա Պյանը⁴¹ երկարամյա և բազմաշան հետազոտումներից հետո հանգել է այն եզրակացության, որ վաղ միջնադարի բարոզական գրականությունը պարաբռ հող է ստեղծել հոգեվոր դրամայի ձեռավորման համար։ Ընդ որում դիտնականը հատկապես նշում է, որ առաջին գրամատիկական այդ եր-

⁴⁰ Հ. Ս. Անասյան, Հայկական ժառանգության Ե—ԺԸ դր., Համար 2, հր., 1979, էջ 95։

⁴¹ Լա Պյունիկի հոգվածը («Բյուզանդական թատրոն»), որ հրապարակել է 1936 թ. «Եղիկուզում» տաճարության G. La Piana, The Byzantine Theater.—Speculum. Journal of Medieval Studies, v. XI, Cambridge, p. 171—211), ուստի բարձրագույն թարգմանությամբ (Բարդ. Յ. Վեհանինը) համագումարաբար բերված է ք. Գոյանի նշով. աշխատություն (Համար 2, էջ 10—167).

կերի բովանդակությունն ու տրամախոսական կառուցվածքը հիմնականում փոխառյալ է պարականուններից և, որպես օրինակ, հիշատակում է «Ռժոխաթի կործանումը»¹²:

Հայ մատենադրության մեջ նիկողիմոսյան պարականունից թարգմանաբար հայտնի են միայն մի բանի զլուխներ, ընդ որում առաջին մասից՝ Մինչդեռ, ինչպես Ժամանակին նկատել է Բարսեղ Սարգիսյանը, երկրորդ մասի բովանդակությունը գրական մշակման են ենթարկել V դարում Եղիշեն և IX դարում Զաքարիա կաթողիկոսը¹³:

Եղիշեն ո՞վ թաղումն օրիստոսից ճառում¹⁴ մասամբ ձեւափոխել է պարականունի այուժեն՝ կրնատելով Փրկչի հայտնը-վելուն նախորդող այն տեսարանները, որտեղ բանտարկուալ հոգիներն ըմբռստանում են և պահանջում բանալ ոժուխորի դռներն աստծու որդու առջև, իսկ զժոխապետն ու աստանան տագնապահար վիճում են սպասվող իրադարձությունների մասին։ Փոխարինը հեղինակն ու շագրությունը ու եռել է Թրիստոսի կերպարին և նրա տարած հաղթանակը՝ ոժոխորի ավելորամբ, նկարագրել է ավելի ընդարձակ, քան ընագորում կա։ Դրանով հանդերձ նա խուսափել է երկխոսություններից և զիսավորապես ընտրել է շարադրանքի պատմողական եղանակը։ Հասկանալի է, թե ինչու ճառը նախատեսվել է բանագոր ընթերցման համար քարոզի ձևով, ինչպես որ ընդունված էր կրոնական տոներին հատկապես վաղ բրիստոնեառության շրջանում։

Ուշագրավ է այդ ծիսակատարությունների նախնական արարողակարգը, զգիթեներով շրջապատված բահանան կամ վարդապետը կանդնում էր ժողովարանի կենտրոնում բար-

¹² Նոյն տեղամ, էջ 462—463.

¹³ Պ. Զարբեկանաց, Առանձնաշարան Հայկական թարգմանությունը և համապատասխան պահանջանքը, ՎԵԼարիկ, 1887, էջ 159—260։

¹⁴ Բ. Սարգսյան, Եղիշենի և Զաքարիա կաթողիկոսի և բազումն Քրիստոնեական համարելու և նիկողիմոսի ավետարակը, ՎԵԼարիկ, 1910։

¹⁵ «Եղիշենի վարդապետի Առանձնադրութիւնը», ՎԵԼարիկ, 1859, էջ 297—299։

բության վրա, որտեղից և ընթերցում էր Համապատասխան ճառքը⁴⁶, ճիշտ այնպիս, ինչպես ժամանակին մենակատար քուրմը կանգնել է զոհասեղանի առաջ Հանին և նրան զբանապահ է պարերգակների խումբը: Բայ երեսովթին, այստեղ հեռավոր մի աղերս կա անտիկ թատերական ավանդութեանի հետառեւակ հն գունդում, բայ այն դադարիաբները, որ սկզբնապես իրենց կրել են: Սակայն ժամանակի ընթացքում եկեղեցին խմբագրել է արդ վերապրուկը: Ջրիստոնիան տաճարաշինության բաղիլիքածն մուգելը եկեղեցական Հանդիսատերության համապատասխան ճարտարապետական կազմակար, խոկ երկնային ջրաշաղործության առավիճելու քարոզը՝ ոճիվերասլ դադարական առաջըք: Պատահական չէ, որ այս Համակարգում ստեղծված առաջին որամատիկական երկերը կուլտիցին «միրակլ» (miracle՝ չրաշը): Եվ թեովետ դրանց բովանդակությունն ու սյուժեացին այսմաները տարբեր էին, չրաշը՝ հիմնական մոտիվը մեկն էր. բարեպաշտ քրիստոնյաների առջև կրացվեն երկնային գոները. Այդ են բարոզել և «Սուրբ Նիկոլայոսի չրաշը», և «Բենֆիլի չրաշը»: Ա Հոգևոր դրամայի ամ նմուշներ, որոնց թվում, Դարձում ենք, իրավամբ կարելի է չշատակել նաև «Եռնրացերի» տերատը, որ թեև չի պատկանում գեղարվեստական ստեղծագործությունների շարքին (ծիսական տարրն այսաւելո գերակշռում է), սակայն Կույնուկների հորինվել է դրամատիկական տրամախոսության ուղղությունը: Ասել է թե՝ միջնադարյան Հայաստանում ևս (նույնիսկ Հնաբավոր և ավելի վաղ, օտան Եվրոպայում) հորինվել են գիմասնության և տրամախոսության կիրառումով երկեր: Մանավանդ որ եկեղեցական միջավայրում, ինչպես արդեն պիտենք, ընդունված է եղել բանագործությունը, այսինքն՝ ոճեացուցանելն զբան ի Հանդիսի:

⁴⁶ Н. Барсов, История первобытной христианской проповеди, СПб., 1885, стр. 132.

Եվ Հիբավմի, IX դարում Նիկոդիմոսյան պարականոնի վերջին պատումը կրկին արժանացել է Հայ հոգևորականության ուշադրությանը։ Այս անդամ նրան է զիմել Զաքարիա կաթողիկոսն ո՞հ մեծի առուր շարաթուն թաղման Տեառն Յիսուսի Քրիստոսից ճառում¹⁷, որը, ի տարբերություն նախորդի, Հիմնականում դիալոգային է։ Վիպական գրվադներն այստեղ սեղմէիլ են, իսկ տրամախոսական հատվածները՝ անհամեմատ հարստացնել Ընդ որում Զաքարիան նաև վերամշակել է պարականոնի բնօրինակ տեքստը։ Համոզվելու համար, ստորև բերվող հատվածն ընթերցենք՝ համեմատելով բնագրի հետ։

«Ասեն պետութիւնը խաւրին և ամենայն լեզեն զաւելըն անդնդոց. Ավ նիզդ և քշվառականդ, ո՞չ ի վազ ժամանակաց պատութեցաք մեզ՝ ոչ տալ ընդ նմա պատերազմ. այլ դու ընդգետակ ապարասան արարշին, յերկնից բնակուրենէն տարագիր արարեր զմեզ. և այսմ ընդէմ ամրածար աստուածուրդոյն, և ի սահդարանականաց տարագրեցեր զմեզ. Ասէ սատանայ. ոչ ժանեայ զնա, ով սիրելիք, քանզի մարմինն պարածածկեալ էր զանիմանալի աստուածութիւնն իւր. և արդ զիտեմ հաւասարեաւ, որ զկնի իւր յարձակեալ գալ։

Dehinc inferus Satanae ita perintulit: O principis Satan, auctor mortis et origo omnis superbiae, debueras primam istius Jesu causam malam requerere: Quare sine ratione injuste eum crucifigere ausus fuisti, et ad nostram regionem innocentem et justum perduxisti, et totius mundi noxios impios ed injustos perdidisti.

17 Թ. Ասուլիսյան, Եղի., աշխ., էջ 23—29,

Եւ առհեն խաւարային պետական պետական մասնակիութիւնը. Վայ մեզ է եղած ամբ ուրիմն զայ զարգաց մարդկան պահանջելի ի մէնչ, զորս կորուսաք յԱղամայ մինչեւ ցայտմ. և զոր և յուզէ առ մեզ՝ ըմբ-ըստնեալ ունիմք... բայց եթէ դենուզը և զեղայ պահանջեալ խնդրէ, ուստի տամբը, զի շեն առ մեզ...

Արդ զգոյշ լեռում, զի մի իմասցին հոգիցն, և ոտն հարկանիցն ի վերայ մէր-յորմէ հատէ եկն այսր պառաւորդին Յովհաննէս, ի ցնծութեան են, մի՛ դուցէ երեք բան ինչ պատզամի երեր ի նման առ նոսա, զի յայնմ աւրէ զուարճացեալ ցնծան ամենիցեան... Արդ՝ ամրացուցէ շուշանակի բազում զգուշուրիամբ:

Եւ մինչեւ պետութիւնն զժույց ի զգուշուրիան էին, անա աննոն զաւը մայրեցից նիշտակաց

... Vae! tibi erit in sempiterna secula...

Tunc impia officia ejus conturbata sunt

et coeperunt portas mortis cum omni diligentia claudere...

„Haec autem audietes omnes Sancti ab Esaiā dixerunt ad inferum: Aperte portas tuas...

Հայուարիայի Հասկց մետրովով Հաւուածում ոճ առդերք, որուր ուղղված էն, Համապատասխանութ Էն զուզումն ըերգող ընազրի տերամիւր Վերանիշութ Հասկ և Նիկողիանութ ուրաքանչեանի բարդի տերամիւր համապատասխան վերանիշութ համարել և Բարանը Սուրբ Կայութ (առև եշտ, աշխատ, էլ 23—29):

Յայնքաց եղեալ աւ-
տուծուրովն՝ բանքեամբ
և ուժեղ զաւուրեամբ ժա-
մանեալ առ դուս դժոխ-
ցըն, ազդ արարէալ ազա-
դակէին առ կարծեցեալ
պետուրինսն սանդարա-
մետաց. Համբարձէ՛ սննաի
իշխանք զգրունս ձեր ի
վեր, և մատէ բազաւու
փառաց:

Եւ յանգետս եղեալ բարա-
պանք դժոխոցն եւստանեն,
Ա՞վ է սա բազաւու փա-
ռաց:

Յայնժամ լուան բանդար-
գեալ հոգին (զձայն զնա-
լոյ տեսոն աստուծոյ, ընդ
երեկո աւուրն, ի զրունս
դժոխոցն) Զայն աւտեաց
մատուցանէր Աղամ հոգ-
ոցն որ պատճանեալ էին
ի դժոխս, և առէ. Ցնձու-
րեամբ բերկեսչին, Ա՞վ
սիրելիթ. բանզի աստուծ
արաշազութ ենաւ մեզ ի
փրկուրին:

Եւ պատասխանեալ հոգու-
ցըն ասեն. Ա՞րագէ զիսա-
ցեր և ծանեաւ, Ա՞վ հայր
մեր, երէ եկն աէւն փա-
ռաց ինդեւ զկորուսեալս:

Et facta est vox magna ut
tonitrum dicens.

„Tollite portas principes
vestras, et elevamini portae
infernales, et introibit
rex gloriae.

Videns inferus... quia dua-
bus vicibus haec clamave-
runt, quasi ignorans dicit:
Quis est rex gloriae?

„Tunc omnes Sancti au-
dientes vocem patris nostri
Adae, quem constanter
Satanae respondit per om-
nia, un gaudio confortati
sunt... Tunc pater Adam
audiens ista clamavit voce
magna Alleluia conclami-
tans, quod interpretatur:
Dominus venit per omnia...

„Ad cujus vocem et om-
nes converti interrogabant
eum: Tu quis es? quia
vera sunt quae loqueris.

Եւ ասէ Ազամ. Ցորժամ
վրիպեալ կողոպտեցալ ի
սպատուիրանացն աստուծոյ,
իշեալ աստուած ընդ երե-
կըս՝ շատուր սորբաթուն
զնայր ի դրախտին... և
արդ ի սոյն տարածամենալ
ուրբաթուս եկեալ ժամա-
նեաց ոտնաձայնիւ. և հան-
ցէ զմեզ ի սառեւրաց մա-
ստակամաւածութեալ

"Adam vero. . magna voce
dixit: Dominus Deus cla-
mavi ad te et sanasti me:
Eduxisti ab inferis animam
meam, salvasti a descend-
tibus in lacum...⁴⁹

Այսպէս է հելլինակը կարճամփոփի նկարագրում է
դժոխիքի ավերման տեսարանը, որ ընկածուէ Եղիշեի ծավա-
լուն ճառիքիմքում: Շաբագրանքի այսպիսի հորինվածքը
թուլլէ տալիս հնիքազրել, որ Զաքարիայի ճառը եթե ըն-
թերցվել է ապա ընթերցվել է արդեն տրամախոսական հ-
ղանակով և դիմախությումբ: Այսպէս է ամբողջ ամպական համար Արծ-
րունու հետեւաբառդերը, «Արտէս ընթեանուս... ի վեցերորդ
տեսլեանն Դանիէլի և Զաքարիայի քանազուծութեանն»⁵⁰:
Բանն այնէ, որ ավագ շաբաթվա լոթերորդ օրը բոլոր քրիս-
տոնեական հեկուցիներում ճնշոց է վերը ընթերցվել են Դա-
նիէլի պատմադրույցները, Պրանց թվում նաև երեք երիտա-
սարդների բարբորված հնացից Փրկվելու զրկազը, որը միա-
ժամանակ ներկայացրել են թատերականացված ձևով: Մինչ-
դեռ Զաքարիայի ճառը նույնպես կարկվել է «Ի Մեծի աւուր-
շաբաթունաւ Հետևաբար, թե «Դանիէլիան», և թե Քրիստո-
սի դժոխաք իշնելու պատումը պետք է որ ընթերցվեին Հա-
ցորդաբար, միենուլու օրը: Եթե եթե ընդունենք, որ Արծրու-
նին ակնարկել է հենց այդ իրողությունը, ապա, ըստ նրա

⁴⁹ Նույն տեղում, էջ 27—28:

⁵⁰ «Բովմայի վարպատեամի Արծրունոյ Պատմություն առնեն Արծրու-
նաց. Ա. Գևառերութզ, 1887, էջ 257—258.

օգտագործած «բանագործութիւն» տերմինի, պարականոն զրույցն արդեն IX—X դարերում հայ եկեղեցականները խաղարկել են «իրքն ի հանդիսիւ»:

Ի՞ւստիւ, այս տրամարանական հետևությունը՝ մասամբ դեռևս թեական է մնում և դեռ հիմնավորման կարիք ունի: Մակայն առաջժմ մեզ բավարարում է այն փաստը, որ Զաքարիայի ճառում ակներեւ են դրամատիկական մոտիվները, իսկ միջնադարում դա մի որոշակի քայլ էր գետի հոգեոր դրաման:

Եվ ահա, 1297 թվականի կիլիկյան ձեռագրութիւնը⁵¹ գրանում ենք քննվող առասպելապատումի զրական մշակման մեկ այլ հայերեն տարբերակ, որին արդեն բնորոշ են միջնադարյան դրամայի զրեմբե բոլոր հատկանիշները: Խորագրով իսկ այն առանձնանում է նախորդ ճառերից: «Պատմութիւն Յովհաննու՝ որդոյ Զաքարիայ. յաղագս դժոխոցն կործանման և վասն սատանայի, թէ որպէս որսաց տէր դանմարմին թշնամին և ազատեաց զարգելեալսն ի նմանէն»⁵²: Այսպես է զերնագրել հեղինակն իր հորինվածքը, որն սկսում է հետեւյալ նախաբանով.

«Քահանա ոմն անուն Զաքարիայ ի դասակարգէ արիայ. եհաս պաշտաման խնկոցն ի տաճարին Երուսաղեմի, և եղի լրումն ժամանակի մարմնանալոյ տեսառն մերոյ Յիսուս Քրիստոսի ի սրբոյ կուսէն, վասն կենաց և փրկութեան արարուծոց: Առաքեաց Աստուած զԳարբիել Հրեշտակ առ Զաքարիայ քահանայ և ասէ ցնա. ես եմ Գարբիել որ կամ առաջի տեսան և խոսիմ ընդ քեզ: Սնանելոց է ի քէն որդի: և կին քո Եղիսարեթ ծնցի ի ծերութեան և նա Եղիցի կարապնա որդոյն Աստուածոյ: Եւ նա ոչ կալաւ յանձին: Եւ նա խռովութեամբ պապանձեցոյց զնա. և զնաց ի նմանէ Հրեշտակն: Եւ եղի յետ աւուրց երկոյտասանից յաւուրն հոկտեմ-

51 ԱՌ, ձեռ. № 640 (Հայելի գիւղու Քրիչ՝ Հեղումը ըսնանայ: Առաջող՝ Հայութ՝ Հայութը լույսի):

52 Նույն անում, էջ 250ա: Առարկ բերում ենք՝ զահուանինը յնային՝ ուղարկությունը:

բերի որ աւր ինն էր մհրանցաւ առ էլինն իւր և լրացնալ. և ծնաւ կարտպիս որդոյն Աստուծոյ: Վարողէր և առէր. թէ դայ զարագոյն քան դիօ զինի իմ զնա ծաներուք: Եւ ինըն Յովհաննէս լոռոր զընթացս իւր կատարնալ ի Հերովոք զըլ-խառնցաւ, և ևմուտ ի դժոխս ընդ արտելնուլոն: Եւ նոյս անսեալ զիալլումն ճառպին ծանեան զնայ: Մկան հարցա-նել զնա վասն արնգականն արգարութեան և ասեն. զայ այսր տէրն իթէ յամէ, զի բաղում յուսահատութեամբ կամք ստու: Այլթ ասէին. շառնու յանձն զշարչարանս և զմաւ: Իսկ մարգարեքն ասէին. թէ պարտէ նմայ մահու համբերել վասն մեր. զի ծանեաք մեր և զոր ինչ լինելոցն էր. մար-դարեացաք մեր զի ոչ թողու զմեկ աստ յարաժամ»⁵⁵:

Նոխարանին հաջորդում է զժոխրի տեսարանը: Այստեղ՝ ստուանալի իշխանության ներքո տառապում են բոլոր հան-դուցյաները, զրանց թվում՝ Աղամը, Մովսեսը, Դավիթը և այլք: Հովհաննէս Մկրտիչը գալիս է հայտնելու նրանց սպասվող մեծ իրադարձության՝ զժոխրի ավերման մասին: Իսկ զա, ինչպես ստորև կպարզվի, այն հանգուցակետն է, որի շուրջն էլ հյուսվում է գործողության թելը:

«Ասէ ցնոսայ Յալիաննէս». աղաշեմ զձեզ. աղէ պատ-մեցէք ինձ վասն նորա եթէ զի՞նչ մարգարէացայք զգալլու-տենէ նորա յաշխարհս և կամ վասն զժոխոցս կործանման, և կամ որպէս հանդերձնալ է զալ:

Եւ մատուցեալ Աղամ ասէ ցնա, ևս ի փառս և ի պատիւ վայելուրչ դրախտին. և նախանձ բանսարկուին եհան զիս, և ևս աղաշեցի զտէրն իմ և ասեմ. տուր ինձ միւս անգամ մտանել ի կեանս իմ ի դրախտին: Եւ ասէ ցիս աստուածն իմ. ոչ ալդպէս նախահայր. այլ երթ գործեայ զերկիր ուս-տի տուար: Եւ ևս եկից յետ վեցնազար ամանց. և առից մարմին ի դստերէ քումէ. և ծնանիմ ի կուաէ: Մկրտութեամբ. և պէս պէս մկրտութեամբ ի մէջ Հրեաստանի: Զարշարեալ

⁵⁵ Նույն ահզում, էջ 280ա—281ա:

* Բնագիր աւերսում կատարմաժ այս և հետազա ընդդումները մերն էն—Ռ. 0.:

և խաչեալ, և թաղիմ. հրեբաւրնա յառնեմ և դամ խնդիր քեզ. ոչ միայն քեզ այլ ամենայն մարգարէիցն, և աւարնմ զդժոխս. և հանեմ զարգելեալսն և տամ զմարգարէան ի ձեռս քու Եւ դու առեալ քերցես զնոսա յայսմ զրախտիս և նորայ տեսցին զիւաս քու Եւ ես կամ և մնամ մեծաւ յու սով. զի բանք նորա անսուտ հն:

Եւ մատուցեալ Մովսէս ասէ. զՅովաննէս. ես այզպէ՛ս մարգարէացայ վասն դժոխոցս այսորիկ, զի Հոր բորբոքեցէ և այրեսցէ զներքին դժոխս:

Եւ մատուցեալ Դափիր ասէ. զՅովաննէս. ես մարգարէացայ վասն նորա գալստեանն. իշցէ նա որպէս զանձրն ի վերա գեղմանտ Եւ դարձեալ մարգարէացայ վասն նորա մկրտութեանն, ձախն տէրն ի վերայ ջրոց Եւ դարձեալ մարգարէացայ վասն նորա նշանացն և արուեստիցն. եկայք և տեսէք զգործս աստուծոյ որ արար զնշանս և զարուեստոյ ի վերա երկրի Եւ դարձեալ մարգարէացայ վասն նորայ չարշարանացն. եղայ ես որպէս խուլ որ ոչ լսէ. և հտուն ինձ կերակուր լեղի. և բաժանեցին զհանդերձս իմ. և համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. և փշրեաց զդրունս պղնձիս և զնիգս երկաթիս խորտակեաց էառ աւար զմարգարէս. և բաշխեաց զպորգնս բազմաց:

Եւ ասէ Յովաննէս զԴափիրն. ո՞ր են զործքն աստուծոյ զոր ասացէր:

Ասէ Դափիր. ոչ զիտեմ զգործն աստուծոյ. այլ միայն ասացի:

Ասէ Յովաննէս. ես պատմեմ զգործն նորա:

Ասեն մարգարէնն. մեք ցանկացեալ եմք տեսանել և ոչ տեսար:

Ասէ Յովաննէս. ես ականատեսի պատմեմ ձեզ. և ոչ կարծանաք զոր ես իսկ մկրտեցի. Առաջին նշանն ի կանա Գալիլիացւոց. շուրն ի զինի եղիալ: Երկրորդն ի Կափառնայումն հինգ նկանակաւ զհինգ հաշարսն կերակրեաց. և երկոյտասան սակառ ի բարձեալ: Երրորդն ի Սելով զկոյքն ի ծնէ լուսաւորեաց: Չորրորդն զանգամալոյժն զոր բարձեալ բերին մահճաւը և եղին առաջի: Հինգերորդ զայրն շրջողեալ:

Վեցնրորդն զերեսն երորդի հիւանդն բժշկեաց։ Եաւթներորդ
զբազմադնն յնրկիրն զերգեսացիոց։ Ութերորդն զայրն Բար-
տիմիոս։ Իններորդն. ի նային ի քաղաքին զմեռեալն յա-
րոյց։ Տասներորդ. զտասն այրն. ի մինն դարձաւ ևտ փառս
աստուծոյ և աւրհնութիւն։ Մետասաներորդն զդուստրն
Յայրոս իշխանին։ Երկոյտասաներորդն. զդիւսարն որ էր
խուլ և համը ոչ խոսէր և ոչ տեսանէր։ Երեքտասաներորդն.
զկինն կարկամեալ Չորեքտասաներորդն. զոքանըն Սիմոնի։
Հինգետասաներորդն. զտեռատեսն։ Վեցատասաներորդն.
զմեռեալ ազջիկն յարոյց։ Տասնեաւթներորդն. զպոռնիկն
սրբեաց։ Տասն և ութերորդն. զՂաղար շարեքարեայ յա-
րոյց. և զոր ասել ունիմ. և այլ զո՞ր սքանչելիս պատմեմ։
Եւ նա եւ ինձ զգաւազանս. և ասէ տուտ ցԱղամ. և ասայ
ցմարգարէրն թէ մի յուսահատիք. ահայ գամ և ազատնմ
զարգելեալն ի բռնութենէ կապանաց և զպարտեցուցիլն
զբռամբ ածնմբ³⁴։

Պարզ է, որ թե նախաբանը, և թե այս պատկերն էքս-
պողիցիայի կարգով բնութագրում են այն իրավիճակը,
որից սկիզբ է առնելու հիմնական գործողությունը։ Ընդ ո-
րում ուշագրավ է, որ Հովհաննես Մկրտչի հայտնած լուրն
անակնկալի չի բերում դրամայի հերոսներին, նրանք ար-
դեն կանխատեսել են դժոխքի ավերումը և սպասում են
Փրկչի գալստյանը։

Սա պայմանավորված է միջնադարյան թատերագրու-
թյան առանձնահատկությամբ։ Ի տարբերություն անտիկ
դրամայի, գործողության հոսքն այստեղ սովորաբար սրբն-
թաց է բեկվում (օրինակ, մեղսագործ Թեոֆիլն առանց տա-
տանման կորուկ շրջվում է նախկինում իր ընտրած ուղղուց
և կանգնում ապաշխարության ճանապարհին), սակայն այդ
բեկվումը չի ընկալվում որպես հանկարծահաս իրադարձու-
թյուն (պերիպետիա)։ Մի դեպքում այն կանխորոշվում է
Աստվածամոր կամ սրբիրի միջամտությամբ (Քրանսիական
միրակլներում), մեկ այլ դեպքում մարգարեներն են կան-

խագուշակում պործողոթյան հետագա ընթացքը (օրինակ՝
ոչառն Անահիքը իսպուհի լատինագիր դրամայում ենորդ ու
Եղիան հրապարակավ կանխատեսում են Ների ապագա
կործանումը): Ի՞ւրեք այս հանդամանքը մասամբ նվազ-
ողնում է գործողոթյան դրամատիզմը, դարձնում է այն
սխեմատիկ: Սակայն չմոռանանք, թե ինչ գաղափարական
